«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

# 2023-2024 ուստարի

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ ..... 3

ՀՖԿՍՊԻ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ..... 7

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ..... 11

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ..... 48

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՐԱՑՈՒՄ ..... 65

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ..... 73

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ..... 80

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6. ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ..... 89

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ..... 95

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ..... 98

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 9. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ..... 104

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 10. ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ..... 112

# ՆԱԽԱԲԱՆ

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին օրենքներով, բուհի կանոնակարգերի, բուհի կառավարման և գիտական խորհուրդների, որոշումների ու արձանագրությունների դրույթներով ՀՖԿՍՊԻ–ն սահմանել է իր զարգացման հետևյալ ուղենիշները՝

1. **արդյունավետ կառավարում,**
2. **որակյալ կրթության ապահովում**
3. **պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական զարգացման շարունակական կատարելագործում,**
4. **դպրոց-բուհ-աշխատաշուկա ֆունկցիոնալ կապերի ստեղծում:**

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված բարեփոխումների նպատակն է ժամանակակից մարտահրավերներին և բուհի ռազմավարության սկզբունքներին համապատասխան արձանագրել առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք նպատակաուղղված են բուհի վարկանիշի և հեղինակության բարձրացմանը:

Հաշվետվության մեջ ներկայացված են անհրաժեշտ տվյալներ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գործունեության վերաբերյալ, որն իրականացվել է հաշվետու ժամանակաշրջանում նախատեսված բարեփոխումներն ապահովելու համար:



Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը փառահեղ ճանապարհ է անցել և իր գործունեության շուրջ 80 տարիների ընթացքում պատվով իրականացրել է իր հիմնական առաքելությունը՝ կրթելով և դաստիարակելով սպորտի և հարակից ոլորտների որակյալ և բանիմաց մասնագետներ:

Լինելով Հայաստանի Հանրապետության մարզական միակ բուհի ռեկտորի պաշտոնակատար և գիտակցելով բուհի առջև դրված հիմնախնդիրների լուծման գործընթացում ռեկտորի սկզբունքայնության և աշխատանքի նկատմամբ ունեցած պատասխանատվության կարևորությունը, ես մեր բուհի ղեկավար կազմի հետ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտն առաջնորդում ենք առաջիկա մի քանի տարիներին բուհի ռազմավարական ծրագրով նախանշված նպատակներին հասնելու ուղղությամբ:

Անցած մեկ տարին լուրջ փորձաշրջան էր մեր բուհի համար՝ լի վիճահարույց բազմաթիվ դժվարություններով և խոչընդոտներով, սակայն, մեզ հաջողվեց համակարգված աշխատանքի և մասնագիտական նվիրվածության շնորհիվ հաղթահարել բոլոր մարտահրավերները:

Ինքս երկար տարիներ աշխատելով Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում, քաջատեղյակ եմ բուհում առկա մասնագիտական հնարավորություններին և ներուժին, ինչն ինձ թույլ է տալիս նախանշել ինստիտուտի հետագա գործունեության վեկտորի հիմնական ուղղությունը, որն ուղղված է ֆիզիկական դաստիարակության, սպորտի և սպորտը սպասարկող ոլորտների մասնագետների պատրաստմանը և գործող մասնագետների որակավորման բարձրացմանը:

Բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմը, վարչական և սպասարկող աշխատակիցները, բոլորս շարունակելու ենք մեր բուհում ձևավորված լավագույն ավադույթները՝ ապահովել մեր ուսանողների որակյալ կրթություն ստանալու իրավունքը, լինել ավագ ընկեր և խորհրդատու բոլոր ուսանողների համար:

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# 2023-2024 ՈՒՍՏԱՐԻՆ ԹՎԵՐՈՎ ՄԵՆՔ 79 ՏԱՐԵԿԱՆ ԵՆՔ

Ինստիտուցիոնալ հավատարմագրում
4 տարի ժամկետով

**4**
Բակալավրի կրթական ծրագրեր

**9**
Մագիստրոսի կրթական ծրագրեր

**3**
Հետբուհական կրթական ծրագրեր

**2301**
Բակալավրի ուսանողներ

**120**
Մագիստրանտներ

**6** հայցորդ
**6** ասպիրանտ

**104**
Սփյուռքի և օտարերկրացի ուսանողներ



**42**
Մեր գործընկերները

**2**
Մասնագիտական խորհուրդ

**877**
Դիմորդ

**4**
Միջազգային կառույցների անդամակցություն
IASUNI, EOA, FIEPS, EUSA

**39**
Միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր

# ՀՖԿՍՊԻ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



## ՀՖԿՍՊԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ՝

## ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

| **Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ** | |
|---|---|
| Կարեն Գիլոյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ |
| Արսեն Միխայլով | - ՀՀ վարչապետի օգնական |
| Գոհար Մամիկոնյան | - Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ) |
| Սերգեյ Աբրահամյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ |
| Արսեն Հակոբյան | - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ |
| **Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ** | |
| Սամվել Գևորգյան | - Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն (համաձայնությամբ) |
| Էդուարդ Քալանթարյան | - Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան (համաձայնությամբ) |
| Հարություն Յավրյան | - ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ (համաձայնությամբ) |
| Ռոբերտ Խաչատրյան | - Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ (համաձայնությամբ) |
| Դավիթ Մոսինյան | - «Հակադոպինգային գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն (համաձայնությամբ) |
| **Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ** | |
| Մարտին Ալիխանյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս |
| Անահիտ Բարսեղյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս |
| Մխիթար Խաչատրյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս |
| Եղիշե Դավթյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզախաղերի ամբիոնի դասախոս |
| Վարինկա Ավագիմյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս |

| Սովորողների կողմից ընտրված խորհրդի անդամներ | |
|---|---|
| Լիանա Դուդուկչյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող |
| Էրիկ Երվանդյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող |
| Յուրի Իսրաելյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող |
| Արմեն Պանչուլազյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի սովորող |
| Գայանե Չիլոյան | - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի սովորող |

## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

| | |
|---|---|
| Դավիթ Սենիկի Խիթարյան | Գիտական խորհրդի նախագահ, մ.գ.թ., պրոֆեսոր |
| Լուսինե Սամվելի Ստեփանյան | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կ.գ.թ., դոցենտ |
| Անժելա Ռուբենի Նուշիկյան | Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր |
| Արամ Արմենակի Գևորգյան | Ֆինանսավարչական գծով պրոռեկտոր |
| Աշոտ Աղվանի Չատինյան | Գիտական քարտուղար, մ.գ.դ., պրոֆեսոր |
| Տիգրան Գրիգորի Սիմոնյան | Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան, մ.գ.թ., դոցենտ |
| Վարդան Արտավազդի Աբովյան | Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի դեկանի ժ/պ, բ.գ.թ., դոցենտ |
| Ֆրունզիկ Գաբրիելի Ղազարյան | Գիտամեթոդական բաժնի ղեկավար, մ.գ.դ., պրոֆեսոր |
| Վարդան Ավետիսի Սմբատյան | Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Ելենա Սուրենի Հակոբյան | ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ՖԿ ամբիոնի մ.գ.դ., պրոֆեսոր |
| Արմեն Լեոնիդի Հակոբյան | Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Հարություն Արտավազդի Բաբայան | Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., պրոֆեսոր |
| Խաչիկ Թորգոմի Հարությունյան | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի վարիչ, դոցենտ |

| | |
|---|---|
| Արտակ Գառնիկի Ստեփանյան | ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ՖԿ ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Աշոտ Ռոմանի Դանիելյան | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր |
| Սուրեն Հակոբի Դանիելյան | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Նունե Շմավոնի Հայրապետյան | Սպորտի կառավարման և մարքեթինգի ամբիոնի ժ/պ. տ.գ.թ., դոցենտ |
| Նունե Գևորգի Տեր-Մարգարյան | Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Մուշեղ Էդուարդի Նիկոյան | Ֆուտբոլի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Էրիկ Զավենի Մարտիրոսյան | Ցիկլիկ Մարզաձևերի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Հարություն Հովհաննեսի Մելքոնյան | Մարզախաղերի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր |
| Գևորգ Լևոնի Նալբանդյան | Ֆիզիկական վերականգնման ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Հասմիկ Յուրիկի Ավագյան | Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ |
| Նարինե Վիլիկի Սելումյան | Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսոր |
| Արևհատ Ռաֆիկի Բաղդասարյան | Մարզական լրագրության ամբիոնի վարիչի ժ/պ |
| Գոհար Արարատի Մուրադյան | Որակի ապահովման բաժնի ղեկավար |
| Տիգրան Ռազմիկի Պետրոսյան | «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. |
| Աննա Արթուրի Ավետյան | ԱՏՍՏԿ ֆակուլտետ, 2-րդ կուրս |
| Աշոտ Սոսի Սարգսյան | Մարզչամանկավարժական ֆակուլտետ, 3-րդ կուրս |
| Ժենյա Աշոտի Կիրակոսյան | ԱՏՍՏԿ ֆակուլտետ, 1-ին կուրս |
| Շաղիկ Ռաֆիի Մովսեսյան | ԱՏՍՏԿ ֆակուլտետ, 1-ին կուրս |
| Ռազմիկ Անդրանիկի Մկրտչյան | Մարզչամանկավարժական ֆակուլտետ, 3-րդ կուրս |
| Արգիշտ Ավետիսի Գեղամյան | Մարզչամանկավարժական ֆակուլտետ 1-ին կուրս |
| Հայկ Խաչիկի Ղազարյան | ԱՏՍՏԿ ֆակուլտետ 3-րդ կուրս |
| Էրիկ Անուշավանի Շահբազյան | ԱՏՍՏԿ ֆակուլտետ 3-րդ կուրս |

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1.
## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ռազմավարական նպատակով նախատեսված են հետևյալ խնդիրները՝

1. Բարելավել և արդիականացնել կրթական ծրագրերի որակը,
2. Ապահովել հետազոտակենտրոն և պրակտիկակենտրոն ուսուցում,
3. Արդիականացնել ՀՖԿՍՊԻ–ի ուսումնական գործընթացի կառավարման համակարգը,
4. Ստեղծել կրթական հավասար պայմաններ բոլոր սոցիալական խմբերի համար,
5. Ապահովել 5-րդ մակարդակի մասնագիտական կրթություն, հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (ՄՄՈՒՀ) :

### ՀՖԿՍՊԻ–ի մասնագիտությունները, մասնագիտական կրթական ծրագրերը և ուսանողական համակազմը

ՀՖԿՍՊԻ–ի երկու ֆակուլտետում իրականացվում են 16 կրթական ծրագրեր, որոնցից 4-ը՝ բակալավրի, 9-ը՝ մագիստրոսի, 3-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում:

**Բակալավրի կրթական ծրագրեր**

| Հ | Մասնագիտություն և դասիչ | Կրթական ծրագիր և դասիչ | Որակավորում |
|---|---|---|---|
| 1. | Մասնագիտական մանկավարժություն՝ 011401.00.6 | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ՝ 011401.09.6 | Մանկավարժության բակալավր առկա/հեռակա |
| | | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա՝ 011401.10.6 | |
| 2. | Սպորտ՝ 101401.00.6 | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա – կինեզիոլոգիա՝ 101401.02.6 | Սպորտի բակալավր առկա/հեռակա |
| 3. | Լրագրություն՝ 032101.00.6 | Լրագրություն՝ 032101.01.6 | Լրագրության բակալավր առկա/հեռակա |

Հաշվետու 2023-2024 ուսումնական տարում Բակալավրիատի բաժնի աշխատանքները կազմակերպվել են բակալավրիատի կողմից մշակված աշխատանքային պլանին համապատասխան:

Բակալավրատի բաժինն իր գործառույթներն իրականացնում է համաձայն ՀՀ օրենսդրության, Ինստիտուտի կանոնադրության և ներքին իրավական ակտերի:

Բաժինը 2023-2024 ուսումնական տարում իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով՝

1. Ուսանողներին առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում,
2. ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից եկող գրությունների պատասխանների պատրաստում և պահանջվող փաստաթղթերի տրամադրում,

3. Քննական տեղեկագրերի պատրաստում արդյունքների մուտքագրում՝ կրեդիտային համակարգ,
4. Ուսումնական գործընթացների թվայնացում:

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌԱԿԱ
426
ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԵՂԵՐ
363
ԴԻՄՈՐԴ
299
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐ
Պետպատվեր
2
Վճարովի
256
Արտոնություն
41
Սպորտ՝ Առողջարարական ֆիզիկական կուլտուրա, կինեզիոլոգիա
8
Մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
278
Մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն և ԱՖԿ
13

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ուսանողների հետ աշխատանքը բավականին ծավալուն, բայց միաժամանակ արդյունավետ է իրականացվել բակալավրիատի բաժնի ֆակուլտետի պատասխանատուների աշխատանքի շնորհիվ:

Բաժնի կողմից ընդունվել է ուսանողների ավելի քան 1000 դիմում, որոնք տարբեր բնույթի բովանդակություն են պարունակում (ազատման, վերականգնման, հեռացման, Ազգային բանակ զորակոչվելու, տեղափոխման): Համագործակցելով այլ բաժինների հետ ընթացք է տրվել ուսանողների բոլոր դիմումներին: Տրամադրվել է ուսանողի կարգավիճակի վերաբերյալ 800 տեղեկանք:

Բակալավրիատի բաժնի կողմից ուսանողների մասով տրվել է 1146 հրաման՝ 167 անբարվարար առաջադիմության, 416 վերականգման, 67 իր դիմումի համաձայն ազատման, 219 ազգային բանակ զորակոչվելու, 2 մահվան դեպքի, 46 փոխատեղման և այլ բովանդակության հրամաններ՝ ընդունելության, ավարտման, ուսման վճարի մասնակի փոխհատուցման և այլն:

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ

2023-2024 ուսումնական տարում բակալավրում սովորել է 2301 ուսանող, որից 1022–ը առկա համակարգում, 1279–ը հեռակա համակարգում, այդ թվում՝ 98 սփյուռքահայ և օտարերկրացի:

Ստորև ներկայացված է ուսանողների թիվն ըստ մասնագիտությունների և ուսուցման ձևերի.

### ԲԱԿԱԼԱՎՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ

| Հ | Մասնագիտություն | 2021-2022 ուստարի | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա | | | Հեռակա | | |
| | | ար. | իգ. | ընդ. | ար. | իգ. | ընդ. |
| 1 | Մասնագիտական մանկավարժություն | 650 | 96 | **746** | 727 | 50 | 777 |
| 2 | Սպորտ | 135 | 53 | **188** | 73 | 50 | 123 |
| 3 | Լրագրություն | 29 | 16 | **45** | 16 | 1 | 17 |
| | **Ընդամենը** | **814** | **165** | **979** | **1054** | **125** | **1179** |
| **Հ** | **Մասնագիտություն** | **2022-2023 ուստարի** | | | | | |
| | | **Առկա** | | | **Հեռակա** | | |
| | | **ար.** | **իգ.** | **ընդ.** | **ար.** | **իգ.** | **ընդ.** |
| 1 | Մասնագիտական մանկավարժություն | 700 | 112 | **812** | 909 | 56 | 965 |
| 2 | Սպորտ | 137 | 44 | **181** | 88 | 56 | 144 |
| 3 | Լրագրություն | 25 | 14 | **39** | 14 | 1 | 15 |
| | **Ընդամենը** | **862** | **170** | **1032** | **1011** | **113** | **1124** |
| **Հ** | **Մասնագիտություն** | **2023-2024 ուստարի** | | | | | |
| | | **Առկա** | | | **Հեռակա** | | |
| | | **ար.** | **իգ.** | **ընդ.** | **ար.** | **իգ.** | **ընդ.** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մասնագիտական մանկավարժություն | 713 | 107 | **820** | 1068 | 90 | 1158 |
| 2 | Սպորտ | 125 | 42 | **167** | 56 | 55 | 111 |
| 3 | Լրագրություն | 25 | 10 | **35** | 8 | 2 | 10 |
| | **Ընդամենը** | **863** | **159** | **1022** | **1132** | **147** | **1258** |

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՇԱՐԺԸ




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Ընդհանուր ուսանողների քանակ | 2158 | 2156 | 2301 |
| Առկա բակալավր | 979 | 1032 | 1022 |
| Հեռակա բակալավր | 1179 | 1124 | 1279 |
| Սփյուռքահայ | 59 | 76 | 98 |

Վիճակագրական տվյալներով, 2023-2024 ուսումնական տարում, բակալավրի ուսուցման համակարգում վերականգնվել է 416 ուսանող, Ազգային բանակ է զորակոչվել 219 ուսանող, 67-ը ուսումնառությունը դադարեցրել է իր դիմումի համաձայն, 2-ը մահվան պատճառով, իսկ անբավարար առաջադիմության պատճառով 167 ուսանող հեռացվել է ինստիտուտից:




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Անձնական դիմումի համաձայն | 73 | 47 | 67 |
| Անբավարար առաջադիմություն | 178 | 249 | 167 |
| Մահվան պատճառով | 1 | 4 | 2 |
| Բանակ զորակոչված | 269 | 212 | 219 |
| Վերականգնված | 297 | 302 | 416 |

2023-2024 ուսումնական տարում Ինստիտուտն ավարտել է բակալավրի 438 ուսանող, որից 211-ը՝ առկա, 227–ը՝ հեռակա ուսուցման համակարգերի:

## ԱՎԱՐՏԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Ընդհանուր ուսանողների քանակ | 429 | 440 | 438 |
| Առկա | 185 | 190 | 211 |
| Հեռակա | 244 | 250 | 227 |

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

2023-2024 ուսումնական տարում բակալավրիատի բաժինը, ֆակուլտետները, ամբիոնները, նպաստել են հաճախումների և առաջադիմության հարցերը բավարար հիմքերի վրա դնելուն: Ուսանողների հետ անցկացվել են խորհրդակցություններ, զրույցներ, կոնսուլտացիաներ:

Երկու կիսամյակների հաճախելիությունը համապատասխանաբար կազմել է՝ 1-ին կիսամյակի առկա ուսուցման համակարգում 62.95%, հեռակա ուսուցման համակարգում 69.26%, 2-րդ կիսամյակի առկա ուսուցման համակարգում 59.5%, հեռակա ուսուցման համակարգում 62%:






2023-2024 ուստարում ուսանողների առաջադիմությունը ԱՏՍՏԿ ֆակուլտետում առկա ուսուցման ձևում համապատասխանաբար կազմել է՝ գերազանց 12%, լավ 11.3%, բավարար 17.1%, անբավարար 59.6%, իսկ հեռակա ուսուցման ձևում կազմել է՝ գերազանց 14.8%, լավ 27.1%, բավարա՝ 30.1%, անբավարար 28%:

## ԱՏՍՏԿ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ






Հաշվետու տարում ՄՄ ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում ուսանողների առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ գերազանց 4.6%, լավ 9.7%, բավարար 26%, անբավարար 59.7%, իսկ ՄՄ ֆակուլտետի հեռակա ուսուցման ձևում՝ գերազանց 9.2%, լավ 12.4%, բավարար 34.5%, անբավարար 43.9%:

## ՄՄ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ






2023-2024 ուսումնական տարում Մարզչամանկավարժական և Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող 22 ուսանող ուսման վարձի մասնակի փոխհատուցում է ստացել ինստիտուտի ռեկտորի որոշմամբ «այլ կարգավիճակ ունեցող ուսանողներ» կետով, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ 76 ուսանող:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում Ուսումնական գործընթացների կառավարման բաժինը բուհի մյուս ստորաբաժանումների հետ ունեցած արդյունավետ համագործակցության շրջանակներում, սահմանված ժամկետները խստագույնս պահպանելով, իրականացրել է բաժնի տիրույթում գտնվող գործառույթները /դասատախտակների և քննատախտակների կազմում, հաստատում, գրավոր ծածկագրված քննությունների կազմակերպում, ուսումնական պլանների կազմում և հաստատում, ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի կազմում և հաստատում, ՊԴԱ տարեկան բեռնվածության կազմում, դասալսումների ժամանակացույցի կազմում և գործընթացի համակարգում, ամենօրյա ռեժիմով լսարանային ստուգումների իրականացում, բաժնին վերաբերելի տեղեկատվության մասով ելից գրությունների պատրաստում/: Քանի որ Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի կողմից իրականացվող աշխատանքը մասնավորապես տեխնիկական և կազմակերպչական համակարգում է ենթադրում, ուստի կատարված աշխատանքի արդյունավետության ցուցիչի գնահատման համար հիմք են հանդիսանում տարբեր գործառույթների մասով ժամկետների պահպանումը, բաժնի կողմից իրականացվող և համակարգվող գործընթացների սահուն ընթացքը, բուհի տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների հետ արդյունավետ և կառուցողական համագործակցությունը:

Բացի ընթացիկ և նախատեսված աշխատանքներից, բաժնի կողմից նախաձեռնվել է նախորդ տարիների գործող ուսումնական պլանների խորը ուսումնասիրություն, որը պայմանավորված էր 2020-2021 ուսումնական տարվա ուսումնական պլաններում ուսանողների շաբաթական լսարանային բեռնվածության՝ Կառավարության կողմից սահմանված շեմը /մինչև 36 ժամ/ գերազանցելու հետ: Մանրակրկիտ կերպով վերանայվել են առկա և հեռակա բակալավրի, մագիստրատուրայի բոլոր գործող ուսումնական պլանները /մոտ 40 ուսումնական պլան/ և անհրաժեշտ փոփոխությունները Ուսումնական գործընթացների կառավարման բաժնի ղեկավարի կողմից ներկայացված զեկուցագրի հիման վրա հաստատվել են 2024 թվականի հունիսին կայացած Գիտխորհրդի նիստում: Այսպիսով, ուռճացված լսարանային ժամերը ինքնուրույն ժամերի հաշվին նվազեցնելու արդյունքում ոչ միայն պահպանվել է պետական չափորոշիչը, այլ նաև բուհի համար ապահովվել է մոտ 2 միլիոն դրամի տնտեսում:

**Բաժնի մյուս գործառույթները, որոնք իրականացվել են 2023-2024 ուստարվա ընթացքում, ներկայացված են ստորև՝**

1. Առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրատուրայի դասատախտակների կազմում և հաստատում (10 դասատախտակ)
2. Առկա և հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրատուրայի կիսամյակային և միջանկյալ քննատախտակների կազմում և հաստատում (14 քննատախտակ)
3. 2023-24 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների դասալսումների ժամանակացույցի կազմում և հաստատում (2 ժամանակացույց)
4. Ստուգարքների և քննությունների գործընթացի կազմակերպում (816 քննության և ստուգարքի կազմակերպում)
5. Լսարաններում ուսումնական գործընթացի վերահսկողություն (օրվա կտրվածքով մոտ 165 ստուգում)
6. 2024-25 ուստարվա ուսումնական պլանների մշակում, ներկայացում Գիտխորհրդի հաստատմանը (23 ուսումնական պլան)
7. 2024-25 ուստարվա բեռնվածության կազմում (13 ամբիոնի դասախոսների համար)
8. 2024-25 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների համար ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի կազմում և հաստատում (2 ժամանակացույց)
9. 2024-25 ուստարվա մատյանների պատրաստում (1850 մատյան)

## Պրակտիկայի կազմակերպում

Պրակտիկայի բաժինը Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից է և իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով համագործակցում է Ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների հետ: Բաժնի կանոնակարգից բխող հիմնական գործառույթներն են Ինստիտուտի բակալավրիատում և մագիստրատուրայում գործող կրթական ծրագրերով նախատեսված տարբեր պրակտիկաների նախապատրաստումը, կազմակերպումը, հսկումը և ամփոփումը:

Հաշվետու ժամանակահատվածում Պրակտիկայի բաժնի կողմից իրականացվել են բաժնի աշխատանքային պլանով նախատեսված հիմնական գործողությունները՝ կազմակերպվել, վերահսկվել և համապատասխան մեթոդական և կազմակերպչական օգնություն է ցուցաբերվել պրակտիկաների ընթացքում:

Ընդհանուր առմամբ պրակտիկաներ են կազմակերպվել շուրջ 220 տարբեր կազմակերպություններում՝ հանրակրթական դպրոցներ, մարզադպրոցներ, մարզամշակույթային կենտրոններ, վերականգնողական և առողջարարական կենտրոններ, հասարակական կազմակերպություններ, մանկապարտեզներ, մարզական ակումբներ և ֆեդերացիաներ, հեռուստաընկերություններ, տարբեր լրատվամիջոցներ, հոգեբանական կենտրոններ, տուրսիտական կենտրոններ և այլն: Նշված քանակի մեջ ներառված են նաև անհատական (տեղայնացված) կազմակերպված պրակտիկաների բազաները: Շուրջ 160 ուսանողի պրակտիկա կազմակերպվել է անհատական: 6 ուսանողի համար կազմակերպվել է պրակտիկայի վերահանձնում: Կազմակերպված պրակտիկաների համար բաժնի կողմից նախապատրաստվել և պրակտիկաների ընթացքում օգտագործվել են համապատասխան փաստաթղթեր՝ մատյաններ, պրակտիկայի տետրեր, խմբերի ցուցակներ, պայմանագրեր, կատարողական ակտեր: Պաշտոնական նամակագրության և էլեկտրոնային փոստի միջոցով կապ է պահպանվել պրակտիկայում ներգրավված բազաների հետ:

Պրակտիկաների ընթացքը վերահսկվել է բաժնի, ռեկտորատի, դեկանատների և համապատասխան ամբիոնների կողմից: Պրակտիկաների ընթացքում մեթոդիստների հետ պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ՝ կատարված աշխատանքները քննարկելու և առաջացող խնդիրները լուծելու նպատակով: Պրակտիկաների ավարտին Ուսումնագիտական բաժին է հանձնվել պրակտիկաների խմբերի գնահատված տեղեկագրերը:

Ուսանողների բացակայությունները վերահսկելու և նվազեցնելու նպատակով 1-ին կիսամյակում մանկավարժական պրակտիկայի ընթացքում փորձնական կիրառվեց ուսանողների կողմից իրենց ներկայությունը հատուկ ձևաթղթում ստորագրությամբ հաստատելու մեխանիզմը, ինչը արդյունավետ միջոց հանդիսացավ բացակայությունները օբյեկտիվ վերահսկելու և ուսանողների հաճախումները բարձրացնելու համար: Նախատեսվում է հաջորդ ուսումնական տարվանից այդ մեխանիզմը կիրառել բոլոր պրակտիկաների ընթացքում:

2022-2023 ուսումնական տարվա Պրակտիկայի բաժնի հաշվետվությունում ներկայացված SWOT վերլուծության արդյունքում վեր հանված թույլ կողմերի և վտանգների հաղթահարման նպատակով մշակված քայլերի շնորհիվ հաշվետու ժամանակաշրջանում նկատելիորեն բարձրացել է մանկավարժական/մասնագիտական պրակտիկաներից ուսանողների գոհունակությունը, բարելավվել է նաև պրակտիկայից ակնկալիքների հետ կապված ցուցանիշը, ինչը արտացոլված է Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված «ՀՖՍԿՊԻ–ում իրականացվող մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի արդյունավետության գնահատում» 2023 թվականի զեկույցում, որտեղ արտացոլված են 2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անցկացված պրակտիկաների վերաբերյալ հարցումները:

Չնայած զեկույցում տեսնում ենք, որ այս ուսումնական տարի բարձրացել է ուսանողների գոհունակության մակարդակը ընդունող կազմակերպությունների աջակցությունից, բազայի մասնագետներից, ինչպես նաև պրակտիկայի խմբի ղեկավար–մեթոդիստներից, այնուամենայնիվ պրակտիկայի արդյունավետության ապահովման այս կարևոր բաղադրիչները դեռ առավել բարելավման կարիք ունեն:

Հաշվետու ուսումնական տարում նախատեսված ժամկետից ուշ լրամշակվել և հաստատվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական

ինստիտուտ» հիմնադրամի «Պրակտիկաների կազմակերպման կանոնակարգը»: Կանոնակարգում փոփոխության են ենթարկվել գնահատման բաղադրիչների համամասնությունը, ավելացվել է հաճախումներին տրվող միավորները (դարձել է 20), ավելացել է «Պրակտիկայի պաշպանություն» բաղադրիչը 10 միավոր համամասնությամբ, սահմանվել են պրակտիկայի խմբերում ուսանողների քանակը, անհատական պրակտիկայի կազմակերպման և պրակտիկայի վերահանձնման պայմանները: Քննարկումների արդյունքում կանոնակարգում չի ամրագրվել նախատեսված բացակայությունների առավելագույն շեմը, որից հետո պրակտիկանտը չէր կարող գնահատվել:

Բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկաների ծրագրերի վերանայման և լրամշակման նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ ըստ պրակտիկաների: Ծրագրերի լրամշակման և վերանայման գործընթացը ընթացքի մեջ է, այն դեռևս չի հաջողվել ամբողջությամբ ավարտել, սակայն պլանավորվում է լրամշակվող ծրագրերը հաստատել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում:

Աշխատանքային պլանով նախատեսված «ՄԿԾ կառուցվածքում պրակտիկայի միջոցով «շարժունության պատուհանի» նախատեսում» գործողությունը չի իրականացվել:

Չլուծված է մնացել պրակտիկայի խմբի ղեկավար–մեթոդիստի վճարման չափը և մոտեցումը, որը լրացուցիչ խթան կհանդիսանա խմբի ղեկավար–մեթոդիստներ ներգրավելու և աշխատանքի կազմակերպման արդյունավետության համար:

Մագիստրատուրայում իրականացվում է 9-ը մագիստրոսի կրթական ծրագիր՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով, իսկ «Հոգեբանություն», «Մենեջմենթ» և «Մարկետինգ» կրթական ծրագրերը՝ միայն առկա ուսուցման ձևով:

## ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԿԾ-ՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| № | Դասիչ | Մասնագիտություն | № | Դասիչ | Կրթական ծրագիր |
|---|---|---|---|---|---|
| 1. | 011401.00.7 | Մասնագիտական մանկավարժություն | 1. | 011401.09.7 | Ֆիզիկական դաստիարա-կություն և սպորտային մարզումներ |
| | | | 2. | 011401.10.7 | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա |
| 2. | 101401.00.7 | Սպորտ | 3. | 101401.02.7 | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) |
| | | | 4. | 101401.03.7 | Ադապտիվ սպորտ |
| 3. | 032101.00.7 | Լրագրություն | 5. | 032101.01.7 | Լրագրություն |
| 4. | 031301.00.7 | Հոգեբանություն | 6. | 031301.01.7 | Հոգեբանություն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5. | 041301.00.7 | Կառավարում | 7. | 041301.01.7 | Մենեջմենտ |
| 6. | 041401.00.7 | Շուկայագիտություն (մարկետինգ) | 8. | 041401.01.7 | Մարկետինգ |
| 7. | 101501.00.7 | Զբոսաշրջություն | 9. | 101501.06.7 | Սպորտային տուրիզմ |

## ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցման ընդունելության համար փաստաթղթերի ընդունման առաջին և երկրորդ փուլերում ընդունվել է 81 դիմում, որից 21-ը՝ այլ բուհերի շրջանավարտներից: Ընդհանուր հաշվարկով մագիստրատուրա ընդունվել է 77 ուսանող՝ 7 կրթական ուղղություններով (Աղյուսակ 1):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից վերաբաշխված անվճար տեղերը և ընդունելության ամփոփ արդյունքները բերված են աղյուսակ 1-ում, իսկ վերջին 3 տարիների ընթացքում մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգ մրցույթով ընդունված, հրամանագրված ուսանողների քանակական տվյալները՝ Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 1

| **ԱՌԿԱ<br>2023-2024 ուսումնական տարի** | | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒ-ԹՅՈՒՆ** | **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** | **Դիմորդ** | **Ընդունված** | |
| | | | **Անվճար** | **Վճարովի** |
| Մասնագիտական մանկավարժություն | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 20 | 10 | 10 |
| | Ֆիզիկական դաստիարակություն Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 7 | 4 | 3 |
| Սպորտ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 29 | 7 | 18 |
| Լրագրություն | Լրագրություն | 6 | 2 | 4 |
| Հոգեբանություն | Հոգեբանություն | 7 | 2 | 5 |
| Կառավարում | Մենեջմենթ | 10 | 2 | 8 |
| Զբոսաշրջություն | Սպորտային տուրիզմ | 2 | - | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **81** | **27** | **50** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **77** | | |

Աղյուսակ 2

**Վերջին 3 տարիների ընթացքում մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգում ընդունելության տվյալները՝ ըստ կրթական ծրագրեր**

| ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ | ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ | Դիմորդ | | | Մրցույթով անցած | | | | | | Հրամանագրված ուսանողների թիվ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | 2021-2022 ուստարի | | 2022-2023 ուստարի | | 2023-2024 ուստարի | | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
| | | | | | Անվ. | վճ. | Անվ. | վճ. | Անվ. | վճ. | | | |
| Մասնագիտական մանկավարժություն | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 27 | 16 | 20 | 12, 1-ը նպ. | 16 | 12 | 4 | 10 | 10 | 28, որից 1-ը նպ. | 16 | 20 |
| | Ֆիզիկական դաստիարակություն Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 6 | 8 | 7 | 2 | 4 | 4 | 4 | 4 | 3 | 6 | 8 | 7 |
| Սպորտ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 31 | 37 | 29 | 11 | 20 | 8 | 29 | 7 | 18 | 31 | 37 | 25 |
| Լրագրություն | Լրագրություն | 4 | 5 | 6 | 2 | 2 | 2 | 3 | 2 | 4 | 4 | 5 | 6 |
| Հոգեբանություն | Հոգեբանություն | 9 | 4 | 7 | 2 | 7 | 2 | 2 | 2 | 5 | 9 | 4 | 7 |
| Կառավարում | Մենեջմենթ | 8 | 15 | 10 | 1 | 7 | 2 | 10 | 2 | 8 | 8 | 12 | 10 |
| Շուկայագիտություն | Մարկետինգ | 1 | | | 1 | - | | | | | 1 | | |
| Զբոսաշրջություն | Սպորտային տուրիզմ | 10 | 5 | 2 | | 10 | - | 5 | - | 2 | 10 | 5 | 2 |
| **Ընդամենը** | | **96** | **90** | **81** | **31** | **66** | **30** | **57** | **27** | **50** | **97** | **87** | **77** |

**2023-2024 ուսումնական տարվա մագիստրոսական կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևի ընդունելություն**

2023-2024 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելության համար փաստաթղթերի ընդունման ժամանակահատվածում ընդունվել է 43 դիմում, որից 2-ը օտարերկարցուց, նրանցից 26–ն այլ բուհերի շրջանավարտներ են:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2023-2024 ուստարվա մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ձևի ընդունելության արդյունքները, իսկ Աղյուսակ 4-ում՝ վերջին 3 տարիների ընթացքում մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի դիմում-հայտերի և հրամանագրված ուսանողների քանակական տվյալները:

*Աղյուսակ 3*

| **ՀԵՌԱԿԱ** | | | |
|---|---|---|---|
| **2023-2024 ուսումնական տարի** | | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** | **Վճարովի** | |
| | | **Դիմորդ** | **Ընդունված** |
| Մասնագիտական մանկավարժություն | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 15 | 15, որից 1-ը օտարերկրացի |
| | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 4 | 4 |
| Սպորտ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 24 | 24, որից 1-ը օտարերկրացի |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | **43** | **43** |

«Ադապտիվ սպորտ», «Լրագրություն» և «Սպորտային տուրիզմ» կրթական ծրագրերով դիմորդներ չեն եղել:

Աղյուսակ 4

Վերջին 3 տարիների ընթացքում մագիստրոսի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի ընդունելության տվյալները՝ ըստ կրթական ծրագրեր

| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ** | **Դիմորդ** | | | **Հրամանագրված ուսանողների թիվ** | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2021-2022** ուստարի | **2022-2023** ուստարի | **2023-2024** ուստարի | **2021-2022** ուստարի | **2022-2023** ուստարի | **2023-2024** ուստարի |
| Մասնագիտական մանկավարժություն | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 14 | 16 | 15 | 14 | 16 | 15, որից 1-ը օտարերկրացի |
| | Ֆիզիկական դաստիարակություն Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | - | - | 4 | - | - | 4 |
| Սպորտ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 8 | 18 | 24 | 8 | 18 | 24, որից 1-ը օտարերկրացի |
| | Ադապտիվ սպորտ | 2 | - | - | 2 | - | - |
| Ընդամենը | | 24 | 34 | 43 | 24 | 34 | 43 |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### Ընդունելության ցուցանիշների թվաքանակի վերաբերյալ

**2021-2023թթ դիմորդների դինամիկան**




**2021-2023թթ. ընդունելության ցուցանիշները**




Այսպիսով, ընդհանուր առմամբ 2023-2024 ուսումնական տարում մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում ընդունվել է 120 ուսանող:

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերում մագիստրանտների ընդհանուր թիվը 2023թ. նոյեմբերի 2-ի դրությամբ կազմել է 152 մագիստրանտ, այդ թվում՝ 2 սփյուռքահայ և 4 օտարերկացի: Սույն ժամանակահատվածում 1 ուսանող Ազգային բանակից զորացրվելուց հետո վերականգնվել է անվճար համակարգում, իսկ 4-ը՝ դադարեցրել են ուսումնառությունը համաձայն անձնական դիմումի:

5-րդ աղյուսակում ներկայացված են առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսանողների թվաքանակը՝ ըստ ՄԿԾ-ների:

*Աղյուսակ 5*

### ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 02.11.2023Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ, ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԻ (ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ)

| **Մագիստրատուրա (առկա)** | | | |
|---|---|---|---|
| Կրթական ծրագիր | ***Վճարովի*** | ***Անվճար*** | ***Ընդհանուր*** |
| Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 8 | 11 | 19 |
| Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 2 | 4 | 6 |
| Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 18 | 7 | 25 |
| Լրագրություն | 4 | 2 | 6 |
| Հոգեբանություն | 4 | 2 | 6 |
| Մենեջմենտ | 8 | 2 | 10 |
| Սպորտային տուրիզմ | 2 | - | 2 |
| **Ընդամենը** | **46** | **28** | **74** |

| **Մագիստրատուրա (հեռակա)** | | | |
|---|---|---|---|
| **Կրթական ծրագիր** | **Վճարովի** | | ***Ընդհանուր*** |
| | **1-ին կուրս** | **2-րդ կուրս** | |
| Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 15, որից 1-ը օտարերկրացի | 15 | 30, որից 1-ը օտարերկրացի |
| Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա) | 24, որից 1-ը օտարերկրացի | 20, որից 2 սփյուռքահայ, 2 օտարերկացի | 44, որից 2 սփյուռքահայ, 3 օտարերկացի |
| Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 4 | - | 4 |
| **Ընդամենը** | **43,** որից 2-ը օտարերկրացի | **35,** որից 2 սփյուռքահայ, 2 օտարերկացի | **78,** որից 2 սփյուռքահայ, 4 օտարերկացի |

*Աղյուսակ 6*

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐ

| № | **Ցուցանիշի անվանում** | **Առկա** | **Հեռակա** |
|---|---|---|---|
| 1 | Տարվա սկիզբ (ուսանողների քանակը) | | 35, որից<br>2 սփյուռքահայ,<br>2 օտարերկրացի |
| 2 | **Ընդունված** (հաշվետու ժամանակաշրջանում ընդունվածների քանակ) | 77 | 43, որից 2-ը օտարերկրացի |
| 3 | **Եկած** (հաշվետու ժամանակաշրջանում այլ բուհերից տեղափոխվածների, տարեկետումից վերդարձածների, վերականգնվածների քանակ) | 2 | 1 |
| 4 | **Մաղումներ** (հաշվետու ժամանակաշրջանում բուհից դուրս մնացածներ և ազատվածներ) | 12 | 2 |
| | **Գնացած** (հաշվետու ժամանակաշրջանում այլ բուհեր տեղափոխվածների, տարեկետման իրավունք ստացածների քանակ) | 1 | - |
| 7 | Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրավիճակով պայմանավորված 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված, Արցախի պետական համալսարանից տեղափոխված ուսանողների թիվը | 10 | - |
| | Մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած մագիստրանտների թիվը | - | - |
| | Մագիստրոսական թեզը պաշտպանած մագիստրանտների թիվը | **76** | **36**,<br>որից 1-ը 2022-2023 ուստարվա շրջանավարտ է |
| **Մագիստրանտների թիվը 01.06.2024թ. դրությամբ** | | - | **42,** որից 2-ը օտարերկրացի |

## ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մագիստրանտների հաճախելիության հարցը միշտ եղել և մնում է Ինստիտուտի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի, ֆակուլտետների և ամբիոնների ուշադրության կենտրոնում: Հարկ է անընդհատ վերահսկողություն սահմանել հաճախումների, մատյաններում օբյեկտիվ և անթերի գրանցման, ուսումնական կարգապահության բարձրացման նպատակով:

Հաշվետու տարում ամփոփելով մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգի մագիստրանտների հաճախումների արդյունքները՝ ըստ կրթական ծրագրերի, ներկայացված է աղյուսակ 3-ում.

*Աղյուսակ 7*

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| Կրթական ծրագիր | Ուսանողների թիվը | Ուսանողների հաճախումները % | |
|---|---|---|---|
| | | 1-ին կիսամյակ | 2-րդ կիսամյակ |
| **ԱՌԿԱ** | | | |
| Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 25 | 53.62 | 50.34 |
| Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 6 | 70.07 | 70.13 |
| Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 24 | 81.91 | 79.21 |
| Լրագրություն | 5 | 63.25 | 47.12 |
| Հոգեբանություն | 6 | 83.08 | 94.20 |
| Կառավարում | 8 | 62.07 | 54.19 |
| Սպորտային տուրզմ | 2 | 80.13 | 93.37 |
| **ՀԵՌԱԿԱ** | | | |
| Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 16 | 61.36 | 58.12 |
| Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 3 | 96.66 | 85.92 |
| Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 23 | 76.30 | 76.36 |

## Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2023-2024 ուստարվա հաճախումներն ըստ կրթական ծրագրերի




| | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | Ֆիզիկական դաստիարակություն և ԱՖԿ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | Լրագրություն | Հոգեբանություն | Կառավարում | Սպորտային տուրիզմ |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առաջին կիսամյակ | 53.62% | 70.07% | 81.91% | 63.25% | 83.08% | 62.07% | 80.13% |
| Երկրորդ կիսամյակ | 50.34% | 70.13% | 79.21% | 47.12% | 94.20% | 54.19% | 93.37% |

## Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի 2023-2024 ուստարվա հաճախումներն ըստ կրթական ծրագրերի




| | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | Ֆիզիկական դաստիարակություն և ԱՖԿ | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա |
|---|---|---|---|
| Առաջին կիսամյակ | 61.36% | 96.66% | 76.30% |
| Երկրորդ կիսամյակ | 58.12% | 85.92% | 76.36% |

## ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԵՐԸ

Հաշվետու տարում մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների առաջադիմության արդյունքներն ըստ կրթական ծրագրերի ներկայացված են աղյուսակ 4-ում և 5-ում.

*Աղյուսակ 8*

### 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

| № | Կրթական ծրագիր | Ուս. քանակ | Գնահատականները տոկոսներով | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գերազանց «A, A+» | | Լավ «B, B+» | | Բավարար «C, C+» | | Անբավարար «F» | |
| | | | n | % | n | % | n | % | n | % |
| **Առաջին կիսամյակ** | | | | | | | | | | |
| **1** | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 25 | 5 | 20 | 7 | 28 | 13 | 52 | - | - |
| **2** | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 6 | 2 | 33.3 | 2 | 33.3 | 2 | 33.3 | - | - |
| **3** | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 24 | 9 | 37.5 | 5 | 20.8 | 10. | 41.7 | - | - |
| **4** | Լրագրություն | 5 | 1 | 20 | 2 | 40 | 2 | 40 | - | - |
| **5** | Հոգեբանություն | 6 | 5 | 83.3 | 1 | 16.7 | 0 | 0 | - | - |
| **6** | Կառավարում | 8 | 2 | 25 | 1 | 12.5 | 5 | 62.5 | - | - |
| **7** | Սպորտային տուրզմ | 2 | 2 | 100 | - | - | - | - | - | - |
| | **Ընդամենը** | **76** | **26** | **34.21** | **18** | **23.68** | **32** | **42.11** | | |
| **Երկրորդ կիսամյակ** | | | | | | | | | | |
| **1** | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 25 | 4 | 16 | 7 | 28 | 14 | 56 | - | - |
| **2** | Ֆիզիկական դաստիարակություն և ԱՖԿ | 6 | 3 | 50 | 2 | 33.3 | 1 | 16.7 | - | - |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3** | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 24 | 9 | 37.5 | 7 | 29.2 | 8 | 33.3 | - | - |
| **4** | Լրագրություն | 5 | 1 | 20 | 4 | 80 | | | - | - |
| **5** | Հոգեբանություն | 6 | 6 | 100 | | | | | - | - |
| **6** | Կառավարում | 8 | 2 | 25 | 4 | 50 | 2 | 25 | - | - |
| **7** | Սպորտային տուրզմ | 2 | 2 | 100 | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը** | | **76** | **27** | **35.53** | **24** | **31.58** | **25** | **32.89** | **0** | 0 |

**Մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2023-2024 ուստարվա առաջադիմությունն ըստ կիսամյակների**



*Աղյուսակ9*

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ԿԻՍԱՄՅԱԿՆԵՐԻ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

| № | Կրթական ծրագիր | Ուսանողների քանակ | Գնահատականները տոկոսներով | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գերազանց «A, A+» | | Լավ «B, B+» | | Բավարար «C, C+» | | Անբավարար «F» | |
| | | | n | % | n | % | n | % | n | % |
| **Առաջին կիսամյակ** | | | | | | | | | | |
| **1** | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 16 | 5 | 31.3 | 2 | 12.5 | 8 | 50 | 1 | 6.3 |
| **2** | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 3 | 3 | 100 | - | - | - | - | - | - |
| **3** | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 23 | 4 | 17.4 | 6 | 26.1 | 9 | 39.1 | 4 | 17.4 |
| **Ընդամենը** | | **42** | **12** | **28.57** | **8** | **19.05** | **17** | **40.48** | **5** | **11.90** |
| **Երկրորդ կիսամյակ** | | | | | | | | | | |
| **1** | Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 16 | 6 | 37.5 | 2 | 12.5 | 4 | 25 | 4 | 25 |
| **2** | Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 3 | - | - | 3 | 100 | - | - | - | - |
| **3** | Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 23 | 7 | 30.4 | 1 | 4.3 | 13 | 56.5 | 2 | 8.7 |
| **Ընդամենը** | | **42** | **13** | **30.95** | **6** | **14.29** | **17** | **40.48** | **6** | **14.29** |

**Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի 2023-2024 ուստարվա առաջադիմությունն ըստ կիսամյակների**




| | Գերազանց «A, A+» | Լավ «B, B+» | Բավարար «C, C+» | Անբավարար «F» |
|---|---|---|---|---|
| Առաջին կիսամյակ | 28.57% | 19.05% | 40.48% | 11.90% |
| Երկրորդ կիսամյակ | 30.95% | 14.29% | 40.48% | 14.29% |

Հաշվետու ժամանակահատվածում Ինստիտուտի միջոցների հաշվին իրականացվել են ուսման վարձավճարների զեղչեր՝ հետևյալ կատեգորիաներով.

***Աղյուսակ 10***

| Կատեգորիա | առկա | հեռա-կա | Զեղչի չափը |
|---|---|---|---|
| Մարտական հերթապահություն իրականացնող ուսանողներ | 3 | 3 | 30% |
| Երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներ | 1 | 3 | 50% |
| Մինչև 1 տարեկան երեխա ունեցող ուսանողներ | - | 2 | 50% |
| 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ ուսանողներ | 2 | - | 50% |
| Վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխա ունեցող կամ ընտանիքի երկու և ավելի անդամ ուսանողներ | 1 | - | 10% |
| ՀՖԿՍՊԻ-ում առնվազն 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատող կամ աշխատողի երեխա ուսանողներ | 1 | - | 10% |
| Առանձնահատուկ դեպքերում, ՀՖԿՍՊԻ ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներ | 7 | 3 | 30% |
| **Ընդամենը** | **15** | **11** | |

Ընդհանուր առմամբ հաշվետու տարում Ինստիտուտի միջոցների հաշվին մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման վճարովի համակարգի 26 մագիստրանտների ուսման վարձավճարները զեղչվել են տարբեր չափերով (10-50%):

Պետության կողմից մասնակի փոխհատուցվել է 44-օրյա պատերազմին մասնակցած առկա և հեռակա ուսուցման համակարգի 16 մագիստրանտների ուսման վարձերը (50-70%):

## ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

### Հեռակա ուսուցման համակարգի ամփոփիչ ատեստավորում

2023թ դեկտեմբերին սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել են մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի շրջանավարտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունները:

Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրվել է մասնակցել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդհանուր **36** շրջանավարտի, որից **1**-ը նախորդ տարվա շրջանավարտ:

2023թ. ինստիտուտի ռեկտորի հրամանով ստեղծվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ՝ մագիստրանտների ավարտական աշխատանքների պաշտպանությունը կազմակերպելու նպատակով:

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի արդիականությանն ու բովանդակությանը, պետք է նշել, որ մագիստրանտներն ըստ իրենց թեզերի ուղղվածության կատարել են մեծածավալ և բազմակողմանի ուսումնասիրություններ և ըստ այդմ ստացել փորձարարական արժեքավոր տվյալներ:

***Աղյուսակ 11***

**Տվյալներ**

**2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին՝ ըստ մասնագիտությունների**

| № | Մասնագիտություն (կրթական ծրագիր) | Մագիստրանտների թիվը մինչև պաշտպանությունը | Դրանցից թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը | Չեն ներկայացել անհարգելի պատճառով | Ստացել են գերազանցության դիպլոմ | Պաշտպանել են աշխատանքը | | | | | | | Ավարտել են բուհը և ստացել են դիպլոմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ընդամենը | Դրանցից ստացել են գնահատականներ | | | | | | |
| | | | | | | | ԳԵՐԱ ԶԱՆՑ՝ | | ԼԱՎ՝ | | ԲԱՎԱ-ՐԱՐ | | |
| | | | | | | | 90-94 միավոր A | 95-100 միավոր A+ | 80-84 միավոր B | 85-89 միավոր B+ | 60-69 միավոր C | 70-79 միավոր C+ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն | **16** | **16** | **-** | **4** | 16 | 6 | 7 | - | 3 | - | - | **16** |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | և սպորտային մարզումներ | | | | | | | | | | | | |
| 2 | Սպորտ՝ Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | **20** | **20** | - | **7** | 20 | 4 | 4 | 3 | 6 | 1 | 2 | **20** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **36** | **36** | **-** | **11** | **36** | **10** | **11** | **3** | **9** | **1** | **2** | **36** |

Մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներով ինստիտուտը շնորհել է 36 մագիստրոսի դիպլոմ, որից 11-ը՝ գերազանցության (30.56%) (տե՛ս աղյուսակ 7):

### Առկա ուսուցման համակարգի ամփոփիչ ատեստավորում

2024 թվականի մայիսին սահմանված կարգով կազմակերպվել և անցկացվել է 2023-2024 ուստարվա համապատասխան կրթական ծրագրերի մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: Ըստ հաստատված ժամանակացույցների հաստատվել են մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները, ղեկավարների կողմից տրամադրվել են խորհրդվատություններ, ամբիոնները կազմակերպել են ընթացիկ մշտադիտարկումներ, գրախոսումներ և նախնական պաշտպանություններ: Հաշվետու ուսումնական տարում մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրվել է մասնակցել մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի ընդհանուր 76 մագիստրանտ:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությունն իրականացվել է բարձր մակարդակով, թե՛ մագիստրանտների, թե՛ նրանց գիտական ղեկավարների և թե՛ ամբիոնների վարիչների ներդրած ջանքերի շնորհիվ: Արդյունքում՝ որակավորված մասնագետներն իրենց գիտելիքներով կարող են արժանի տեղ գտնել ժամանակակից աշխատաշուկայում:

*Աղյուսակ 12*

**Տվյալներ**
**2023-2024 ուստարվա առկա ուսուցման համակարգի մագիստրատուրայի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին՝ ըստ մասնագիտությունների**

| № | Մասնագիտություն (կրթական ծրագիր) | Մագիստրանտների թիվը մինչև պաշտպանությունը | Դրանցից թույլատրվել է մասնակցել մագիստրոսական թեզի պաշտպանությանը | Չեն ներկայացել ավարտական աշխատանքի պաշտպանության | Ստացել են գերազանցության դիպլոմ | Պաշտպանել են աշխատանքը | | | | | | | Ավարտել են բուհը և ստացել են դիպլոմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Ընդամենը | Դրանցից ստացել են գնահատականներ | | | | | | |
| | | | | | | | ԳԵՐԱԶԱՆՑ | | ԼԱՎ | | ԲԱՎԱՐԱՐ | | |
| | | | | | | | 90-94 միավոր A | 95-100 միավոր A+ | 80-84 միավոր B | 85-89 միավոր B+ | 60-69 միավոր C | 70-79 միավոր C+ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 1 | Մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | **25** | **25** | - | **4** | 25 | 5 | 3 | 6 | 7 | - | 4 | **25** |
| 2 | Սպորտ՝ առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | **24** | **24** | - | **9** | 24 | 4 | 12 | 2 | - | - | 6 | **24** |
| 3 | Լրագրություն | **5** | **5** | - | **1** | 5 | 4 | 1 | - | - | - | - | **5** |
| 4 | Մասնագիտական մանկավարժություն՝ ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | **6** | **6** | - | **2** | 6 | 2 | 2 | - | 1 | - | 1 | **6** |
| 5 | Հոգեբանություն | **6** | **6** | - | **6** | 6 | 1 | 5 | - | - | - | - | **6** |
| 6 | Կառավարում՝ մենեջմենտ | **8** | **8** | - | **2** | 8 | 2 | 4 | | 1 | - | 1 | **8** |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Զբոսաշրջություն՝ սպորտային տուրիզմ | **2** | **2** | - | **2** | 2 | 2 | - | - | - | - | - | **2** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **76** | **76** | **-** | **26** | **76** | **20** | **27** | **8** | **9** | **-** | **12** | **76** |

Մագիստրատուրայի առկա ուսուցման ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներով ինստիտուտը շնորհել է 76 մագիստրոսի դիպլոմ, որից 26-ը՝ գերազանցության (34.21%) (տե՛ս աղյուսակ 8):

*Աղյուսակ 13*

**Մագիստրատուրայի շրջանավարտների արդյունքները՝ ըստ կրթական ծրագրերի**

| № | Մասնագիտություն (կրթական ծրագիր) | Շնորհված դիպլոմներ | | | | Գերազանցությամբ դիպլոմներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առկա | | հեռակա | | առկա | | հեռակա | |
| | | 2022-2023 | 2023-2024 | 2022-2023 | 2023-2024 | 2022-2023 | 2023-2024 | 2022-2023 | 2023-2024 |
| 1 | Մասնագիտական մանկավարժություն՝ Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ | 16 | 25 | 12 | 16 | 5 | 4 | 3 | 4 |
| 2 | Սպորտ՝ Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա | 36 | 24 | 9 | 20 | 11 | 9 | 3 | 7 |
| 3 | Սպորտ՝ ադապտիվ սպորտ | - | - | 2 | - | - | - | 1 | - |
| 4 | Լրագրություն | 5 | 5 | | | 2 | 1 | | |
| 5 | Մասնագիտական մանկավարժություն՝ Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա | 7 | 6 | - | - | 3 | 2 | - | - |
| 6 | Հոգեբանություն | 4 | 6 | - | - | 1 | 6 | - | - |
| 7 | Կառավարում | 10 | 8 | - | - | 3 | 2 | - | - |
| 8 | Զբոսաշրջություն՝ Սպորտային տուրիզմ | 4 | 2 | - | - | 3 | 2 | - | - |
| | **Ընդամենը** | **82** | **76** | **23** | **36** | **28** | **26** | **7** | **11** |

Այսպիսով, հաշվետու տարում մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսանողների մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքներով ինստիտուտը շնորհել է 112 մագիստրոսի դիպլոմ, որից 37-ը՝ գերազանցության (33.04%) (տե՛ս աղյուսակ 9):

## ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտում գործում է հետազոտողի կրթական աստիճանի 2 համակարգ՝ ասպիրանտուրա և հայցորդություն: Հետազոտողների ընդունելությունն ու ուսումնառությունը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշմամբ հաստատված ‹‹ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման›› կարգի:

## ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

| № | ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ | ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎ | ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ |
|---|---|---|---|
| 1 | Ասպիրանտուրա | Առկա | 3 |
| 2 | Ասպիրանտուրա | Հեռակա | 4 |
| 3 | Հայցորդություն | Առկա | 5 |

Հաշվետու տարում իրականացվել է հետբուհական կրթություն 3 մասնագիտություններով.

## ԳՈՐԾՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

| № | Դասիչ | Մասնագիտություն |
|---|---|---|
| 1. | ԺԳ.00.02 | «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) |
| 2. | ԺԹ.00.01 | «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» |
| 3. | Գ.00.09 | «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» |

Տարեսկզբին ասպիրանտուրայում պետական պատվերով սովորել է 6 ասպիրանտ, որից 4-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա համակարգերում, հայցորդների թիվը կազմել է 6 հոգի:

Հետազոտողի կրթական աստիճանում անվճար և վճարովի համակարգերում սովորող ուսանողների բաշխվածությունը հետևյալ տեսքն ունի.

## ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎ

| Կրթաձև | Անվճար | Վճարովի |
|---|---|---|
| Ասպիրանտուրա առկա | 4 | 0 |
| Ասպիրանտուրա հեռակա | 2 | 0 |
| Հայցորդություն | 0 | 6 |
| **Ընդամենը** | **6** | **6** |

## ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՈՒՐՍԵՐԻ

| Կրթաձև | Մասնագիտություն | Կուրս | անվճար | Վճարովի |
|---|---|---|---|---|
| Ասպիրանտուրա առկա | ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» | I | | |
| | | II | 1 | |
| | | III | | |
| | Գ.00.09 - «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» | I | 1 | |
| | | II | 1 | |
| | | III | 1 | |
| Ասպիրանտուրա հեռակա | ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | IV | 2 | |
| Հայցորդություն | ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | I | | |
| | | II | | 2 |
| | | III | | 1 |
| | | IV | | |
| | | V | | |
| | ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» | I | | |
| | | II | | |
| | | III | | 3 |
| | | IV | | |
| | | V | | |
| Ընդամենը | | | 12 | |

Հայցորդական համակարգում ուսումնառությունը շարունակելու համար տրվել է ընդունելության հայտարարություն գիտության հետևյալ 3 ուղղություններով.

- Հոգեբանական գիտություններ
- Կենսաբանական գիտություններ
- Մանկավարժական գիտություններ

Հայցորդ ձևակերպվելու համար դիմորդների փաստաթղթերն ընդունվել են 2023թ. սեպտեմբերին:

*Աղյուսակ 14*

## ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

| № | Դասիչ | Մասնագիտություն | Դիմորդների քանակը | Ձևակերպվել են (վճարովի) |
|---|---|---|---|---|
| 1. | ԺԳ.00.02 | «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | 1 | 1 |
| 2. | ԺԹ.00.01 | «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբա-նություն» | - | - |
| 3. | Գ.00.09 | «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» | - | - |
| **Ընդամենը** | | | **1** | **1** |

2023թ. դեկտեմբերին Ինստիտուտի Գիտական խորհրդում որոշվել է միջնորդել Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտին հաստատել Բժշկակենսաբանական գիտությունների ամբիոնի ասպիրանտ Գայանե Լալայանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մրցակցային պայմաններում մարզիկների որոշումների ընդունման ֆունկցիոնալ մոդելի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները» Գ.00.09 թվանիշով «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար է նշանակվել կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյանը:

2024թ. ապրիլին ինստիտուտի Գիտական խորհրդում հաստատվել է Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Խանում Խաչիկի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Դպրոցականների շարժումների ճշգրտության մշակման մեթոդիկան՝ զարգացման առավել զգայուն շրջանների հաշվառմամբ», ԺԳ.00.02 թվանիշով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակվել մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Չատինյանը:

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ՝ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐԻ

| № | Մասնագիտություն | Անուն, ազգանուն | Հաստատված թեմաներ | Հաստատված գիտական ղեկավարներ |
|---|---|---|---|---|
| **ՀԱՅՑՈՐԴ** | | | | |
| 1 | ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | Նովրուզյան Արմինե Գեղամի | 7-9 տարեկան սպորտային պարու-հիների առաջատար շարժողական ընդունակությունների մշակման առանձնահատկությունները | մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Չատինյան |
| 2 | | Խաչատրյան Նարեկ Էդուարդի | Влияние интервального метода тренировки с применением эрго-генного средства на скоростную выносливость футболистов | մ.գ.դ., պրոֆեսոր Ելենա Հակոբյան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | | Հակոբյան Հայկ Կարենի | Պատանի թաեքվոնդոիստների ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները | մ.գ.դ., պրոֆեսոր Ֆրունզիկ Ղազարյանը |
| 4 | | Խաչատրյան Խանում Խաչիկի | Դպրոցականների շարժումների ճշգրտության մշակման մեթոդիկան՝ զարգացման առավել զգայուն շրջանների հաշվառմամբ | մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Չատինյան |
| 5 | ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» | Հովհաննիսյան Մելինե Հրաչյայի | Կոգնիտիվ գործառույթների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները ուշադրության շեղումներով անձանց մոտ | կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյան |
| 6 | | Հակոբյան Կարինե Ժորայի | Մասնագիտական այրման հոգեֆիզիոլոգիական գործոնները երկարատև սթրեսածին իրավիճակների ազդեցության պայմաններում | կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյան |
| 7 | | Գասպարյան Գոհար Աշոտի | Անձնային գործոնների դերը շարժողական ակտիվության և առողջ ապրելակերպի համատեքստում | հ.գ.թ., պրոֆեսոր Հարություն Բաբայան |
| **ԱՍՊԻՐԱՆՏ** | | | | |
| 1 | ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | Հակոբյան Հովհաննես Հակոբի (հեռակա, պպ) | Պատանի շախմատիստների ֆիզիկական պատրաստության կատարելագործման ուղիները | մ.գ.թ., դոցենտ Արմեն Հակոբյան |
| 2 | | Պետրոսյան Արմեն Տիգրանի (հեռակա, պպ) | Կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկան մեթոդիկան մարմնամարզության միջոցներով | մ.գ.դ., պրոֆեսոր Ֆրունզիկ Ղազարյան |
| 3 | Գ.00.09 «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» | Մարտիրոսյան Աննա Աշոտի (առկա, պպ) | Սպորտային կողմնորոշման հոգեֆիզիոլոգիական ասպեկտները | կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյան |
| 4 | | Մկրտչյան Լիլիթ Կարենի (առկա, պպ) | Կրտսեր տարիքի երեխաների մորֆոֆունկցիոնալ ցուցանիշների փոփոխությունները «Սթրեթչինգ» ֆիթնես ծրագրի ազդեցության ներքո | կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյան |
| 5 | | Գայանե Արմենի Լալայան | Մրցակցային պայմաններում մարզիկների որոշումների ընդունման ֆունկցիոնալ մոդելի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները | կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ստեփանյան |
| 6 | ԺԹ. 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» | Սինանյան Աննա Համլետի (առկա, պպ) | Պատանի շախմատիստների սթրեսակայունության և ինքնավերահսկիչ վարքի ձևավորման առանձնահատկությունները հոգեբանական ապահովման գործընթացում | հ.գ.թ., դոցենտ Աննահիտ Ստեփանյան |

Հարկ է նշել, որ 2024թ. փետրվարին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին Ինստիտուտը միջնորդել է «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) (դասիչ՝ ԺԳ. 00.02) մասնագիտության ուղղությամբ հաստատել որակավորման քննության հանձնաժողովը՝ կազմված Ինստիտուտի ՊԴ կազմի համապատասխան ներկայացուցիչներից:

Հաշվետու տարում որակավորման քննություն հանձնող չի եղել:

2023թ. դեկտեմբերի 13-ին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մանկավարժություն – 065 մասնագիտական խորհրդի որոշմամբ Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Սաթենիկ Գառնիկի Խաչատրյանին շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Դիպլոմ Ա №10031):

2023թ. հոկտեմբերի 10-ին նախնական փորձաքննություն է անցել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասպիրանտ Արման Վաչագանի Ավետիսյանը (գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Չատինյան), իսկ 2024թ. հունվարի 26-ին ինստիտուտում գործող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մանկավարժություն - 065 մասնագիտական խորհրդում տեղի է ունեցել թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը, քվեարկությամբ միաձայն որոշվել է միջնորդել Արման Վաչագանի Ավետիսյանին շնորհել ԺԳ.00.02 դասիչով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2024թ. մայիսի 8-ին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մանկավարժություն – 065 մասնագիտական խորհրդի որոշմամբ Արման Վաչագանի Ավետիսյանին շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Դիպլոմ Ա №10121):

2024 թվականի հունվարի 19-ին ինստիտուտում գործող մանկավարժություն - 065 մասնագիտական խորհրդում տեղի է ունեցել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի հայցորդ Նարեկ Արայիկի Էլոյանի (գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ելենա Հակոբյան) թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը, քվեարկությամբ միաձայն որոշվել է միջնորդել Նարեկ Արայիկի Էլոյանին շնորհել ԺԳ.00.02 դասիչով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2024թ. ապրիլի 4-ին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի մանկավարժություն – 065 մասնագիտական խորհրդի որոշմամբ Նարեկ Արայիկի Էլոյանին շնորհվել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Դիպլոմ Ա №10099):

2024թ. հունիսի 18-ին նախնական փորձաքննություն է անցել Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասպիրանտ Աննա Աշոտի Կովալյովայի ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ելենա Հակոբյան):

Հաշվետու տարում Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժինը իրականացրել է 2024-2025 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը: Ասպիրանտուրայի դիմորդների փաստաթղթերի ընդունումը

կազմակերպվել է 2024թ. մայիսի 27-ից մինչև հունիսի 20-ը (ներառյալ), մասնագիտական քննության հանձնումը՝ հունիսի 26-ից հուլիսի 3-ը (ներառյալ):

## 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| № | Դասիչ | Մասնագիտություն | Հատկացված տեղեր (անվճար) | Դիմորդների քանակը | Ընդունվել են (անվճար) |
|---|---|---|---|---|---|
| 1. | ԺԳ.00.02 | «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | 1 | 2 | 1 |
| 2. | ԺԹ.00.01 | «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբա-նություն» | 1 | 1 | 1 |
| 3. | Գ.00.09 | «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» | 1 | - | - |
| **Ընդամենը** | | | **3** | **3** | **2** |

Հաշվետու տարում ասպիրանտուրան ավարտել է 3 ասպիրանտ՝ որից 1-ը՝ առկա, 2-ը՝ հեռակա համակարգերում, 3 հայցորդներ իրենց դիմումի համաձայն դադարեցրել են ուսումնառությունը:

Առ **01.08.2024թ**. հետազոտողի կրթական աստիճանում սովորում է 9 ուսանող, որից 5-ը՝ ասպիրանտուրայի առկա կրթաձևում, իսկ 6-ը՝ հայցորդական համակարգում:

## ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ (ԱՍՊԻՐԱՆՏ/ՀԱՅՑՈՐԴ) ԿԱԶՄԸ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Մասնագիտություն | Առկա ասպիրանտուրա | Հեռակա ասպիրանտուրա | Հայցորդություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| ԺԳ.00.02 դասիչով «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) | 1 | - | 3 | 4 |
| ԺԹ.00.01 դասիչով «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» | 2 | - | 1 | 3 |
| Գ.00.09 դասիչով «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա» | 2 | | - | 2 |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | **5** | **-** | **4** | **9** |

Պատրաստվել և տրվել են տեղեկանքներ որակավորման քննությունների մասին Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ներկայացնելու նպատակով:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն հաշվետու տարում ընդունված, ավարտած և սովորող ասպիրանտների և հայցորդների թվաքանակի և շարժի վերաբերյալ՝ համաձայն «Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի» և «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման» ձևի և կարգի:

Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի կողմից լրամշակվել են «Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ձևերով ընդունելության և ուսուցման» և «Ասպիրանտուրայի ընդունելության և հայցորդության ձևակերպման, ուսումնառության իրականացման» կանոնակարգերը:

## ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ

Ինստիտուտի ուսանողների փաստաթղթերը (անձնական գործերը) պահվում են հատուկ բաժնում՝ ղեկավարի պատասխանատվությամբ:

1. 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների հիման վրա բաժինն ընդունող հանձնաժողովից ստացել և խմբավորել է առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների՝ 310, հեռակա ուսուցման ուսանողների՝ 298, օտարերկրյա քաղաքացիների՝ 28, մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի՝ 77, հեռակա ուսուցման համակարգի՝ 39, քոլեջներից հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրս ընդունվածների՝ 24 անձնական գործերը:

2. 2023-2024 ուստարում առկա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունված ուսանողների համար լրացվել են S-2 քարտեր, որոնք պայմանագրերի հետ միասին պահվում են անձնական գործերի մեջ:
3. Իրականացվել է ուսանողների անձնական գործերի փաստաթղթաշրջանառություն,
4. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական ապարատի, ուսումնաօժանդակ վարչատնտեսական աշխատողների, ուսանողների (զինակոչիկ և զինապարտ) ամրագրում,
5. Ինստիտուտի շրջանավարտներին դիպլոմների հանձնում,
6. զինակոչիկ և զինապարտ ուսանողների ամրագրում՝ ըստ տարածքային ստորաբաժանումների,
7. ուսանողներին, դիմորդներին տրվել են տեղեկանքներ՝ տարածքային ստորաբաժանումներ ներկայացնելու համար,
8. ուսումնառության վերաբերյալ տեղեկանքներ են տրվել շրջանավարտներին՝ տարբեր գերատեսչություններ ներկայացնելու համար,
9. բաժինն իրականացրել է տարբեր գերատեսչություններից ստացված դիպլոմների իսկության վերաբերյալ հարցումների պատասխաններ,
10. ուսանողների վերականգնվելու դեպքում պահանջվել և ստուգվել են բոլոր փաստաթղթերը,
11. բաժնում են համարակալվել և գրանցվել ավարտական դիպլոմներն ու դրանց հավելվածները,
12. դիպլոմների ստացման և հանձնման վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն է ներկայացվել համապատասխան հաշվետվություն:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2.
## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ և ԶԱՐԳԱՑՈՒՄ

**Ռազմավարական նպատակով նախատեսված են հետևյալ խնդիրները.**

1. Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեությանը խթանող մեխանիզմներ,
2. Նպաստել ուսանողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնությունների զարգացմանը,
3. Սահմանել ՀՖԿՍՊԻ–ի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունները, նպատակները և դրանց հասնելու ճանապարհային քարտեզը,
4. Նպաստել ՀՖԿՍՊԻ–ի գիտական հետազոտությունների արդյունքների կիրառելիության բարձրացմանը և առևտրայնացմանը,
5. Ստեղծել ոլորտային գերազանցության լաբորատորիաներ՝ SPIN–off–երի ստեղծման ակնկալիքով,
6. Ապահովել գիտահետազոտական մտքի միջազգայնացում և համատեղ ծրագրերի մշակում:

Վերջին ժամանակահատվածում Ինստիտուտում իրականացվել են լայնածավալ կառուցվածքային–կազմակերպչական և կադրային փոփոխություններ, որոնք նպաստել են բուհի գործունեության կատարելագործմանը:

Բուհի Գիտխորհրդում զեկուցվել և ամփոփվել են 2018-2022 թթ. համաամբիոնային ԳՀ թեմաները և հաստատվել են ամբիոնների նոր՝ 2022–2025 թթ. ԳՀ թեմաները:

Կազմվել է պլան–ժամանակացույց՝ քննարկելու 2022–2025 թթ. ամբիոնների ԳՀ թեմաների կատարման ընթացքը:

**Գիտամեթոդական բաժնի նպատակն է՝** համակարգել Ինստիտուտի գիտական գործունեության աշխատանքները, նպաստել գիտական ներուժի բացահայտմանն ու կատարելագործմանը:

**Բաժնի խնդիրներն են**.

- բացահայտել Ինստիտուտի գիտական ներուժը,
- երիտասարդության շրջանում խթանել գիտության զարգացումը,
- ուսումնասիրել արդի գիտության ոլորտային ուղղությունները,
- աջակցել դրամաշնորհային ծրագրերի կազմմանն ու իրականացմանը:

Գիտամեթոդական բաժինը 2023-2024 ուստարում իրականացրել է հետևյալ գործառույթները.

- գիտական հետազոտությունների ուղղությունների մշակում,
- Ինստիտուտի տարեկան գիտաժողովի ծրագրի կազմում, աշխատանքների համակարգում,
- ներբուհական, հանրապետական, միջազգային գիտահետազոտական թեմաների ուսումնասիրություն,
- Ինստիտուտի երիտասարդ դասախոսների, ասպիրանտների հետ սեմինարների, քննարկումների կազմակերպում և անցկացում,
- գրախոսությունների աշխատանքների համակարգում,

- գիտական աշխատանքների ներբուհական մրցույթների անցկացում,
- բաժնի գործունեությանը վերաբերող ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերի կազմում և համապատասխան մարմնի հաստատմանը ներկայացնում,
- բաժնի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության կազմում,
- գիտական դրամաշնորհ տրամադրող կազմակերպությունների հետ աշխատանքների իրականացում, նորարարական գիտահետազոտական ծրագրերի ներգրավում,
- բաժնին ուղղված Ինստիտուտի ռեկտորի հրամանների, գրավոր և բանավոր հանձնարարականների, խորհրդի որոշումների կատարում:

2023-2024 ուստարում պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվել են գիտական սեմինարներ. կազմվել է համապատասխան ծրագիր և ժամանակացույց, որը ներկայացված է ստորև (տես՝ աղյուսակ 15): Սակայն հարգելի պատճառով 4 բանախոսներ ելույթ չեն ունեցել:

*Աղյուսակ 15*

**ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ**
**ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| № | Դասախոսի ազգանուն, անուն, հայրանուն | Դասախոսության թեմա | Ժամկետ |
|---|---|---|---|
| **2021–2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ** | | | |
| 1 | Խիթարյան Դ. Ս.<br>ռեկտոր, մ.գ.թ., պրոֆեսոր, | Բուհի հետագա զարգացման հեռանկարները | 27 հունվարի, 2022 թ. |
| 2 | Ստեփանյան Լ. Ս.<br>ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կ.գ.թ., դոցենտ | Ուսումնադաստիարակչական և գիտական գործընթացի կատարելագործման ուղիները | 3 մարտի, 2022 թ. |
| 3. | Ղազարյան Ֆ. Գ.<br>Գիտահամակարգող բաժնի ղեկավար, մ.գ.դ., պրոֆեսոր | Ուսուցումը ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության համակարգում | 31 մարտի, 2022 թ. |
| 4 | Հակոբյան Ե. Ս.<br>մ.գ. դ., պրոֆեսոր | Շարժումների կուլտուրայի հիմնախնդիրը և իրականացման ուղիները | 28 ապրիլի, 2022 թ. |
| 5. | Բաբայան Հ. Ա.<br>հոգ. գիտ. թեկ., պրոֆեսոր | Հոգեբանության դերը սպորտի մասնագետների պատրաստության գործում | 26 մայիսի, 2022 թ. |
| **2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ** | | | |
| 1 | Ստեփանյան Լ. Ս.<br>ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կ.գ.թ., դոցենտ | Գիտական մտքի զարգացման հիմնական միտումները | 7 հոկտեմբերի, 2022 թ. |

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Խիթարյան Դ. Ս.<br>ռեկտոր, մ.գ.թ., պրոֆեսոր, | Սպորտի զարգացման հեռանկարները Հայաստանում | 17 նոյեմբերի, 2022 թ. |
| 3. | Ղազարյան Ֆ. Գ.<br>Գիտամեթոդական բաժնի ղեկավար,<br>մ. գ. դ., պրոֆեսոր | Բեռնվածության տեսության և պրակտիկայի մանկավարժական հիմունքները ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության գործընթացում | 30 նոյեմբերի, 2022 թ. |
| 4 | Նուշիկյան Ա. Ռ.<br>արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր | Միջազգայնացումը՝ որպես ժամանակակից բարձրագույն ուսումնական հաստատության զարգացման առանցքային գործոն | 9 դեկտեմբերի, 2022 թ. |
| 5. | Ավագիմյան Վ. Բ.<br>Իրավական ապահովման բաժնի ղեկավար | Օրենսդրության գործընթացը ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում | 24 հունվարի, 2023 թ. |
| 6 | Մուրադյան Գ. Ա.<br>Որակի ապահովման բաժնի ղեկավար | Ուսուցման և գնահատման արդյունավետ մեթոդներ | 7 փետրվարի, 2023 թ. |
| 7 | Չատինյան Ա. Ա.<br>գիտական քարտուղար,<br>մ.գ.դ., պրոֆեսոր | Գիտական հետազոտությունների պլանավորման և իրականացման տեխնոլոգիան | 24 փետրվարի, 2023 թ. |
| 8 | Հակոբյան Ե. Ս.<br>մ. գ. դ., պրոֆեսոր | Սպորտային գիտության զարգացման ժամանակակից ուղղությունները | 24 մարտի, 2023 թ. |
| 9 | Պողոսյան Ա. Վ.<br>մ.գ.թ., դոցենտ | Սպորտային ընտրության համակարգի ժամանակակից մոտեցումները | 26 ապրիլի, 2023 թ. |
| **2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ** | | | |
| 1. | **Մուրադյան Գ. Ա.**<br>Որակի ապահովման բաժնի ղեկավար | Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոտեցումները | 30.10.2023 թ. |
| 2. | **Բաբայան Հ. Ա.**<br>Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, հ.գ.թ., պրոֆեսոր | Օլիմպիզմ. ՀՍՕԱ–ի մասնակցությունը ՄՕԱ–ի նստաշրջաններին | 01.11.2023 թ. |
| 3. | **Խաչատրյան Հ. Գ.**<br>Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դասախոս | Թվային մենեջմենտը սպորտում | 28.11.2023 թ. |
| 4. | **Աբովյան Վ. Ա.**<br>ԱՏՍՏԿ ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ | Առողջության և ռիսկի գործոնները | 01.12.2023 թ. |
| 5. | **Պետրոսյան Տ. Ռ.**<br>Ֆիզիկական վերականգնման ամբիոն, կ.գ.թ., դոցենտ | Ժամանակակից գիտության տեխնոլոգիաների կիրառությունը սպորտային գիտության բնագավառում | 18.12.2023 թ. |

## ԱՄԲԻՈՆՆԵՐԻ ԳՀ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 2021-2022 ՈՒՍՏԱՐԻ

| N | Ամբիոն | Տեղա-կան հրատ. | Միջազ. հրատ. Sco-pus | Մենագր., ձեռնարկ | Գիտաժ. մասն. | Վերա-պատ րաստում-ներ | Դրամաշ. ծրագրեր | Արտերկ գիտա-ժողով. մասն. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |
| 1. | Ֆիզիկական վերականգնման | 4 | 6, որից՝ **Scopus–3** | 2/ուսմեթ. ձեռն./ | 4 | 5 | 2 | - |
| 2. | Սպորտի կառ. և մարկետինգի | - | - | - | - | - | | |
| 3. | Մարզական լրագրության | 6 | - | 2 / 1 մենագր., 1 մեթ. ձեռ./ | 3 | 7 | 1 | - |
| 4. | Սպորտային տուրիզմի և փրկ.գործի | 1 | 1 | 1/ուսմեթ. ձեռն./ | - | - | - | - |
| 5. | Սպորտի մանկ. և հոգեբան. | 16 | 2 | 2 / 1 մենագր., 1 մեթ. ձեռ./ | 3 | 5 | - | - |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |
| | Ըմբշամ. և արևելյան մարզաձևերի | 3 | 1 | 1 մենագր. | 1 | - | 1 | - |
| | Ֆուտբոլի | 7 | 2 | - | - | - | - | - |
| | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամ. | 1 | - | - | - | - | - | - |
| | Մարզախաղերի | 3 | - | 1/ուսմեթ. ձեռն./ | - | - | - | - |
| | Մարմնամարզ., սպորտ. պարերի, գեղ. և շախմատի | 2 | 1 | - | - | - | - | - |
| | Ցիկլիկ մարզաձևերի | 7 | 1 | - | 1 | 3 | - | - |
| | ՖԴՏՄ և ԱՖԿ | 16 | 4 | 1/ուսմեթ. ձեռն./ | *1* | 3 | - | - |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | | | | | | |
| | Հասարակակ. և հումանիտար գիտությունների | 5 | 3 | 2/ուսմեթ. ձեռն./ | 3 | 35 | 1 | - |
| | Բժշկակենսաբ. գիտությունների | 4 | 17 | 1/ուսմեթ. ձեռն./ | 4 | 4 | 1 | - |

## 2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

| N | Ամբիոն | Հանրա-պետա-կան հրատ. | Միջազ. հրատ. Sco-pus | Մենագր., ձեռնարկ | Գիտաժ. մասն. | Վերա-պատ րաստում-ներ | Դրամաշ. ծրագրեր | Արտերկ գիտա-ժողով. մասն. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ֆիզիկական վերականգնման | 13 | 2, որից՝ **Scopus–1** | 2 /1 ուսմեթ. ձեռն., 1 դասա–գիրք/ | 1 | - | - | - |
| 2. | Սպորտի կառավարման և լրագրության | 5 | 12, որից՝ **Scopus–2** | - | - | 51 | 4 | - |
| 3. | Սպորտային տուրիզմի և փրկ.գործի | - | 1 | | 1 | - | - | - |
| 4. | Սպորտի մանկ. և հոգեբան. | 11 | 12, որից՝ **Sco-pus–1,** Web of Science Core Collection–1 | - | 7 | 43 | - | - |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |
| 1 | Ըմբշամ. և արևելյան մարզաձևերի | 6 | - | - | - | 1 | 2 | - |
| 2 | Ֆուտբոլի | 2 | 1 | - | - | - | - | - |
| 3 | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամ. | 2 | - | - | - | - | - | - |
| 4 | Մարզախաղերի | 6 | - | 1/ուսմեթ. ձեռն./ | 3 | - | - | - |
| 5 | Մարմնամարզ., սպորտ. պարերի, գեղ. և շախմատի | 6 | - | 1/ուսմեթ. ձեռն./ | - | - | - | - |
| 6 | Ցիկլիկ մարզաձևերի | 5 | 3 | - | - | - | - | - |
| 7 | ՖԴՏՄ և ԱՖԿ | 5 | 8, որից՝ **Sco-pus–2,** Web of Science Core Collection–4 | - | 4 | 4 | - | - |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | | | | | | |
| | Հասարակակ. և հումանիտար գիտությունների | 15 | 7 | - | 9 | 7 | - | 1 |
| | Բժշկակենսաբ. գիտությունների | 6 | 21, որից՝ **Sco-pus–7,** Web of Science Core Collection–1 | - | 5 | – | 2 | – |

## 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

| N | Ամբիոն | Հանրապետական հրատ. | Միջազգ. հրատ. Sco-Pus, Wos | Մենագրություն, ձեռնարկ | Գիտաժ. մասն. | Վերապատրաստումներ | Դրամաշ. ծրագրեր | Արտերկրի գիտաժողով. մասն. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |
| 1. | Ֆիզիկական վերականգնման | 2 | 5, որից՝ **Sco-pus–1** | - | 3 | 6 | 1 | - |
| 2. | Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոն | - | - | - | 1 | - | - | - |
| 3. | Սպորտային տուրիզմի և փրկ. գործի | 2 | - | - | - | - | - | - |
| 4. | Սպորտի մանկ. և հոգեբան. | 8 (համա-տեղ՝ 1 Հասարա-կագիտ., 1–ՖԴՏ) | - | - | - | - | - | - |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | | | | | | |
| 1 | Ըմբշամ. և արևելյան մարզաձևերի | 4 (համա տեղ՝ 2 Բժշկ.) | - | - | 1 | - | 2 | - |
| 2 | Ֆուտբոլի | - | 1 | - | - | - | - | - |
| 3 | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամ. | - | - | 1 Դասա-գիրք (համա-տեղ՝ ՖԴՏ և մեթ.) | - | - | - | - |
| 4 | Մարզախաղերի | 3 | - | - | - | - | - | - |
| 5 | Մարմնամարզ., սպորտ. պարերի, գեղ. և շախմատի | 6 | 1 **Sco-pus** | ––– | 2 | ––– | ––– | ––– |
| 6 | Ցիկլիկ մարզաձևերի | 7 | 2 | - | 2 | - | - | - |
| 7 | ՖԴՏՄ և ԱՖԿ | 15 (համա տեղ՝ 1՝ Հասարա-կագիտ., 1.՝ Սպորտի մանկ. և հոգ.) | 4, որից՝ **Sco-pus–2,** | 1 Դասա-գիրք (համա տեղ՝ Ծանր., բռնցք...) | 3 | 6 | 1 (Համա տեղ՝ Ըմբշ., Բժշկ.) | 1 |

| ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հասարակագ. և հումանիտար գիտությունների | 8 (համա տեղ՝ 1 ՖԴՏ, 1. Հոգ.) | 7 | 1 | 9 | 7 | - | 1 |
| 2 | Բժշկակենսաբ. գիտությունների | 5 | 8 որից՝ **Sco-pus–3,** | - | 5 | 4 | 1 (Համա տեղ՝ Ըմբշ., ՖԴՏ) | 1 |

**2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՀ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

| N | Ամբիոն | Հանրապետական հրատ. | Միջազգ. հրատ. | Մենագրություն, ձեռնարկ, դասագիրք | Գիտաժ. մասն. | Վերապատրաս-տումներ | Դրամաշ. ծրագրեր | Արտերկրի գիտաժողով. մասն. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ըստ ամբիոնների | 20 | 12, որից՝ **Sco-pus–4** | 2 | 5 | 7 | 4 | 1 |
| 2 | Ըստ թվաքանակի | 17 | 12, որից՝ **Sco-pus–4** | 1 | 5 | 7 | 2 | 1 |

*Աղյուսակ 16*

16–րդ աղյուսակում ներկայացված է նաև բուհի ՊԴԱ կազմի նախորդ տարիների գիտահետազոտական աշխատանքների ամփոփ պատկերը.

| | **2017–2018** | **2018-2019** | **2019-2020** | **2020-2021** | **2021–2022** | **2022–2023** | **2023-2024** |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Հանրա–պետական** | **125** | **94** | **31** | **43** | **75** | **82** | **17** |
| **Միջազ-գային** | **30** | **17** | **17** | **21** | **38, որից՝ Scopus–9 WOS–2** | **67, որից՝ Scopus–13 WOS–6** | 12, որից՝ **Scopus–4** |
| **Ընդամենը** | **155** | **111** | **48** | **64** | **116** | **149** | **29** |

Գիտահետազոտական աշխատանքները խրախուսելու նպատակով՝ **Scopus, Web of Science** ինդեքսավորված շտեմարաններում հոդված տպագրելու համար բուհը ոչ

միայն փոխհատուցել է դասախոսների տպագրական ծախսերը, այլև յուրաքանչյուրին 200.000–ական դրամ հավելավճար է սահմանել: Ընթացիկ ուսումնական տարում ինստիտուտի 7 դասախոսներ իրենց ԳՀ աշխատանքների տպագրման համար և՛ փոխհատուցվել են, և՛ ստացել են հավելավճարներ:

## SCOPUS

Երկու դրամաշնորհային գիտահետազոտական թեմայի կատարումն ընթացքի մեջ է:

Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի, Բժշկակենսաբանական գիտությունների, ՖԴՏ, մեթոդիկայի և ԱՖԿ ամբիոններ.

1. **Ծրագրի անվանում՝**

«Ձյուդոն՝ որպես բուլինգի կանխարգելման մոդել նախակրթական և հանրակրթական հաստատություններում»

**Ժամկետներ՝** 15.10.2021-15.10.2024 թթ.

**Բնույթը՝** փորձարարական, **ոլորտը՝** սպորտ

**Ղեկավար՝** Դավիթ Խիթարյան

**Անդամներ՝** Լուսինե Ստեփանյան, Մխիթար Խաչատրյան, Մեսրոպ Բարբարյան

**ՀՀ բյուջեից ֆինանսավորվող դրամաշնորհ**

Ֆիզիկական վերականգնման ամբիոն

1. **Ծրագրի անվանում՝**

«Էրգոնոմիկ վերլուծության վրա հիմնված մոդելը դաշտային պայմաններում կարող է ապահովել դիմացկունության և շարժողական կատարողականության բարձր մակարդակ»

**Ժամկետներ՝** 01.06.2023–01.06.2024 թթ.

**Բնույթը՝** փորձարարական, ոլորտը՝ վերականգնողական գիտություն

**Ղեկավար՝** Տիգրան Պետրոսյան

**ՀՀ բյուջեից ֆինանսավորվող դրամաշնորհ՝**

«Հայկական ազգային գիտության և կրթության» հիմնադրամ

Հաշվետու ուսումնական տարում ինստիտուտի «Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» N 1(8), 2 (9), 3 (10) պարբերականներում հոդվածներ են տպագրել ինչպես Ինստիտուտի, այնպես էլ այլ բուհերի և կազմակերպությունների աշխատակիցները (տես՝ աղյուսակ 17):

*Աղյուսակ 17*

## «ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

### 2021 ԹՎԱԿԱՆ

| № | ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ | ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿ |
|---|---|---|
| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | |
| **1** | Ֆիզիկական վերականգնման | - |
| **2** | Սպորտի կառավարման և մարկետինգի | - |
| **3** | Մարզական լրագրության | 3 |
| **4** | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի | 1 |
| **5** | Սպորտի մանկկավարժության և հոգեբանության | 10 (որից՝ 1–ը համատեղ+ՖԴՏ) |
| **6** | Հասարակագիտության և հումանիտար գիտությունների | - |
| **7** | Բժշկակենսաբանական գիտությունների | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 15 |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | |
| **1** | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի | 2 |
| **2** | Ֆուտբոլի | 2 |
| **3** | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի | 1 |
| **4** | Մարզախաղերի | 2 |
| **5** | Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի | 2 |
| **6** | Ցիկլիկ մարզաձևերի | 4 |
| **7** | ՖԴՏՄ և ԱՖԿ | 5(+1՝ հոգ.+ՖԴՏ համատեղ) |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 18 |
| **ԱՅԼ ԲՈՒՀԵՐ** | | |
| | ԵՊՀ | 2 |
| | Շիրակի պետական համալսարան | 1 |
| | Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան | 1 |
| | ՀՀ պաշտպանության նախարարություն | 1 |
| | Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց | 1 |
| | Սոֆիայի (Բուլղարիա) Վասիլի Լևսկու անվան ազգային սպորտային ակադեմիա | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **7** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ** | **40** |

## 2022 ԹՎԱԿԱՆ

| ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ | | | |
|---|---|---|---|
| **№** | **ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | Հոդվածների թիվը | Գիտաժողովին զեկուցված աշխ. |
| **1** | Ֆիզիկական վերականգնման | 5 | 2 |
| **2** | Սպորտի կառավարման և մարկետինգի | - | - |
| **3** | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի | - | - |
| **4** | Լրագրության | 2 | 1( համ. ՖԴՏ, Լրագր.) |
| **5** | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | 10 (որից՝ 2–ը համա տեղ) | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 17 | 5 |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
| **1** | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի | 2 | 1 |
| **2** | Ֆուտբոլի | 5 (որից՝ 2–ը համատեղ) | 1 |
| **3** | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի | 1 | 1 |
| **4** | Մարզախաղերի | 5 | 3 |
| **5** | Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի | 3 | 1 |
| **6** | Ցիկլիկ մարզաձևերի | 6 | - |
| **7** | ՖԴՏՄ և ԱՖԿ | 11 (որից՝ 2–ը համատեղ) | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **33** | **8** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **50** | **13** |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | |
| **1** | Հասարակագիտության և հումանիտար գիտությունների | 8 | 1 |
| **2** | Բժշկակենսաբանական գիտությունների | 2 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 10 | 2 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ ՀՖԿՍՊԻ՝** | 60 | 15 |
| **ԱՅԼ ԲՈՒՀԵՐ** | | | |
| **1** | ԵՊՀ | 1 | |
| **2** | Երևանի պետական բժշկական համալսարան | 2 | |
| **3** | Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան | 1 | |

| | | | |
|---|---|---|---|
| **4** | Հայաստանի տնտեսագիտական համալսարան | 1 | |
| **5** | Հայ–Սլավոնական համալսարան | 1 | |
| **6** | Հայաստանում ֆրանսիական համալսարան | ՀՖԿՍՊԻ–ի համատեղ | 1(զեկ.) |
| **7** | Արարատի մարզի միջնակարգ դպրոց, Երևանի N 33 դպրոց, Երևանի N 86 դպրոց | 1 | |
| **8** | ՀՀ աթլետիկայի ֆեդերացիա | 2 | |
| **9** | Ֆիզիոլոգիայի ինստիտուտ | 1 | |
| **10** | Հայաստանի հակադոպինգային գործակալություն | 1 | |
| **11** | Ուկրաինա | 1 | |
| **12** | Վրաստան | 1 | |
| | ՌԴ | 3 | 2 (զեկ.) |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **17** | **3** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ** | **77** | |

## 2023 ԹՎԱԿԱՆ

| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
|---|---|---|---|
| **№** | **ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | Հոդվածների թիվը | Գիտաժողովին զեկուցված աշխ. |
| **1** | Ֆիզիկական վերականգնման | Ընդհ.–3<br>1 (N 1)<br>1 (N 2)<br>1 (N 3) | 2 |
| **2** | Սպորտի կառավարման և մարզական լրագրության | Ընդհ.–1<br>1 (N 1)<br>–(N 2)<br>–(N 3) | 1 |
| **3** | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի | Ընդհ.–1<br>–(N 1)<br>1 (N 2)<br>–(N 3) | 1 |
| **4** | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | Ընդհ.–4<br>2 (N 1)<br>1 (N 2)<br>2 (N 3) | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 9 | 5 |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
| **1** | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի | Ընդհ.–8<br>4 (N 1) | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | 3 (N 2)<br>1 (N 3) | |
| **2** | Ֆուտբոլի | Ընդհ.–1<br>1 (N 1)<br>–(N 2)<br>–(N 3) | – |
| **3** | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի | -- | – |
| **4** | Մարզախաղերի | Ընդհ.–3<br>–(N 1)<br>2 (N 2)<br>1 (N 3) | – |
| **5** | Մարմնամնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի | Ընդհ.–5<br>2 (N 1)<br>1 (N 2)<br>2 (N 3) | 2 |
| **6** | Ցիկլիկ մարզաձևերի | Ընդհ.–6<br>1 (N 1)<br>4 (N 2)<br>1 (N 3) | 2 |
| **7** | ՖԴՏՄ և ԱՖԿ | Ընդհ.–15<br>3 (N 1)<br>6 (N 2)<br>6 (N 3) | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **38** | **6** |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **47** | **11** |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | |
| **1** | Հասարակագ. և հումանիտար գիտությունների | Ընդհ.–**3**<br>– (N 1)<br>1 (N 2)<br>2 (N 3) | - |
| **2** | Բժշկակենսաբանական գիտություն ների | Ընդհ.–**3**<br>–(N 1)<br>2 (N 2)<br>1 (N 3) | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 6 | 2 |
| | **ԸՆԴՀԱՆՈՒՐ՝ ՀՖԿՍՊԻ՝** | | |
| Ընդհանուր՝ ըստ ամբիոնների՝ **56 հոդված**, գիտաժող. **զեկուցում՝ 13:**<br>**2023 թ. N 1, 2, 3 պարբերականներում տպագրվել է 52 հոդված, որից՝ 32 հայերեն (61 %) , 12 անգլերեն (23 %), 8 ռուսերեն (15,3 %),** օտարալեզու 20 հոդված (38,5 %): | | | |




Ծանոթություն:

- **«Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» N 1 (8) պարբերականում <u>տպագրվել է 18 հոդված</u>, որից՝** հայերեն՝ 11 (61,1 %), ռուսերեն՝ 3 (16,6 %), անգլերեն՝ 4 (22,2 %), *<u>օտարալեզու 7 հոդված (38,8 %),</u>*
  - *<u>ՀՖԿՍՊԻ-ից</u>՝* <u>14 հոդված</u> (77,7%) (որից համատեղ՝ 1-ը՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ),
  - *<u>Այլ բուհերից՝ 4 հոդված</u>* (22%) (որից՝ ՌԴ՝ 3 (1-ը՝ Բելառուսի հետ համատեղ), Հայ-ռուսական համալսարան՝ 1 (համատեղ՝ ԵՊՀ))
- **N 2 (9) պարբերականում *<u>տպագրվել է՝ 20 հոդված</u>*,** որից՝
  - հայերեն՝ 14 հոդված (70 %), անգլերեն՝ 4 (20 %), ռուսերեն՝ 2 (10 %), *<u>օտարալեզու 6 հոդված (30 %),</u>*
  - *<u>ՀՖԿՍՊԻ-ից՝ 17 հոդված (85 %),</u>*
  - *<u>Այլ բուհերից, կազմակերպությունից, դպրոցից՝ 3</u>* (15 %), (1. ՀՀ աթլետիկայի ֆեդերացիա, 2. Երևանի պետական համալսարան, 3. Հայ-ռուսական համալսարան),
- **N 3 (10) պարբերականում *<u>տպագրվել է՝ 14 հոդված,</u>*** որից՝
  - **հայերեն՝ 7 հոդված (50 %), անգլերեն՝ 4 (29 %), ռուսերեն՝ 3 (21 %),** *<u>օտարալեզու 7 հոդված (50 %),</u>*

- **Ընդհանուր՝ 2023-ին տպագրվել է 52 հոդված, որից՝ 32 հայերեն (61 %), 12 անգլերեն (23 %), 8 ռուսերեն (15,3 %),** *<u>օտարալեզու 20 հոդված (38,5 %):</u>*

18-րդ աղյուսակում ներկայացվում է ՀՖԿՍՊԻ-ի «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական տարեգրքի և գիտաժողովի ամփոփ տեղեկագիրը:

*Աղյուսակ 18*

**«ՍՊՈՐՏ, ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՏԱՐԵԳՐՔԻ ԵՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ.**
**2022-2023 ՈՒՍՏԱՐԻ**

| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
|---|---|---|---|
| **№** | **ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | Հոդվածների թիվը | Գիտաժողովին զեկուցված աշխ. |
| **1** | Ֆիզիկական վերականգնման | 1 | |
| **2** | Սպորտի կառավարման և մարքետինգի | | |
| **3** | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի | 1 | 1 |
| **4** | Մարզական լրագրության | 3 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| **5** | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 5 | 2 |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
| **1** | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի | 4 | 1 |
| **2** | Ֆուտբոլի | 4 | |
| **3** | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի | | |
| **4** | Մարզախաղերի | 1 | 1 |
| **5** | Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի | 4 | 2 |
| **6** | Ցիկլիկ մարզաձևերի | | |
| **7** | ՖԴՏՄ և ԱՖԿ | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13** | **4** |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | |
| **1** | Հասարակագիտության և հումանիտար գիտությունների | 2 | 1 |
| **2** | Բժշկակենսաբանական գիտությունների | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **19** | **7** |

**2023-2024 ՈՒՍՏԱՐԻ**

| **ԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ, ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
|---|---|---|---|
| **№** | **ԱՄԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | Հոդվածների թիվը | Գիտաժողովին զեկուցված աշխ. |
| **1** | Ֆիզիկական վերականգնման | 4 | 4 |
| **2** | Սպորտի կառավարման և մարզական լրագրության | - | - |
| **3** | Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի | 1 | 1 |
| **4** | Սպորտի մանկավարժության և հոգեբանության | 2 /որից 1–ը Սպ. տուրիզմի հետ/ | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | |
| **ՄԱՐԶՉԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | | |
| **1** | Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի | 1 | 1 |
| **2** | Ֆուտբոլի | - | - |
| **3** | Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի | - | - |
| **4** | Մարզախաղերի | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| **5** | Մարմնամարզության, սպորտային պարերի, գեղասահքի և շախմատի | - | - |
| **6** | Ցիկլիկ մարզաձևերի | - | - |
| **7** | ՖԴՏՄ և ԱՖԿ | - | - |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | |
| **ՀԱՄԱԲՈՒՀԱԿԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐ** | | | |
| **1** | Հասարակագիտության և հումանիտար գիտությունների | - | 1 |
| **2** | Բժշկակենսաբանական գիտությունների | - | – |
| **ԱՅԼ ԲՈՒՀԵՐ** | | | |
| **1** | Բելառուս, Մինսկ | 1 | - |
| Ընդհանուր՝ ՀՖԿՍՊԻ՝ 9 հոդված /ըստ ամբիոնների՝ 10/, 9 զեկուցում | | | |

«Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով ուսանողական տարեգրքի հոդվածներն ըստ նախորդ տարիների՝ 2021 թ.՝ 14 հոդված, 2022 թ.՝ 19, 2023 թ.՝ 9:

«Սպորտ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը հիմնված է ինստիտուտի ռազմավարության մեջ ներառված գիտահետազոտական առաջնահերթությունների, ինչպես նաև ինստիտուցիոնալ կամ արտաքին ֆինանսավորմամբ կենտրոնում իրականացվող հետազոտական ծրագրերի ժամանակացույցի վրա: Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքները ընթանում են ըստ ներկայացվող հայտերի՝ ընտրելով համապատասխան մեթոդիկաներ և սարքավորումներ: «Սպորտ ԿԱԲ»-ի գործառույթների մեջ է մտնում նաև ուսանողների, մագիստրանտների և ասպիրանտների մեթոդական և հետազոտական աշխատանքների կազմակերպման գործընթացը, ապահովելով այդ աշխատանքների անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը:

Կենտրոնում իրականացվում է մարզիկների ֆունկցիոնալ թեստավորում, որը ներառում է սիրտանոթային և շնչառական ֆունկցիաների, մարմնակազմության և հենաշարժիչ համակարգի կենսամեխանիկական ցուցանիշների գնահատում: Կենտրոնի գիտատեխնիկական միջոցներով իրականացվում են նաև հետազոտական աշխատանքներ սպորտային և վերականգնողական գիտության բնագավառում:

Կենտրոնի ղեկավարի անմիջական համակարգմամբ հետազոտական աշխատանքներում ներգրավված են երկու կենսաինժեներներ (տեխնիկներ), մեկական գիտաշխատող և բուժքույր: Գիտահետազոտական և ֆունկցիոնալ գնահատման աշխատանքներին կենտրոնի աշխատակիցները մասնակցում են թիմային սկզբունքով, անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներում ներառելով նաև հետազոտողներ ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմից, ինչպես նաև մագիստրանտների:

Ուսումնական տարվա ընթացքում կենտրոնը իրականացրել է նախապես մշակված հետազոտական ծրագրեր, արտաքին ֆինանսավորման նպատակով դիմել է երկու դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև երիտասարդ հետազոտողների և ասպիրանտների համար նախատեսված դրամաշնորհային ծրագրերի: Ընթացիկ տարում դրական պատասխան է ստացվել միայն Հայկական ազգային կրթության և գիտության հիմնադրամից, որի ֆինանսավորմամբ կենտրոնում իրականացվում է հետազոտական ծրագիր վերականգնողական գիտության ոլորտում («Էրգոնոմիկ մոդելների վրա հիմնված վերլուծություն, որը կարող է ապահովել բարձր դիմացկունությամբ կատարողունակություն դաշտային պայմաններում»): Այս ծրագրի շրջանակներում հետազոտական կենտրոնը համագործակցում է «Ուիգմոր» կլինիկայում տեղակայված քայլքի հետազոտման լաբորատորիայի հետ, որի շարժումների գրանցման համակարգը ունի նաև ուժային հարթակ և էլեկտրոմիոգրաֆիկ հետազոտության հնարավորություն:

«Սպորտ ԿԱԲ»-ի աշխատակիցների թիմը իրականացրել է մեկ այլ հետազոտական ծրագիր, համագործակցելով լողի ֆեդերացիայի հետ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում հետազոտվել են 26 լողորդներ: Ծրագրի միջոցով փորձ է արվել պարզել բարձրակարգ լողորդների ֆունկցիոնալ վիճակը նախամեկնարկային փուլում: Միաժամանակ, ծրագրի նպատակն էր խորհրդատվություն տրամադրել ֆեդերացիայի մարզիչներին:

«Սպորտ ԿԱԲ»-ի աշխատակիցների կողմից ամփոփվել են «Շնչառական համավարակի ազդեցությունը պատանի ձյուդոիստների ֆունկցիոնալ գնահատման և կատարողականության վրա» ծրագրի արդյունքները, պատրաստվել է գիտական հոդված, որը հրապարակվելու է ազդեցության գործակից ունեցող միջազգային պարբերականում:

«Ֆիզիկական վերականգնման» և «Բժշկակենսաբանական գիտությունների» ամբիոնների հետ համատեղ իրականացվել են երեք հետազոտական ծրագրեր, որոնցից մեկը շարունակական է: «Սպորտ ԿԱԲ»-ի աշխատակիցները տրամադրել են մեթոդական օժանդակություն և մասնակցել են ասպիրանտական և մագիստրոսական հետազոտական աշխատանքների իրականացման գործընթացում:

«Սպորտ ԿԱԲ»-ը ընդլայնել է նաև իր միջբուհական և միջազգային կապերը: Կենտրոնի ղեկավարն անցած ուսումնական տարում մասնակցել է Եվրոմիության տարբեր ծրագրերի կողմից իրականացված կոնֆերանսների՝ Իտալիայում և Բուլղարիայում, որոնց նպատակը գործընկերային կապերի հաստատումն է:

Կենտրոնի գործունեության արդյունքները ամփոփվել են տարբեր գիտական աշխատություններում: Դրանցից երկուսը (ներկայացված են ստորև) արդեն տպագրվել են միջազգային վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում, իսկ մեկ աշխատանք զեկուցվել է միջազգային գիտաժողովում:

1. Khitaryan D., Stepanyan L., Lalayan G. (2023) Exploring age-related psychophysiological patterns in bullying behaviors: An investigation of adolescent judokas. Journal of Physical Education and Sport, 23 (10), 2842 - 2852 (Տպագրված Նոյեմբեր 2023, պարբերականը Scopus շտեմարանի Q3 քառորդում է):
2. Tigran Petrosyan, Narek Makaryan, Hripsime Hovhannisyan, Reyhaneh Kamrany, Hasmik Mkrtchyan. Monitoring therapy outcomes in idiopathic scoliosis patients: case series and a proposed model Journal of Physical Education and Sport ® (JPES), Vol. 24 (issue 1), Art 27, pp. 219 - 228, January 2024 online ISSN: 2247 - 806X (Տպագրված Հունվար 2024, պարբերականը Scopus շտեմարանի Q3 քառորդում է):

Միջազգային ամսագրերում տպագրության են ներկայացվել կենտրոնում իրականացված աշխատանքների արդյունքները ներկայացնող ևս երկու հոդված:

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3.
# ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՐԱՑՈՒՄ

## Աշխատակիցների համալրման գործընթաց

Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժինը (այսուհետ՝ ՄՌԿԸ բաժին) հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից, որն իր գործունեությամբ անմիջապես հաշվետու է Ինստիտուտի ռեկտորին:

Բաժնի աշխատանքները համակարգում է բաժնի ղեկավարը: Բաժինը բաղկացած է 2 գլխավոր մասնագետից:

ՄՌԿԸ բաժին իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Ինստիտուտի կանոնադրությանը, ՄՌԿԸ բաժնի կանոնակարգին և Ինստիտուտի ներքին իրավական ակտերին համապատասխան:

ՄՌԿԸ բաժնի սույն հաշվետվությունը ներկայացվում է ըստ 2023-2024 ուսումնական տարում կատարված աշխատանքների:

## Ներքին իրավական ակտերի մշակում

ՄՌԿ և ընդհանուր բաժինն իր մասնակցությունն է ունեցել մի շարք ներքին իրավական ակտերի մշակման գործընթացներին, մասնավորապես.

Հաշվետու ժամանակաշրջանում ՄՌԿԸ բաժնի գլխավոր մասնագետների կողմից 2024 թվականին մայիսի 24-ին Ինստիտուտի աշխատակիցների շրջանակում իրականացվել է Mulberry 2.0 համակարգի վերապատրաստում՝ փաստաթղթաշարժի ճիշտ կազմակերպման նպատակով:

## Աշխատակիցների համալրման գործընթաց

ՄՌԿԸ բաժինը, կազմակերպչական առումով, իր մասնակցությունն է ունեցել Ինստիտուտի թափուր հաստիքների համալրման գործընթացում:

ՄՌԿԸ բաժնի կողմից գրված զեկուցագրերի հիման վրա և Ինստիտուտի ռեկտորի հանձնարարությամբ ՄՌԿԸ բաժնի կողմից հայտարարված մրցույթների և դրանցով կազմված հայտարարությունների թիվը 2023-2024 ուսումնական տարում 17-ն է:

Հայտարարված մրցույթներով ստացվել է ընդհանուր 100 ինքնակենսագրական: Վերջիններս ուսումնասիրվելուց հետո, ըստ ենթակայության ուղարկվել են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին, որոնց առաջարկությամբ թեկնածուների մի մասը հրավիրվել է մրցույթի փուլերին:

2023-2024 ուսումնական տարում պրոֆեսորդասախոսական անձնակազմի համալրումն իրականացվել է ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական, գիտական և վարչական անձնակազմերի թափուր պաշտոնների համալրման ընթացակարգ»-ով սահմանված պահաջներին համապատասխան:

ՄՌԿԸ բաժնի ղեկավարն իր մասնակցությունն ունեցել է 12 թեկնածուների հարցազրույցներին:

Հայտարարված մրցույթներով ՄՌԿԸ բաժնի կողմից կազմակերպվել և անցկացվել է վարչական հաստքիների համար դիմած թեկնածուներից 12-ի օտար լեզվի և համակարգչային գիտելիքների իմացության թեստավորում:

ՄՌԿԸ բաժնի ղեկավարը համապատասխան հանձնաժողովների կազմում իր մասնակցությունն է ունեցել ինչպես 12 թեկնածուների թեստերի ստուգման աշխատանքներին, այնպես էլ բանավոր հարցազրույցներին:

Վերը թվարկված բոլոր մրցույթներն ամփոփվել են համապատասխան արձանագրությունների կազմամբ, որոնց թիվը 17 է:

## Ընթացիկ գործառույթներ

### Հաստիքացուցակ

Հաստիքացուցակների վերանայման արդյունքում 2024 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ Ինստիտուտի ընդհանուր հաստիքների թիվը 325 է, որից վարչական հաստիքների թիվը՝ 159, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հաստիքների թիվը՝ 166:

2024 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ Ինստիտուտի աշխատողների թիվը 338 է, որից 145–ը՝ վարչական աշխատողներ, իսկ 193–ը՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողներ:

Ներքին համատեղությամբ աշխատողների թիվը 2023-2024 ուսումնական տարում եղել է 15:

### ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ




| | Մինչև30 տարեկան | 30-60 տարեկան | 60 տարեկանից բարձր |
|---|---|---|---|
| 2022-2023 ուստարի | 8.43% | 68.07% | 23.49% |
| 2023-2024 ուստարի | 3.62% | 70.98% | 25.39% |

### Աշխատողների շարժ

Ինստիտուտում վարչական և պրոֆեսորադասախոսական համակազմի համալրման և աշխատանքից ազատման գործընթացն իրականացվել է ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին և Ինստիտուտի ներքին իրավական փաստաթղթերին համապատասխան:

2023-2024 ուսումնական տարում ընդունվել է 63, աշխատանքից ազատվել է 43 աշխատող, որից 22-ը սեփական դիմումի համաձայն, 18-ը՝ ծանուցումով, 3-ը մահվան ելքով:

## ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ




| | Ընդունված աշխատակիցներ |
|---|---|
| 2021-2022 ուստարի | 24 |
| 2022-2023 ուստարի | 79 |
| 2023-2024 ուստարի | 43 |

## ԱԶԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ




| | Անձնական դիմումի համաձայն | Ծանուցումով | Մահվան պատճառով |
|---|---|---|---|
| 2021-2022 ուստարի | 20 | 28 | 2 |
| 2022-2023 ուստարի | 34 | 37 | 2 |
| 2023-2024 ուստարի | 22 | 18 | 3 |

2023-2024 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժնի կողմից կազմվել է ուղարկվել է 146 ծանուցում՝ կապված աշխատանքային պայմանգրերի լուծման, աշխատանքային պայմանագրերում փոփոխությունների հետ:

Կազմվել է 63 նոր աշխատանքային պայմանագիր և գործող աշխատանքային պայմանագրերը փոփոխող և լուծող 176 համաձայնագիր:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմից՝

1) 18 հոգի ունեն պրոֆեսորի գիտական կոչում, որոնցից 9-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 4-ը՝ դոկտորի գիտական աստիճան,
2) 61 հոգի ունեն դոցենտի գիտական կոչում, որոնցից 41-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան,
3) 9 հոգի ունեն գիտությունների թեկնածուի աստիճան:

## ՀՖԿՍՊԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՇՎԵԿՇԻՌՆ ԸՍՏ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ




ՄՌԿԸ բաժնի կողմից կազմվում են՝

1) Ռեկտորի կողմից տրվող անհատական իրավական ակտերի նախագծերը, որոնք հիմնականում վերաբերում են աշխատողներին արձակուրդ տրամադրելուն, աշխատողներին պաշտոնի նշանակելուն, այլ պաշտոնի փոխադրելուն, պաշտոնից ազատելուն, գործուղելուն, խրախուսելուն, կարգապահական տույժ կիրառելուն և այլն,
2) Ռեկտորի կողմից տրվող ներքին իրավական ակտերի նախագծերը, որոնք հիմնականում վերաբերում են աշխատանքային խմբեր, հանձնաժողովներ ստեղծելուն, ներքին իրավական փաստաթղթեր հաստատելուն և այլն:

2023-2024 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժնի կողմից պատրաստված անհատական իրավական ակտերի թիվը կազմել է 746, ներքին (լոկալ) իրավական ակտերինը՝ 208:

ՄՌԿԸ բաժնի կողմից ապահովվում է ռեկտորի կողմից ընդունված ներքին և անհատական իրավական ակտերի ծանուցումն ըստ առնչության:

Ինստիտուտի ռեկտորի կողմից ընդունված բոլոր տեսակի հրամաններով ՄՌԿԸ բաժնի կողմից վարվում են առանձին հրամանագրքեր:

## Փաստաթղթաշրջանառության կազմակերպում

ՄՌԿԸ բաժինն ապահովում է Ինստիտուտի փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը, փաստաթղթերի մուտքագրումը, ելքագրումը, բլանկավորումը, համարակալումը, առաքման աշխատանքների կազմակերպումը, ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակով, որն իր մեջ ներառում է ծրարավորում, ծանուցման հետադարձ թղթերի լրացում, ինչպես նաև փաստաթղթերի թղթային տարբերակների պահպանություն:

Հաշվետու ժամանակահատվածում մուտքային գրությունների ընդհանուր թիվը եղել է 2004: Ինստիտուտի կողմից ելքագրված գրությունների թիվը կազմել է 1252:

Մուտքագրված և ելքագրված գրությունների հաշվառումն իրականացվել է համապատասխան մատյաններով:

ՄՌԿԸ բաժնի կողմից վարվել է փոստային ծառայությունների Envelope ծրագիրը: Ելքային գրություններին ներկայացվող պահանջների տեսանկյունից ուսումնասիրվել են բաժին ներկայացված ելքային բոլոր գրությունների նախագծերը:

Ինստիտուտի աշխատակիցների մասին անձնական տվյալները բաժնի աշխատակիցների կողմից մուտքագրվել են EMIS.am տվյալների շտեմարանում, որն իրենից ներկայացնում է աշխատակիցների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային բազա: Այս գործընթացը կրում է շարունակական բնույթ՝ կախված աշխատակիցների շարժից:

ՄՌԿԸ բաժինը վարել է նաև Ինստիտուտի info@sportedu.am էլեկտրոնային հասցեն:

## Հաշվետվություններ

2023-2024 ուսումնական տարում ՄՌԿԸ բաժինը ներկայացրել է թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի, տարիքի, աշխատատեղերի շարժի մասին, պրոֆեսորադասախոսական կազմի, որակավորման, մասնագիտության, ստաժի վերաբերյալ վիճակագրական հաշվետվություններ:

## Վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿԸ բաժնի կողմից կնքվել է 29 վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրեր, դրանցից բխող 29 հանձնման-ընդունման ակտ և 24 գործող պայմանագրերը փոփոխող համաձայնագրեր և վերջիններից բխող 24 հանձնման-ընդունման ակտ:

Վճարովի ծառայությունների մատուցման պայմանագրերը կնքվել է քննական առարկայական հանձնաժողովների անդամների հետ, ուսուցիչների վերապատրաստում և լրացուցիչ շարունակական կրթության ծրագրերում ընդգրծված

Ինստիտուտի աշխատողների և Ինստիտուտին կարճաժամկետ ծառայություններ մատուցած անձանց հետ:

### Գրություններ, տեղեկանքներ

ՄՌԿԸ բաժնի կողմից զեկուցագրերի հիման վրա հանձնարարականների կատարումը, գրությունների պատրաստումը, աշխատողներին տեղեկանքների տրամադրումը մշտական գործընթաց է:

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿԸ բաժնի կողմից աշխատողներին տրամադրվել է 436 տեղեկանք:

### Մասնակցություն հանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ՄՌԿԸ բաժինը մասնակցել է մի շարք հանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքներին, մասնավորապես՝

1) ամբիոններում դասախոսական համակազմի համալրմանն առնչվող աշխատանքային հանդիպումներին,
2) կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների հստակեցման հետ կապված աշխատանքային հանդիպումներին,
3) Ռեկտորատի նիստերին,
4) աշխատանքային տարբեր խորհրդակցությունների,
5) «Emis տվյալների համակարգ»-ի վարման աշխատանքներին:

### Այլ գործառույթներ

ՄՌԿԸ բաժնի կողմից իրականացվել են նաև խորհրդատվություններ աշխատանքային օրենսդրությանը վերաբերելի հարցերով, տրվել են տարաբնույթ փաստաթղթերի հետ կապված պարզաբանումներ:

Mulberry էլեկտրոնային համակարգի կիրառման վերաբերյալ պարզաբանումներն ու ծրագիրը վարելուն օժանդակելը պարբերական բնույթ են կրել ողջ տարվա ընթացքում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի պարտադիր բժշկական զննությունը (Ֆլյուրոգրաֆիա հետազոտություն և թերապևտի զննություն) տարին մեկ անգամ իրականացվող պարտադիր պահանջ է, որի կազմակերպչական աշխատանքները համակարգվել են ՄՌԿԸ բաժնի կողմից:

Հիմնադրամի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անցաքարտերի բաժանման գործընթացը համակարգվում է ՄՌԿԸ բաժնի կողմից, յուրաքանչյոր ընդունվող և ազատվող աշխատակցի հետ կազմակերպվում է անցաքարտերի տրամադրման և հետվրադարձի գործընթացը:

Աշխատակիցներին անցագրային քարտերի բաժանման գործընթացը մշտական բնույթ է կրում:

## ՀՖԿՍՊԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԴ ԿԱԶՄՈՒՄ և ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Պրոֆեսորադասախոսական | 62.38% | 36.92% | 39.92% |
| Վարչական | 23.65% | 23.65% | 25.75% |

## ԳՈՐԾԱՏՈՒ ՈՒԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՖԿՍՊԻ ՄԿԾ-ՈՒՄ

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4.
## ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Նախատեսված է զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանները, բազմազանել ինստիտուտի ֆինանսական աղբյուրները և դրանք նպատակաուղղել բուհի զարգացման կարիքներին:

Դիտարկվող ժամանակահատվածում բուհում իրականացվել է տարեկան պարտադիր աուդիտը, իրականացվել է գույքագրում, ապահովվել է 2024թ. EXPO-ի մասնակցության համար անհրաժեշտ տաղավարով ապահովելու պայմանագրի կնքումը, ինչպես նաև այլ բոլոր անհրաժեշտ պարագաների ձեռքբերման գործընթացը: Վերանորոգման և շինարարական աշխատանքներ դեռևս փաստացի չեն իրականացվել, գտնվում են նախապատրաստական փուլում: Գնումների մասին ՀՀ օրենքով նախատեսված փաստաթղթերի կազմումը հասցվեւմ է ավարտին, որից անմիջապես հետո կիրականացվեն համապատասխան մրցույթները և հաղթող կազմակերպությունների հետ կկնքվեն պայմանագրեր՝ ՀՖԿՍՊԻ-ի տարբեր մասնաշենքերում նախատեսված շինարարական աշխատանքները սկսելու համար:

2024թ. բյուջեի ծախսման հիմնական ուղղություններն ունեն հետևյալ բաշխումը՝

- 76%-ը կազմում են վճարվող աշխատավարձերը և դրան հավասարեցված ծախսերը՝ ներառյալ հարկերը,
- 3.6%-ը կազմում են բուհի կրթության որակի բարելավմանն ուղղված ծախսեր,
- 0.6%-ը կազմում են գիտահետազոտական գործունեությանն ուղղված ծախսերը,
- 2.3%-ը կազմում են գործուղումները և վերապատրաստումները,
- 3.8%-ը կազմում են կապիտալ և ընթացիկ շինարարական վերանորոգման ծախսերը,
- 0.9%-ը կազմում են համակարգչային տեխնիկա և սարքավորումներ ձեռքբերելու ծախսերը
- 8.4%-ը՝ կազմում են վարչական ծախսերը,
- 1.1%-ը՝ միջազգային կապերի ամրապնդման և միջազգայնացման գործընթացի ընդլայնման ծախսերը,
- 2.5%-ը կազմում են վճարվող կրթաթոշակները,
- 0.8%-ը՝ կազմում են հարկերը և տուրքերը/ բացառությամբ եկամտահարկի և սոց. վճարների/:




Կայուն հենքի վրա է դրվել կրթության որակի բարելավմանն ուղղված գործընթացների ֆինանսավորումը, բուհի միջազգայնացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորումը, հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներն ու նյութատեխնիկական բազայի արդիականացումը, հիմնական միջոցների, սարքավորումների ձեռքբերումը, որոնց նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը: Ընդհանուր միտումն առանձին ուղղություններով ծախսերի ավելացումն է՝ պայմանավորված տվյալ տարվա նպատակադրումներով և առաջնահերթություններով:

Թեև բուհում առկա է կրթական գործընթացի կազմակերպման համար բավարար պայմաններ, սակայն իրականացվող ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ուսումնական ու աշխատանքային միջավայրի շարունակական բարելավումը շարունակում է մնալ ռազմավարական կարևոր նպատակ: Լսարանները դեռևս հարմարեցված չեն ինտերակտիվ մեթոդներ կիրառելու և գործնական դասեր կազմակերպելու համար:

Մարզադահլիճներում առկա մարզական գույքը հին է և մաշված, դահլիճին կից հանդերձարանները փոքր են, կահավորված չեն անհրաժեշտ գույքով և ունեն

հիմնանորոգման կարիք: Սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանելու տեսանկյունից ևս մարզադահլիճների սանհանգույցները վատ վիճակում են, որի համար նախաձեռնվել է վոլեյբոլի մարզադահլիճի վերանորոգումը, դահլիճին կից սանհանգույցների և հանդերձարանների վերանորգումը, ինչպես նաև մյուս մասնաշենքի թվով 2 սանհանգույցների վերանորոգումը: Բուհում նախատեսվում է ունենալ նաև հրաձգարան՝ մարզումներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով: Ինչպես նաև պլանավորվել է կապիտալ վերանորոգել վերելակը, քանի որ այն գտնվում է ոչ բարվոք վիճակում:

Թեև ֆինանսական միջոցները կառավարվում են հնարավորինս նպատակային, այդուհանդերձ ֆինանսական հատկացումների բաշխման, կառավարման և օգտագործման արդյունավետության բարձրացումն ընթացիկ գերակայություն է և գտնվում է ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ուշադրության կենտրոնում:

**Գնումների բաժինը** ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեության իրավական հիմքը «Գնումների մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքները համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերն են: Գնումների բաժինը ենթարկվում է ֆինանսավարչական գծով պրոռեկտորին:

Հաշվետու տարում գնումների բաժինը իրականացրել է գնումների պլանավորումը, նախապատրաստումը, պայմանագրերի նախագծերի պատրաստումը, պայմանագրերի կառավարումը:

**Տնտեսական և սպասարկման բաժինը** զբաղվում է ինստիտուտի կողմից ձեռք բերված ապրանքների պահեստավորման և բաշխման, վերանորոգման, ինստիտուտի մաքրման, ներքին և արտաքին հարդարման, գույքի տեղափոխման, սենյակներում գույքի տեղաբաշխման, բանվորական աշխատանքների, կաթսայատան աշխատանքների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի հետ կապված բոլոր խնդիրներով:

Հաշվետու ժամանակահատվածում՝

1. իրականացվել է ինստիտուտի առաջին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքների կոսմետիկ հարդարում:
2. վերանորոգվել է դասաժամերի սկիզբը և ավարտը ազդարարող զանգը, որի համար հատկացվել է 50.000 ՀՀ դրամ:
3. վերանորոգվել են ինստիտուտի տարբեր մասերի խափանված լույսերը, որի համար հատկացվել է 635.000 ՀՀ դրամ:
4. վերանորոգվել են ինստիտուտի գլխավոր մուտքի երկփեղկանի և ետնամուտքի մեկփեղկանի դռները, փոխվել են բացվելու և փակվելու ամբողջական մեխանիզմները, որի համար հատկացվել է 450.000 ՀՀ դրամ, ինչպես նաև ֆուտբոլի ամբիոնի միջանցքում տեղադրվել է նոր /եվրո/ շագանակագույն բաժանարար պատ իր դռնակով, որի համար հատկացվել է 430.000ՀՀ դրամ:
5. վերանորոգվել է 99 հատ ծխի տվիչը և ԿՊԷՎհգ(Ա)-FRLS 1*2*0,80մմ լարը փոխարինվել է ԿՊԷՎհգ(Ա)-FRLS 1*2*0,97մմ (ընդհանուր՝ 2700մ) լարով:
6. վերանորոգվել է բուհի ջեռուցումն ապահովող կաթսայի ջերմաստիճանը կարգավորող սարքը, որի համար հատկացվել է 95.000ՀՀ դրամ:

7. վերանորոգվել և սպասարկվել են ինստիտուտում առկա օդորակիչները:
8. վերանորոգվել են առաջին մասնաշենքի հոսանքի ցանցը, ինչպես նաև սառը ջրի մատակարարման երկու պոմպերը:
9. վերանորոգվել են ՀՖԿՍՊԻ հիմնադրամի նկուղում առկա ջեռուցման խողովակները, որի համար հատկացվել է 75.000ՀՀ դրամ:
10. կատարվել են վերանորոգման աշխատանքներ ինստիտուտի տարածքում ըստ չափագրված ծավալների:

**Ամբուլատորիան** Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է և ենթարկվում է ֆինանսավարչական գծով պրոռեկտորին: Ամբուլատորիան համալրված է հետևյալ հաստիքներով՝ 1 բժիշկ, 1 աշխատանքների պատասխանատու, 3 բուժքույր, 1 սանիտար:

Բժշկական ծառայության աշխատակիցները բաշխված են այնպես, որ ուսումնամարզական պարապմունքների ժամանակ բժշկական սպասարկումը կատարվի Ինստիտուտի բոլոր մարզասրահներում և մարզահրապարակներում: Ինստիտուտի բժշկական անձնակազմի կողմից սպասարկվել են բոլոր ուսումնամարզական պարապունքները և մրցումները, այդ թվում նաև՝ քոլեջի, հետևողականորեն սանիտարական վերահսկման են ենթարկվել Ինստիտուտի բոլոր տարածքները և ուսումնական շենքերը: Ինստիտուտի սանիտարական վիճակի մասին պարբերաբար տեղեկացվել է Ինստիտուտի ղեկավար կազմին:

Հաշվետու տարում սպասարկվել են առկա, հեռակա ուսուցման համակարգերի 654 ուսանողներ, ինչպես նաև ինստիտուտի 68 աշխատակիցներ և քոլեջի 110 ուսանողներ: Նշված գործողությունները գրանցված են համապատասխան գրանցամատյաններում: Պրոցեդուրա-վիրակապային կաբինետի կողմից սպասարկվել են 434 դիմողներ:
Բժշկական հանձնաժողովը 2023-2024 թթ. հուլիս և սեպտեմբեր ամիսներին մասնակցել է առկա և հեռակա համակարգերի, ինչպես նաև սփյուռքահայ դիմորդների և քոլեջի սեների ընդունելության քնություններին:

## ԳՐԱԴԱՐԱՆ - ԹԱՆԳԱՐԱՆ

Վերափոխված և ֆունկցիոնալ գրադարանը բաղկացած է ընթերցասրահից, սպասարկման և կոնֆերենց սրահներից: Գրքային ֆոնդը գտնվում է ընթերցասրահում և կոնֆերենց սրահում: Ընթերցողների քանակն է՝ ուսանող – 2377, քոլեջի ուսանող – 130, աշխատող – 240:

Գրադարանի հիմնական ֆունկցիան ընթերցողների սպասարկումն է, ինչպես նաև շնորհանդեսների և միջոցառումների կազմակերպումը: Գրադարանն ունի 8 աշխատակից:

Գրքային ֆոնդի բաղկացուցիչ մասը մասնագիտական գրականությունն է, առկա են նաև արվեստի, գրականագիտության, մատենագիտության, հայոց լեզվի, պատմության, մշակույթի բնագավառին պատկանող, գեղարվեստական, օտարալեզու մեծաքանակ գրքեր, բառարաններ: Գրադարանն ունի նաև բազմաթիվ պարբերականներ և ամսագրեր, որոնցից օգտվելու հնարավորություն ունեն բոլորը: Գրքերի քանակն այժմ 34.041 միավոր է: Ինստիտուտի sportedu.am կայքում գրադարանն ունի 130 էլեկտրոնային գիրք:

Շարունակվում է գրադարանային ֆոնդի համալրումն անհրաժեշտ և պահանջված գրականությամբ: Գրադարանը նվիրատվության կարգով ստացել է 253 միավոր գիրք:

2022թ.-ից «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում գործում է «Սպորտուս» հեռակետային քոլեջը: Գրադարանը տարբեր դպրոցներից փոխառության կարգով ստացել է քոլեջի համար անհրաժեշտ 126 միավոր դասագիրք, իսկ գրադարանի ֆոնդի համար ձեռք է բերել 150 գիրք, որոնց միջոցով սպասարկվում են քոլեջի ուսանողները:

Գրադարանի միջոցով ՀՖԿՍՊԻ ներքին շահակիցների համար 2023թ. հունիս մինչև 2024թ. հունիս ամիսը շրջանառվել է 17 էլեկտրոնային օտարալեզու հարթակ: Այդ հարթակների շնորհիվ նրանք կարող են օգտվել տարաբնույթ մասնագիտական գրականությունից, բազմաթիվ գիտական պարբերականներից, ինչպես նաև մասնակցել տարբեր վեբինարների:

Գրադարանի կոնֆերենց սրահում ողջ տարվա ընթացքում տարբեր դասախոսներ անցկացրել են դասեր իրենց դասավանդած առարկաներից, տեղի են ունեցել նաև կոնֆերանսներ, գրքերի շնորհանդեսներ և տարաբնույթ ժողովներ:

**Գրադարան–թանգարանում կատարված և աշխատակիցների մասնակցած միջոցառումները.**

- Սեպտեմբերի 5 – էրեբունի թանգարանում սեպագիր հիմունքների վերաբերյալ դասախոսություն
- Սեպտեմբերի 7 – Հայաստանի ազգային գրադարանում հանրային դասախոսություն «Հայաստանը Լատվիայի ժամանակակից գրական հրապարակություններում» թեմայով
- Սեպտեմբերի 7 – մասնակցություն Իրազեկման հանձնաժողովի նիստի «Հայ գրադարանավներ և արխիվագետների միջազգային միության» ժողովի
- Սեպտեմբերի 14 – մասնակցություն հանրային դասխոսության Հայաստանի ազգային գրադարանում, նվիրված Վիլյամ Սարոյանի 115-ամյակին, «Սարոյանը երեկ, այսօր, վաղը» թեմայով
- Հոկտեմբերի 10 – այցելություն թանգարան հոգեբանության դասախոս Սոֆյանն իր ուսանողների հետ իր դասավանդած առարկայի շրջանակներում

Այցելություն թանգարան. կարերիայի բաժնի ղեկավար Խիթարյանը ներառական ուսանողների հետ

- Հոկտեմբերի 16 – այցելություն թանգարան Ֆրանսիայից Հայաստանում կայանալիք ձյուդոյի առաջնության պատվիրակության կողմից՝ 3 մարզիչ, 4 մարզիկ
- Նոյեմբերի 2 – IAALA ISAS իրազեկման հանձնաժողովի անդամների նիստ
- Նոյեմբերի 8 – վիրտուալ գագաթնաժողով Springer Nature-ի կողմից «Գրքերն այսօր և ապագայում» թեմայի շուրջ
- Նոյեմբերի 10– «Եղիշե Չարենց.Մատենագիտություն» գրքի շնորհանդես
- Նոյեմբերի 29 – մասնակցություն վեբինարի «Crossreff-ի ծառայությունները գրադարանավարների և խմբագիրների համար» թեմայով
- Դեկտեմբերի 1 – մասնակցություն վեբինարի «Պահպանությունը, հետազոտությունը և ուսուցումը տեսախաղերի միջոցով» թեմայով
- Դեկտեմբերի 5 – մասնակցություն վեբինարի «Հանրահասանելի հարթակներ թափանցիկ և արդյունավետ հրատարկչության հզորացում» թեմայով

- Դեկտեմբերի 6 - 7 – այցելություն գրադարան - թանգարան Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան թիվ 19 հիմնական դպրոցի աշակերտների կողմից
- Դեկտեմբերի 11 – մասնակցություն վեբինարի British Library-ի կողմից «Կլիմայական փոփոխությունների պայմաններում գրադարանային հավաքածուների պահպանումը» թեմայով
- Դեկտեմբերի 13 – մասնակցություն Հայաստանի ազգային գրադարանում Հայաստանի թվային գրադարանային ասոցիացիայի կողմից կազմակերպված սեմինարի «Open Science – բաց գիտություն» թեմայով
- Դեկտեմբերի 20 – այցելություն գրադարան - թանգարան Քաղսիի միջնակարգ դպրոցի աշակերտների կողմից
- Հուվարի 9 – մասնակցություն Կինոյի տանը կազմակերպված Փարաջանովի 100-ամյակին նվիրված քանդակի բացման արարողությանը
- Հունվարի 24 – այցելություն գրադարան – թանգարան Մարտիրոս Սարյանի անվան թիվ 86 հիմանական դպրոցի աշակերտների կողմից
- Փետրվարի 2 – մասնակցություն Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցած հանրային բանախոսությանը նվիրված Պարույր Սևակի 100-ամյակին
- Փետրվարի 9 – այցելություն գրադարան – թանգարան Մասիսի 3-րդ հիմնական դպրոցի աշակերտների կողմից
- Փետրվարի 19 - հումանիտար և հասարակական գիտությունների ամբիոնի անգլերենի դասախոս Սիլվա Հովակիմյանի «Հովհաննես Թումանյան» քառյակներ գրքի շնորհանդես
- Փետրվարի 27 – մասնկացություն Springer Nature-ի կողմից կազմակերպված վեբինարի՝ «Библиотека наизнанку: как окрытый доступ меняет роль библиотекаря» թեմայով
- Փետրվարի 28 – Մայիսի 24- մասնակցություն IAALA-ի կողմից կազմակերպած անգլերեն գրադարանավարների համար դասընթացի
- Փետրվարի 29 - մասնակցություն IAALA-ի կազմակերպած իրազեկման հանձնաժողովի հետ նիստի
- Մարտի 18 – այցելություն գրադարան – թանգարան Արմավիրի մարզի Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների կողմից
- Մարտի 19 - այցելություն գրադարան – թանգարան Գեղարքունիքի մարզի Գանձակի 2-րդ դպրոցի 7-րդ դասարանի աշակերների կողմից
- Մարտի 20 – այցելություն գրադարան – թանգարան թիվ 11 Մոնթե Մելքոնյանի անվան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների կողմից
- Մարտի 21 – մասնակցություն վեբինարի «Ինչպե՞ս գրադարանավարները օգնեն ուսուցման նորարարական մարտավարությանը»
- Ապրիլի 9 – մասնակցություն Elsevier- ի կողմից կազմակերպած վեբինարի «Scopus – ում ճիշտ կողմնորոշվելու մասին» թեմայով
- Մայիսի 16 – մասնակցություն Elsevier-ի կողմից կազմակերպած վեբինարի « Աբ-ի և գրադարաններրի մասին» թեմայով
- Մայիսի 17 – այցելություն գրադարան – թանգարան Ջոն Կիրակոսյանի թիվ 20 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների կողմից
- Մայիսի 17 – անդամակցություն «Haylib» հայ գրադարանավարների միությանը
- Հունիսի 13 – գրքի շնորհանդես Արթուր Նժդեհ «Crossrif Hayastan»

**Գրադարանը նպատակ ունի կատարել հետևյալ աշխատանքները.**

- ամրապնդել ուսանող - գրադարան կապը
- համագործակցել ներքին և արտաքին օղակների հետ
- կատարել դասախոսների հեղինակած գրքերի շնորհանդեսներ, որոնք կոգևորեն և՛ դասախոսին, և՛ ուսանողին
- ստեղծել այնպիսի բազա, որը կօգնի ուսանողին հանձնել քննությունները
- ստեղծել գրքափոխանակության անկյուն (դասախոսությունները ևս կարող են ներառվել գրադարանի ֆոնդում՝ ամրապնդելով գրադարան - ամբիոն կապը)
- կատարել գրքերի, ֆիլմերի քննարկումներ՝ նվիրված օլիմպիական չեմպիոններին
- գրքերի ցուցահանդեսներ
- դասախոսություններ
- կլոր սեղաններ
- գրադարանավարների մասնագիտական տարաբնույթ դասընթացներ

**Թանգարանն** այցելուներին ներկայացվում է 3 սրահներով, որն իր մեջ ներառում է 3 թեմատիկ ցուցադրություն: Թանգարանային ֆոնդի գրեթե 30%-ը գտնվում է գրադարանում ցուցադրվող նոր ցուցադրասրահներում: Նախատեսվում է մի մասը ներկայացնել ինստիտուտի 2-րդ հարկում կառուցվող ցուցադրափեղկերում, որը դեռ գործընթացի մեջ է: Թանգարանի հիմնական ֆունկցիան կայանում է այցելուներին ինստիտուտի անցած ուղու պատմության ներկայացումը:

2023թ.-ի սեպտեմբերից շարունակվել են դպրոցականների և այլ այցելուների հաճախումները թանգարան, ամրապնդվել է միջթանգարանային կապը, որի շրջանակներում ինստիտուտի ուսանողները շրջայցեր են կատարել տարբեր թանգարաններ, լսել դասախոսություններ: Ընթացիկ տարում անդամակցության հայտ է ներկայացվել թանգարանների միջազգային ասոցիացիային՝ ICOM ARMENIA-ին, դեռևս սպասում ենք պատասխանի: Թանգարանում իրականացվում են արդիականացման աշխատանքներ, որոնք դեռ ընթացիկ փուլում են:

**Թանգարանը նպատակ ունի կատարել հետևյալ աշխատանքները.**

- Համալրվել նոր ցուցանմուշներով
- Թարմացնել առկա ցուցանմուշների տեսքը
- Թարմացնել Ինստիտուտի պատմությունը ներկայացնող ռեկտորներին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին նվիրված ցուցադրափեղկերը՝ լուսանկարները ներկայացնելով ամբողջական պաստառների տեսքով՝ ապահովելով դրանց պահպանման հարատևությունը
- Թանգարանը համալրել նոր ժամանակակից գույքով՝ նախատեսված թվային ցուցադրությունների համար:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5.
## ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը ստեղծվել է 2019թ. դեկտեմբերին, որպես Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի՝ Միջազգային համագործակցության ենթաբաժնի իրավահաջորդ: Բաժնի գործերը համակարգում է արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտորը: Գործում է 4 հաստիք՝ 1 բաժնի ղեկավար, 1 գլխավոր մասնագետ, 2 բաժնի մասնագետ: Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի բաժինը 2023-2024 ուսումնական տարում իրականացրել է արտասահմանյան ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի բանակցային գործընթացների կազմակերպում:,

Հաշվետու տարում պայմանագրեր են կնքվել՝

- Հնդկաստանի ITV մեդիաընկերության NewsX հեռուստաընկերության հետ, ուր փորձի փոխանակման նպատակով մեկնել է ՀՖԿՍՊԻ-ի 3 հոգուց բաղկացած պատվիրակությունը, ինչպես նաև 2 ուսանող՝ պրակտիկա անցնելու նպատակով:
- Աբայ Միրզախմետով Կոկշետաու համալսարանի հետ, որով ձեռք է բերվել պայմանավորվածություն իրագործել պրոֆեսորադասախոսական կազմի, ասպիրանտների փոխանակում՝ բակալավրիատի, մագիստրոսի և ասպիրանտուրայի համատեղ ծրագրեր, ուսանողների և ակադեմիական անձնակազմի ակադեմիական շարժունակություն, համատեղ կրթական ծրագրերի թվային և վեբ ռեսուրսների կառավարում, մասնակցություն սեմինարներին, աշխատաժողովներին և ակադեմիական հանդիպումներին, ակադեմիական նյութերի, հրապարակումների և այլ տեղեկատվության փոխանակում, կարճատև և երկարաժամկետ ծրագրերի իրականացում և փոխայցելություններ

Մշակման փուլում է պայմանագրի կնքումը Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր ազգային տնտեսության և պետական կառավարման ակադեմիայի հետ: Բաժնի կողմից իրականացվել է Erasmus+ կարողությունների զարգացման ծրագրի հայտագրում՝ 2024թ. հունվար ամսին մեկնարկել է Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ֆինանսավորված SIN-NEC՝ Կայունություն և միջազգայնացման կարողությունների զարգացում՝ նպաստելու նորեկների բարձրագույն կրթության արդիականացմանը հարևան արևելյան երկրներում, ծրագիրը, որում ՀՖԿՍՊԻ-ին հանդիսանում է գործընկեր բուհ:

Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել 2024թ. հունվարին Իտալիայում, Տերամոյի համալսարանում, հստակեցվել են ապագա անելիքները, սկսվել է ծրագրի շրջանակներում տեխնիկայի ձեռք բերման գործընթացը, և պատրաստվում է ինքնագնահատման զեկույցը:

Իրականացվել է գիտության զարգացման նպատակով բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հոդվածների տպագրման առաջարկներ և տպագրման պրոցեսի կազմակերպում: Գիտական հոդվածների միջազգայնացմանը խթանելու նպատակով միջազգային գիտական ամսագրերում տպագրվելու առաջարկներ են ուղարկվել բուհի ՊԴԱ կազմին, աջակցություն է ցուցաբերվել տպագրությանը ներկայացնելու գործընթացի հետ կապված, տպագրվել է 4 հոդված Scopus, WoS ամսագրերում և 8 հոդված այլ միջազգային ամսագրերում (ՌԾ նպատակ 5.4.1.): Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ, երբ տպագրվել էր 19 հոդված Scopus, WoS ամսագրերում և 48 հոդված այլ միջազգային ամսագրերում, հաշվետու ժամանակահատվածում նշված ցուցանիշը կտրուկ նվազել է:

Բաժնի գործունեությա մյուս կարևոր ուղղությունը Սփյուռքի և արտասահմանցի դիմորդների ընդունելության գործընթացի կազմակերպումն է: Այս ուղղությամբ իրականացվել են հետևյալ գործողությունները՝

- պատրաստվել է հայտարարություն, տեղադրվել կայքում և սոցհարթակներում, տեղի է ունեցել դիմորդների նախնական հավաքագրում և գրանցում, հրամանագրվել է հանձնաժողովի կազմը:
- դիմորդներին քննության մասին տեղեկատվություն է տրամադրվել, կազմակերպվել են քննությունները, քննության արդյունքների հիման վրա պատրաստվել տեղեկագրեր ՀՀ ԿԳՄՍ նախարարություն ներկայացնելու համար:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից գրություն-հրահանգի համաձայն դիմորդները հրամանագրվել են համապատասխան ֆակուլտետներում:,
- հրամաններին համապատասխան ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և ՀՀ Ոստիկանության և վիզաների վարչություն պատրաստվել են գրություններ:

Հաշվետու տարում բուհ ընդունվել են սփյուռքի և արտերկրի 43 դիմորդ, 32–ը՝ առկա, 3–ը՝ հեռակա, 2-ը՝ մագիստրատուրա, 6–ը՝ քոլեջ:

Ընդհանուր թվով հաշվետու տարում ինստիտուտում սովորում են արտերկրի և սփյուռքի 98 ուսանող: 2023-2024 ուստարում բուհ ընդունվել է 36 դիմորդ (30% աճ):

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Ընդհանուր ուսանողների քանակ | 24 | 38 | 43 |
| Առկա բակալավր | 18 | 27 | 22 |
| Հեռակա բակալավր | 2 | 3 | 3 |
| Մագիստրատուրա | 2 | 4 | 2 |
| Նախապատրաստական | 2 | 4 | |
| Քոլեջ | | | 6 |

## ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| Ընդհանուր ուսանողների քանակ | 66 | 81 | 104 |
| Բակալավր | 61 | 73 | 94 |
| Մագիստրատուրա | 3 | 4 | 4 |
| Նախապատրաստական | 2 | 4 | |
| Հետբուհական | 3 | | |
| Քոլեջ | | | 6 |

Բաժնի կողմից կրականացվել է միջազգային մրցույթների, փառատոնների, ամենամյա նստաշրջանների մասնակցության ապահովում

Ստացված հրավերների մասին տեղեկատվություն է ուղարկվել համապատասխան ամբիոններ, մասնակիցներին, դիմորդներին աջակցություն է ցուցաբերվել գրանցման հարցում, նամակագրական կապ է հատատվել հրավիրող կողմերի հետ, ինչպես նաև ապահովվել է ֆինանսական աջակցություն (ավիատոմսեր, կացություն, գիշերակաց, ներկայացուցչական ծախսեր): Ընդհանուր թվով եղել է 92 հրավեր, սակայն մասնակիցների թիվը շատ քիչ է, ընդամենը 5 մասնակից սեմինարներին

5 մասնակից Եվրոպական համալսարանական խաղերի շրջանակում,

1 հոգի մասնակցել է Սիբիրի Դաշնային համալսարանում կազմակերպված «Ամառային համալսարան-2024» միջոցառմանը:



Նախորդ տարվա համեմատությամբ կտրուկ նվազել է մասնակցությունը՝ 102 հրավեր, 40 մասնակից:

Միջազգայնացման տեսանկյունից կարևոր է տարբեր դեսպանատների, միջազգային պատվիրակությունների, արտասահմանյան գիտնականների և դասախոսների այցերի կազմակերպումը: Հյուրընկալել ենք.

Երևանում «Դոմ Մոսկվի» մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի գլխավոր տնօրեն Վահրամ Կարապետյանին, քննարկել՝ համագործակցության հնարավոր ուղղությունները և հեռանկարները, որի արդյունքում կնքվել է Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր ազգային տնտեսության և պետական կառավարման ակադեմիայի հետ պայմանագիրը:

Էվոլուցիոն թաեքվոնդոյի միջազգային ֆեդերացիայի (Evolutionary International Taekwon-Do Federation) նախագահ Ռուդոլֆ Կանին:

Ճանաչողական այցով Երևանում գտնվող Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիայի նախագահ Ադամ Ռոսեքին (Adam Roczek):

**Անդամակցություն՝ միջազգային կառույցներին**

- Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համալսարանների միջազգային ասոցիացիա (շուրջ 52 համալսարան):
- Միջազգային օլիմպիական ակադեմիա (IOA)
- Ֆիզիկական և մարզական կրթության միջազգային ֆեդերացիա (FIEPS)
- Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիա (EUSA)

Անդամակցությունների շրջանակներում՝

✓ Հաշվետու տարում Միջազգային օլիմպիական ակադեմիայի (ՄՕԱ) ամենամյա նստաշրջաններին մասնակցություն են ունեցել 1 երիտասարդ մասնակից և 1 համակարգող:

✓ 2024թ.-ին բուհը Ֆիզիկական և մարզական կրթության միջազգային ֆեդերացիայի (FIEPS) ներկայացրած New Leaders Project 2024 ծրագրին մասնակցություն է ունեցել Հյուսիսային Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում, որը իրականացվել է 18-րդ FIEPS եվրոպական կոնգրեսի ուղեկցությամբ, ֆիզիկական դաստիարակության և սպորտի տարածումը տարբեր հարթակներում խթանելու նպատակով: (4 մասնակից):

✓ Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիա (EUSA)

✓ Հունգարիայի Միշկոլց և Դեբրեցեն քաղաքներում Եվրոպական համալսարանական առաջնությանը ՀՖԿՍՊԻ-ից մասնակցել են 5 մարզիկներ՝ շախմատ, Պարասեղանի թենիս, թաեքվոնդո մարզաձևերում, շահելով բոլոր մարզաձևերից բրոնզե մեդալներ:

Որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվել է վերապատրաստում՝ առցանց սեմինար-դասընթաց, որը ներկայացվել է Ռուսաստանի լրացուցիչ մասնագիտական կրթության «Կենսաբժշկության և սպորտի ազգային ինստիտուտ»-ի կողմից: Վերապատրաստվել են 3 հոգի (ՌԾ նպատակ 5.1.3):

ՀՖԿՍՊԻ–ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, հետազոտական խմբերի ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացներում միջազգային գիտահետազոտական նախագծերում ու դրամաշնորհային ծրագրերում նպաստելու նպատակով նախատեսվում է մշակել և ներդնել նաև մեթոդաբանական ուղենիշեր, կազմակերպել դրամաշնորհային նախագծեր մշակելու վերաբերյալ վերապատրաստումներ:

Էրազմուս + շարժունության ծրագրի շրջանակում մասնակցել ենք Erasmus+ գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական օրերին, ձեռք բերել պայմանավորվածություններ, ուսումնասիրվել են Erasmus+ շարժունության ծրագրերը, նամակներ են ուղարկվել ծրագրերի մեջ ընդգրկված գործընկեր բուհերին:

Իրականացվել է շարժունություն մասնագիտական պրակտիկայի շրջանակներում, Հնդկաստանի ITV մեդիաընկերության NewsX հեռուստաընկերությունում. ՀՖԿՍՊԻ-ի Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի 2 ուսանող երկշաբաթյա պրակտիկա են անցել նշված հեռուստաընկերությունում:

Մասնակցել ենք նաև «Էրազմուս+ նախագծերի մեկնարկային օր 2024» ծրագրին, որի նպատակն էր ներկայացնել Էրազմուս+ ծրագրի վերջին՝ 2023թ. մրցույթի արդյունքում դրամաշնորհ ստացած բուհերի և ՄԿՈւ հաստատությունների կողմից իրականացվող նախագծերի հիմնական նպատակները, ակնկալվող արդյունքները և ծավալել քննարկումներն ուղղված այդ նախագծերի իրականացման, ոլորտի մարտահրավերների ու դրանց լուծման ուղիների բացահայտմանը և որտեղ տեղ էր գտել նաև SIN-NEC – «Արևելյան հարևանության երկրների համալսարանների արդիականացմանը խթանող կայունության և միջազգայնացման գծող կարողություններ» նախագիծը:

**Գործուղումների կազմակերպում**

Գործուղումները ևս նվազել են համեմատած 2022-2023 ուստարվա ցուցանիշին՝ 5 գործուղման փոխարեն 1 գործուղում 2023-24թթ ուստարում, երբ ՀՖԿՍՊԻ-ի 3 հոգուց

բաղկացած պատվիրակությունը մեկնել է Հնդկաստան՝ ITV մեդիաընկերության NewsX հեռուստաընկերություն՝ փորձի փոխանակման նպատակով: Նվազումների պատճառ կարող է հանդիսանալ բուհի գործունեության բնականոն գործընթացի խափանումը, անձնակազմի անկանոն փոփոխությունները:

Ինչպես գիտենք բուհը գրանցված է WES (World education services) համակարգում, և ըստ մուտք եղած հարցումների 13 շրջանավարտների վերաբերյալ կաելի է նշել հետևյալ տվյալները՝ 7 ՖԴՍՄ կրթական ծրագրով, 5 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա և 1 լրագրություն կրթական ծրագրերով՝ արտասահմանում ուսումը կատարելագործելու և աշխատանքի անցնելու նպատակով:

Աշխատանքի տեղավորման նպատակով համագործակցել ենք նաև Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնների հետ՝ հարցումների պատասխանները պատշաճ և ժամանակին տրամադրելու միջոցով:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6.
## ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հանրային և ինստիտուցիոնալ կապերի (ՀԻԿ) բաժնի գործառույթն ուղղված է ՀՖԿՍՊԻ–ի՝ որպես բացառիկ ոլորտային բուհի, դրական իմիջի ձևավորմանը, հեղինակության բարձրացմանը, բուհի առաքելության և գործունեության համար նպաստավոր հաղորդակցային միջավայրի ապահովմանը, առաքելության և գործունեության վերաբերյալ հանրային իրազեկմանը, գիտահետազոտական, կրթական և սպորտային ոլորտներում առաջատար դիրքի ամրապնդմանը: Բաժնի գործառույթի երկրորդ բաղադրիչը ներառում է գլխադասային գերատեսչության (ՀՀ ԿԳՄՍՆ), ՀՀ գործադիր, օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտային կազմակերպությունների, բուհերի, մասնագիտացված ընկերությունների հետ գործընկերային և փոխգործակցային հարաբերությունների ձևավորմանը, սպասարկմանը և զարգացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից աշխատանքներն ուղղվել են բուհի գործունեության (կրթական, գիտահետազոտական, մարզական, միջազգային, հանրային նշանակության) վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, քարոզչական աշխատանքներին և հանրային կապերի ամրապնդմանը: Ինստիտուցիոնալ և համագործակցային հարաբերությունների ձևավորման և ամրապնդման նպատակով նամակագրություն է իրականացվել Հայաստանում գործող տարբեր ոլորտների առաջատար կազմակերպությունների հետ: Գործընկերային հարաբերությունների ձևավորումն ուղղված է աջակցելու ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսանողների կրթության որակի և ուսուցման պայմանների լավացմանը:

Բաժնի գործունեության կարևոր բաղադրիչներից է ՀՖԿՍՊԻ–ի եռալեզու պաշտոնական կայքի (www.sported.am) սպասարկման աշխատանքները, այս առումով, որպես առաջնահերթություն իրականացվում են հրապարակվող տեղեկատվության հասանալիության և մատչելիության ուղղությամբ տարվող աշխատանքները՝ հեշտացնելով անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը հատկապես դիմորդների և ուսանողների համար:

ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի այցելությունների համեմատական ինֆոգրաֆիկաներից (2022-2023 թթ. և 2023–2024 թթ.) երևում է, որ գրեթե չի փոփոխվել ինչպես պաշտոնական կայքի ընդհանուր այցելուների քանակը, այնպես էլ դիտումների թիվ: Հաշվետու ժամանակահատվածում կայքի այցելուների թիվը կազմել է 59,8 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 59,3 հազարի դիմաց, իսկ դիտումների քանակը համապատասխանաբար կազմել է 400,1 հազար, նախորդ ժամանակահատվածի՝ 393,3 հազարի դիմաց: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայք մեծամասամբ մուտք են գործել Google որոնողական համակարգի միջոցով, ինչը խոսում է այդ որոնողական համակարգում բուհի նկատմամբ ավելացած հետաքրքրության մասին: Ամենաշատ դիտումները եղել են «Դիմորդ» էջում, հաջորդ այցելությունների հաջորդ քանակն ապահովում են ՀՖԿՍՊԻ–ի ֆակուլտետների և «Բակալավրիատ» հենակետային քոլեջի էջերը: Ըստ ամիսների կայքի այցելությունները ներկայացված են ստորև.




Ինստիտուտի գործունեության թափանցիկությունն ապահովելու, ինչպես նաև իրականացվող միջոցառումների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը թիրախային լսարանին հասանելի դարձնելու համար բուհի տարբեր ծառայությունների վերաբերյալ Ֆեյսբուք սոցիալական ցանցում իրականացվել է տեղեկատվության տեքստային և վիզուալ ներկայացում, ինչը ապահովել է տեղադրված նյութերի դիտելիության ավելացում:

ՀՖԿՍՊԻ ֆեյսբուքյան էջի արդյունավետության համեմատական ինֆոգրաֆիկաները (2022-2023 թթ. և 2023–2024 թթ.):




Մշտադիտարկումն իրականացմելու համար պայմանագիր է կնքվել «Ռումորս Մոնիտորինգ» ընկերության հետ, որի տրամադրած գործիքակազմով իրականացվել է մեդիադաշտի և Ֆեյսբուք սոցիալական հարթակի մշտադիտարկում: Ուսումնասիրություններով պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում Ֆեյսբուք սոցիալական կայքի այցելուների ընդհանուր թիվը նվազել է կազմելով՝ 425,5 հազար, 2022-2023 ուսումնական տարվա 539,2–ի դիմաց, հետևորդների ընդհանուր թիվ՝ 14,4 հազար է, հաղորդագրության փոխանակման թիվը՝ ավելի քան 580, որից 313–ը նոր օգտատերեր (18,1% աճ), 61,9 տոկոսով ավելացել է միջին այցելության ցուցանիշը: Հիմնական այցելությունները եղել են Հայաստան ից 93,2% Ռուսաստանի Դաշնությունից 2,3%6 ԱՄՆ–ից 1,8%6 Ֆրանսիայից 0,7% և Վրաստանից 0,6%: Էջի այցելուների սեռային և տարիքային ցուցանիշները՝ այստեղ:




Հաշվետու ժամանակահատվածում Ինստագրամ սոցիալական ցանցում ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական էջի առաջխաղացման համար նկարահանվել և պատրաստվել են այդ սոցիալական հարթակի շահառուների պահանջարկների համար նախատեսված տեսանյութեր: Էջի ընդհանուր հետևորդների թիվը կազմում է 528 հոգի: Էջում տեղադրված հղումների միջոցով ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայքի այցելությունների թիվը ավելացել է 260 տոկոսով: Էջի այցելուների 58,1 տոկոսը արական և 41,8 տոկոսը իգական սեռի ներկայացուցիչներ են: Ամենակատիվ տարիքային խումբը 18-24 տարեկանն քաղաքացիներն են (56,1%) Հիմնական այցելուները Հայաստանի Հանրապետությունից են՝ 89,9 %:

Կրթության շարունակականության ապահովման նպատակով համաձայնագրեր են կնքվել Հայաստանում գործող բժշկական քոլեջների հետ: Համաձայնագրում հիմք ընդունելով Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 20-ի №589 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №752-Ն որոշման հավելվածի 2-րդ և 3-րդ կետերը, քոլեջում միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսում ստացած և բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և/կամ «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտներին հնարավորություն է տրվում ուսումը շարունակել ինստիտուտի «Ֆիզիկական վերականգնում՝ կինեզիոլոգիա» մասնագիտությամբ (հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսից)՝ ելնելով միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի, մասնագիտությունների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունից: 2022-2023 ուսումնական տարում «Արարատի», «Գյումրու», «Վանաձորի» բժշկական քոլեջների հետ կնքված համաձայնագրերի արդյունքում «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա/կինեզիոլոգիա» մասնագիտությամբ

հեռակա ուսուցման համակարգի 2–րդ կուրս է ընդունվել մասնագիտական քոլեջների լավ և գերազանց գնահատականներով ավարտած 10 ուսանող:

Բուհի դիմորդների թվի ավելացմանը խթանելու նպատակով հաստատվել է ոչ միայն նամակագրային համագործակցություն, այլ նաև իրականացվել են բազմաթիվ միջանձնային շփումներ, բանակցություններ, քննարկումներ, ինչի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում համաձայնագրեր են կնքվել նաև «Հայբուսակ», «Մեհրաբյանի անվան» և «Պրովիզոր–Նկարիչ» բժշկական քոլեջների հետ:

Համագործակցություն է ձևավորվել news.am, aravot.am, infoport.am լրատվականների հետ, որոնց միջոցով լուսաբանվել են ՀԻԿ բաժնի կողմից կազմակերպված միջոցառումները: ՀԻԿ բաժնում իրականացվել է նշված՝ գործընկեր, և այլ լրատվական գործակալություններով (էլեկտրոնային, տպագիր, հեռուստաեթերային) ՀՖԿՍՊԻ–ի վերաբերյալ նյութերի մշտադիտարկում: Մշտադիտարկումն իրականացվել է «Ռումորս Մոնիտորինգ» կազմակերպության գործիքակազմի միջոցով, ըստ ամիսների տարանջատելով քանակական տվյալներն ըստ՝ տպագրված



**հրապարակող հարթակների**




**Մեդիաակտիվության**




«Սպուտնիկ Արմենիա» լրատվական գործակալության հետ կազմակերպվել է ՀՖԿՍՊԻ–ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Տիգրան Սիմոնյանի ասուլիսը:

ՀԻԿ բաժնի կողմից իրականացված աշխատանքային քննարմուկների շնորհիվ ՀՖԿՍՊԻ–ին սկսել է ակտիվորեն համագործակցել Հայաստանի վերափոխման ռազմավարության աշխատանքային խմբի հետ, ինչ արդյունքում «Հայաստան 2050» ՀՎՌ թիմի ներկայացուցիչը մասնակցել է Հայաստանի հենակետային մարզաձևերի ֆեդերացիաների ներկայացուցիչների հետ կազմակերպված աշխատանքային քննարկում–հանդիպմանը:

Պարբերաբար նորացվում և համալրվում է բաժնում կուտակված կոնտակտային բազան (ֆուտբոլային ակումբներ, ֆիթնես սրահներ, հասարակական

կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ, գործընկեր բուհեր, առաջատար տնտեսվարողներ, beting ոլորտի ներկայացուցիչներ, քոլեջներ, ՏԻՄ մարմիններ և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում սկսվել են բուհի գործունեության վերաբերյալ տեսահոլովակի (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատրաստման աշխատանքները

Բաժինն ակտիվ մասնակցել է Կրթություն և կարիերա EXPO-2024 ցուցահանդեսին բուհի մասնակցությունն ապահովող կազմակերպչական աշխատանքներին և ակտիվորեն լուսանաբել՝ ցուցահանդեսին բուհի մասնակցության ընթացքը: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից իրականացված աշխատանքները մեծապես նպաստել են ինստիտուտի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, պաշտոնական կայքի այցելությունների ավելացմանը, սոցիալական ցանցում քարոզչական աշխատանքերի ակտիվացմանը և այդ աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ինչը ինֆոգրաֆիկայի միջոցով ներկայացվել է տվյալ հաշվետվության վերոշարադրյալ մասում:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7.
## ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ

**Լրացուցիչ և շարունակական կրթության բազմազանեցում ռազմավարական նպատակով նախատեսված է հետևյալ խնդիրները՝**

1. Ներդրնել ոչ ֆորմալ կրթության բաղադրիչը, այդ թվում՝ Ինստիտուտի ուսանողների համար,
2. Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ազգաբնակչության բոլոր տարիքային խմբերի համար շարունակական և ցկյանս կրթության հասանելիություն՝ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի ներդրմամբ,
3. Իրականացնել Ինստիտուտի ՊԴԱ–ի վերապատրաստման ծրագրեր,
4. Խթանել դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպը, կազմակերպել «Ամառային դպրոցներ դպրոցականների, այդ թվում՝ ինստիտուտի աշխատակիցների երեխաների համար:

Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական բաժինը սկսել է գործնեություն ծավալել 2021 թ. նոյեմբերից և հասցրել է իրականացնել բազմաթիվ ծրագրեր: Բաժինը գործում է կանոնակարգին համապատասխան և իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1. Ոչ ֆորմալ կրթությանը առնչվող աշխատանքների կազմակերպում և համակարգում
2. Գրությունների պատրաստում, պահանջվող փաստաթղթերի հավաքագրում
3. Քննական գործընթացի կազմակերպում
4. Սեմինարների կազմակերպում
5. Երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ վերապատրաստումների իրականացում
6. Նոր ծրագրերի մշակում և իրականացում
7. Վերապատրաստման գործընթացին առնչվող հայտարարությունների տարածում, խմբերի հավաքագրում
8. Դասախոսների հետ քաղիրավական պայմանգրերի կնքում, հանձնման-ընդունման ակտերի պատրաստում
9. Կատարողական ակտերի պատրաստում
10. Մանակիցների հետ պայմանագրերի կնքում
11. Սոցիալական հարթակներում բաժնի կայք էջի վարում

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Նախապատրաստական դասընթացների կազմակերպում՝ հայոց լեզվից՝ 1:
- ✓ «Մերսում և առողջարարական ֆիզիկական կուլտուրա» հնգամսյա դասընթացի կազմակերպում՝ 36-րդ խումբ - 8 մասնակից, 37-րդ խումբ - 11 մասնակից, 38-րդ խումբ-8 ուսումնառվող, որոնց ուսումնառության ավարտը սույն թվականի սեպտեմբերին է:
- ✓ «Ֆիթնես մարզչի» պատրաստման հնգամսյա դասընթացի կազմակերպում՝ 4-րդ խումբ 5 ավարտած մասնակից, 4-րդ խումբ – 8 ավարտած մասնակից:

✓ Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում՝ 1-ին փուլում՝ 49 ուսուցիչ, 2-րդ փուլում՝ 18 ուսուցիչ:

Կարճաժամկետ, միջնաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում, մասնավորապես՝ «Մանկական մերսում»:

Հաշվետու տարում անցկացվել է դասընթաց-սեմինարներ.

1. «Բասկետբոլի մեկնաբանի կարողությունների զարգացում»,
2. «Սպորտային սննդաբանություն»,
3. «Ռազմական լրագրության հիմունքներ
4. «Թմրամիջոցների գործածման վնասակար հետևանքները»:




| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|
| «Անատոմիա» և «Ընդհանուր կենսաբանություն» | 4 | 0 | 0 |
| Հայոց լեզու | 1 | 2 | 1 |
| «Մերսում և առողջարարական ֆիզիկական կուլտուրա» հնգամսյա դասընթաց | 15 | 27 | 27 |
| «Ֆիթնես մարզչի» պատրաստման հնգամսյա դասընթաց | 7 | 6 | 13 |
| Ֆիթնես ուժային ձևեր | 3 | 0 | 0 |
| «Փոքրիկ օլիմպիկ» ամառային դպրոց | 26 | 0 | 0 |
| Մարզիչների միջնաժամկետ վերապատրաստման ծրագիր | 0 | 26 | 0 |
| Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում | 81 | 49 | 67 |
| Կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչներ | 0 | 167 | 0 |

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8.
## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

**Ուսանողական կյանքի ակտիվության ապահովում ռազմավարական նպատակով սահմանվել են հետևյալ խնդիրները՝**

1. Խթանել ուսանողների հասարակական գործունեությունը և նախաձեռնողականությունը:
2. Նպաստել ուսանողների գիտական, ինչպես նաև ուսանողական–մարզական գործունեության ակտիվացմանն ու արդիականացմանը:
3. Բարելավել ուսանողների աջակցության մեխանիզմները:
4. Խթանել ուսանողների հասարակական պատասխանատվության բարձրացման գործընթացների իրականացմանը:

Հաշվետու տարում ուսանողական խորհուրդը (ՈՒԽ) պարբերաբար իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների մասին իրազեկող միջոցառումներ:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ կազմակերպվել է ճանաչողական արշավ 1-ին կուրսեցիների համար:

Ռազմահայրենասիրական միջոցառումների շրջանակում ՈՒԽ նախաձեռնությամբ ուսանողներն այցելեն են Եռաբլուր պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Արցախյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին: Հաշվետու ժամանակահատվածում ՈւԽ անդամները մասնակցել են Սևակ Մնացականյանի անվան կրթամրցանակի կազմակերպչական հարցերին:

Ակտիվացել են միջբուհական կապերը այլ բուհերի ուսանողական խորհուրդների հետ, համատեղ կազմակերպվել են ուսանողակա բազկամարտի առաջնության խաղեր:

Գիրք նվիրելու օրվան ընդառաջ 2024թ. փետրվարի 17-ին կազմակերպվել է գրական–գեղարվեստական միջոցառում: Պատրաստվել է հատուկ տեսանյութ՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և վարչական մասի աշխատակիցների մասնակցությամբ: Միջոցառման հատուկ հյուրն էր դերասանուհի Արաքսյա Մելիքյանը:

Մեր գործընկեր TotoGaming ընկերության հետ համատեղ կազմակերպվել է ՀՖԿՍՊԻ-ի ուսանողների հանդիպումը օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, TotoGaming ընկերության դեսպան Միհրան Հարությունյանի հետ:

Հանդիպումն իրականացվել է տեսակամուրջի միջոցով, այն շատ ուսանելի և օգտակար է եղել երիտասարդ մարզիկների համար:

Կազմակերվել է ծառատունկ: Ուսանողները և դասախոսները մշտադալար ծառեր են տնկել բուհի գլխավոր մասնաշենքի դիմաց:




Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ինչպես նաև Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կայացել է «Գիտահետազոտական աշխատանքներ» խորագրով սեմինարը: Սեմինարի ընթացքում իրենց առաջին գիտահետազոտական աշխատանքները ներկայացրել են «Կինեզիոլոգիա» մասնագիտության ուսանողները:

ՈՒԳԸ նախաձեռնությամբ Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների հետ հանդիպում է տեղի ունեցել Dragon Garden Family Restaurant-ի HR բաժնի ղեկավար Ռոզա Գրիգորյանի հետ:

Սեմինար-քննարկման հիմնական թեման «Մուտք դեպի աշխատաշուկա»-ն էր

Բանախոսը ելույթի ընթացքում անդրադարձել է մի քանի հիմնական թեմաների՝

1.Ինչպե՞ս ներկայանալ հարցազրույցին
2.Փորձաշրջանի
3.Մարտահրավերներ
4. Երազանանքների աշխատանք
5.Նեթվորքինգ

Տեղի է ունեցել «Ինչպես գրել գիտական աշխատանք» սեմինարը: Ծաղկաձորի «Գրողների տանը» Ուսանողական գիտական ընկերության 24 հոգուց բաղկացած ուսանողական և դասախոսական խումբն մասնակցել է 2-օրյա գիտական սեմինարին:

«Սպորտ Կաբ» գիտահետազոտական կենտրոնի աշխատակից Գայանե Լալայանի զեկույցի թեման եղել է՝ «Ինչպես կազմակերպել գիտական հետազոտությունը»:

Սեմինարն ավարտվել է ուսանողների ակտիվ հարց ու պատասխանով:

Բուհում մարզական մթնոլորտ ապահովելու և զարգացնելու համատեքստում ՖԻՄԱ մարզական ակումբը ուսումնական տարվա ընթացքում ուսանողական, դասախոսական և վարչական անձնակազմի շրջանակում իրականացնում է մարզական միջոցառումների կազմակերպում և անցկացում, տեղական և միջազգային միջոցառումների համար մասնակիցների հայտագրում և նրանց մասնակցության ապահովում, ֆեդերացիաների և կազմակերպությունների հետ համագործակցային կապերի ստեղծում և զարգացում, պարգևատրում և լուսաբանում՝ համաձայն 2022-2026 ռազմավարական ծրագրում սահմանված խնդիրների ու գործողությունների (ՌԾ Նպատակ 8, խնդիր 8.2):

2023-2024 ուսումնական տարում ՖԻՄԱ–ն կազմակերպել և իրականացրել է հետևյալ աշխատանքները.

**1. Մասնակցություն ՀՀ ուսանողական հանրապետական 25-րդ ուսանողական խաղերին**

2024թ. մարտի 14-ից բուհի հավաքական թիմերը մասնակցել են ՀՀ 25-րդ ուսանողական մարզական խաղերին, ցուցաբերելով բարձր սպորտային արդյունքներ, տես՝ աղյուսակ 1:

| ՄԱՐԶԱՁԵՎ | ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ | ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԵՐ | |
|---|---|---|---|
| | | ՏՂԱՆԵՐ | ԱՂՋԻԿՆԵՐ |
| Ֆուտզալի լիգա | մարտից –մայիս | III | - |
| Շախմատ | մարտի 20-22 | I | - |
| Հրաձգություն | մարտի 28 | I | III |
| 3x3 բասկետբոլ | ապրիլի 17 | I | III |
| Սեղանի թենիս | ապրիլի 28 | I | - |
| Լողափնյա վոլեյբոլ | մայիսի 25 | I | I |

**2. Միջազգային մրցաշարեր**

2024թ. ապրիլի 21-26-ը Մոսկվայում տեղի է ունեցել Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի շախմատի գավաթի խաղարկությունը, որին մասնակցել են 8 երկրի 9 համլսարանական թիմեր, որոնց թվում էր նաև ՀՖԿՍՊԻ–ի հավաքական թիմը:

Ինստիտուտի հավաքական թիմը հաղթանակներ է տարել Ադրբեջանի, Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Տաջիկիստանի և Սանկտ-Պետերբուրգի թիմերի նկատմամբ՝ գրավելով 4-րդ հորիզոնականը:

Առաջնության հաղթող է ճանաչվել Մոսկվայի պետական համալսարանի թիմը:

2024թ.-ի հուլիսի 12-24-ը Հունգարիայի Դեբրեցեն և Միշկոլց քաղաքներում տեղի ունեցած Եվրոպական ուսանողական խաղերում ՀՖԿՍՊԻ-ին ներկայացված է եղել 3 մարզաձևով՝ շախմատ, թաեքվոնդո և պարա-սեղանի թենիս: Ինստիտուտի շախմատի հավաքական թիմը արագ շախմատի մրցումներում թիմային հաշվարկով գրավել է 3-րդ հորիզոնականը՝ վաստակելով բրոնզե մեդալ: Պարա-սեղանի թենիս մարզաձևում հանդես եկող մարզիկը նույնպես վերադարձել է բրոնզե մեդալով: Թաեքվոնդո մարզաձևում ներկայացված 2 մարզիկներից մեկին նույնպես հաջողվել է վաստակել բրոնզե մեդալ:

**3. Ներբուհական մրցաշարեր**

2024թ. մայիսի 15-ին ՖԻՄԱ–ի աջակցությամբ Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնը կազմակերպել և անցկացրել է կրոսավազքի մրցումներ, որին մասնակցել են տարբեր ամբիոնների 40 ուսանողներ: Մրցումները անցել են կազմակերպչական բարձր մակարդակով: Մրցանակային տեղեր զբաղեցրած ուսանող մարզիկները պարգևատրվել են մեդալներով և պատվոգրերով:

ՖԻՄԱ–ի հաշվետվողականությունը և ուսանողների ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով վերոհիշյալ բոլոր միջոցառումները լուսաբանվել են ՖԻՄԱ–ի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 9.
## ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սույն փաստաթուղթը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) հիմնադրամի Որակի ապահովման բաժնի (այսուհետ՝ ՈԱԲ) 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունն է: Ներկայացվում է հաշվետու տարում ՈԱԲ–ի կողմից պլանավորված աշխատանքների կատարողականը՝ համաձայն 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքային պլանի և ՈԱԲ կանոնակարգով սահմանված նպատակների և խնդիրների:

ՀՖԿՍՊԻ–ի որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) համակարգը բուհի գործունեության բոլոր ոլորտներին (կրթություն, գիտություն, բուհի միջազգայնացում և հանրային ծառայություններ) վերաբերող գործընթացների պլանավորման, մշտադիտարկման, խնդիրների վերհանման, բարելավումների իրականացման գործընթացների ամբողջությունն է:

ՀՖԿՍՊԻ–ի ՈԱ քաղաքականության նպատակն է աջակցել Ինստիտուտին՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելու համար: Այն իրականացվում է ըստ ՀՖԿՍՊԻ ռազմավարական պլանի և նպատակաուղղված է բուհի գործունեության բոլոր ոլորտներում որակի գործընթացների արդյունավետության բարձրացմանը՝ ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ, նրանց ներգրավման մեխանիզմների արդյունավետության բարձրացմամբ:

2019թ.–ից առ այսօր որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակում Որակի ապահովման բաժինն ամբողջականացրել է բուհի ինստիտուցիոնալ հավատարմագրման ողջ գործընթացը, պատրաստել է զեկույցը, մշակել է ՀՖԿՍՊԻ–ի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցը, աջակցել է բուհի առաքելության իրականացմանը, ռազմավարական ծրագրի մշակմանը, իրականացրել է որակի շարունակական բարելավմանն ուղղված փաստաթղթերի համալրում և վերանայում, նոր ընթացակարգերի և կառուցակարգերի գործարկում, տրամադրել է խորհրդատվական բազմագործառութային ծառայություններ, անցկացրել է հարցումներ և կատարել մասնագիտության կրթական ծրագրերի որակի կառավարման մշտադիտարկումներ ու վերլուծություններ, իրականացրել է որակի ապահովման մեխանիզմների վերաբերյալ ներքին և արտաքին վերապատրաստումներ, ձևավորել և ընդլայնել է արտաքին շահակիցների հետ փոխգործակցային հարաբերությունները, կազմել է առաջարկությունների փաթեթներ՝ նպաստելով բուհի գործունեության բոլոր տիրույթներում որակի ներքին ապահովման մշակույթի կայացմանն ու զարգացմանը:

Հաշվետու տարվա երկրորդ կիսամյակի ավարտին (մայիս ամսին) ՈԱ բաժնում տեղի է ունեցել աշխատակազմի փոփոխություն՝ նշանակվել է ՈԱԲ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Երիցյանը, ապա հուլիս ամսին հայտարարվել է ՈԱ բաժնի ղեկավարի և նույն բաժնի մասնագետի հաստիքների համալրման մրցույթ:

Մրցույթի արդյունքներով օգոստոսին բաժնի ղեկավար է ընտրվել Գ. Քթրյանը, իսկ մասնագետի հաստիքում է նշանակվել՝ Հ. Երիցյանը:

Հաշվետու տարվա ընթացքում հետևելով ՈՆԱ քաղաքականությանը՝ Որակի ապահովման բաժինը իրականացրել է Որակի ապահովման (ՈԱ) ներքին աուդիտի իրականացման արդյունքների (զեկույցի) ներկայացում ԳԽ–ում, աուդիտի արդյունքում դուրս բերված թերությունների վերացման պլան ժամանակացույցի մշակում արտաքին և ներքին շահակիցների հետադարձ կարծիքի մշտադիտարկումներ, ֆոկուս–խմբային քննարկումներ, ՈՆԱ մշտադիտարկումներ, խորհրդատվական հանդիպումներ, ՊԴ կազմի վերապատրաստումներ և այլ հանձնարարականներ՝ տարբեր գործընթացների վերաբերյալ բացատրագրեր:

Հաշվետու տարում ՈԱԲ–ը դիմել և իրականացրել է դասախոսական և ուսանողական շարժունության ծրագիր, մասնակցել է կրթական ծրագրերի փորձի փոխանակման միջազգային ծրագրերին և համաժողովներին: Շարունակական է եղել համագործակցությունը ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) հետ՝ պարբերաբար մասնակցելով ՈԱԱԿ վերապատրաստումներին և ՄԿԾ–ների բարելավման հաջողված փորձի առցանց հանդիպում–քննարկումներին:

Հիմք ընդունելով ՈԱ վերանայված քաղաքականությունը Որակի ապահովման բաժինը ընթացիկ ուսումնական տարում դիտարկել ու կարծիք է տվել բուհում տարբեր գործընթացներ կանոնակարգող փաստաթղթերի վերաբերյալ, մասնավորապես՝

- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականություն
- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի մագիստրոսական թեզի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման կարգ
- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում ավարտական աշխատանքի պատրաստման, գրախոսման, գնահատման և բողոքարկման ընթացակարգ
- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի պրակտիկայի կազմակերպման կանոնակարգ

Հաշվետու տարում ՈԱԲ համակարգմամբ մշակվել, շահակիցների հետ քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ընդունելության և ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացակարգը (հաստատված՝ դեկտեմբերի 12–ի ԳԽ նիստին):

Բաժինը նաև մշակել և ներքին շահակիցների քննարկմանն է ներկայացրել «Ռուբրիկային գնահատման քաղաքականությունը» (նախագծային տարբերակ):

**1. Որակի ապահովման (ՈԱ) ներքին աուդիտի իրականացման արդյունքների (զեկույցի) ներկայացում ԳԽ–ում, աուդիտի արդյունքում դուրս բերված թերությունների վերացման պլան ժամանակացույցի մշակում և ԳԽ–ի ներկայացում**

2022-2023 ուսումնական տարում ՈԱԲ–ի կողմից մշակված և ՀՖԿՍՊԻ–ի գիտխորհրդի կողմից հաստատված «Որակի ապահովման ներքին աուդիտի անցկացման կանոնակարգ»-ի և ըստ նախապես հաստատված ժամանակացույցի իրականացվել է ՈԱ աուդիտ՝ կիրարկելով ՈԱ ներքին աուդիտի անցկացման կանոնակարգով սահմանված մեխանիզմներն ու գործիքակազմը:

ՈԱ ներքին աուդիտի արդյունքում գնահատվել է բուհի ռազմավարական կառավարման համակարգը, գործող քաղաքականությունների և ընթացակարգերի որակի ապահովումը, տվյալների հավաքագրման և կառավարման գործող մեխանիզմներն ու ընթացակարգերը, մասնագիտական կրթական ծրագրերը, դասընթացները, դասավանդման, ուսուցման և գնահատման համակարգը, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմների գործունեության արդյունավետությունը, ՊԴ կազմի մասնագիտական աճի աջակցման, վերապատրաստման գործող մեխանիզմները, գիտահետազոտական գործունեության կառավարման համակարգը, ֆինանսական միջոցների բաշխման և ռեսուրսների կառավարման համակարգը, հասարակության հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները, արտաքին կապերի հաստատումը և միջազգայնացումը խրախուսող քաղաքականությունը և ընթացակարգերը:

Փաստաթղթային հենքի, հավաքագրված տվյալների, շահակիցների հետ ֆոկուս խմբային քննարկումների վերլուծության արդյունքում պատրաստվել է ՈԱ աուդիտի զեկույցի (եզրակացության) նախնական տարբերակը, որը 2023-2024 ուստարում կառուցվածքային ստորաբաժանումների հետ քննարկելուց և ՈԱ աուդիտի կանոնակարգով սահմանված գործընթացներ անցնելուց հետո ներկայացվել է ներքին շահակիցներին:

**2. ՄԿԾ աուդիտի իրականացման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում**

Հաշվետու տարում ՈԱԲ–ը առաջնորդվելով ԱՊ–ի գործողություններով և ՈԱ աուդիտի իրականացման ընթացակարգով, դիմել է բուհի ռեկտորին աջակցել կազմակերպելու ՄԿԾ աուդիտի նախնական փուլի աշխատանքները՝ հավաքագրել անհրաժշտ փաստաթղթերը և հաստատել աուդիտի իրականացման պլան ժամանակացույցը: Սակայն պայմանավորված բուհում ղեկավար կազմի (ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ամբիոնի վարիչներ) փոփոխություններով ՈԱԲ–ի ԱՊ–ի «Բակալավրի մասնագիտական կրթական ծրագրերի շրջափուլային գնահատում. ՄԿԾ ՈԱ ներքին աուդիտի անցկացում» գործողությունը (8.1) իր ենթագործողություններով չի իրականացվել հաշվետու տարում և նախատեսվում է իրականացնել 2024-2025 ուսումնական տարում:

**3. Շարունակական աջակցություն որակի մշակույթի զարգացմանը և որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի բարելավմանը**

**3.1. ՀՖԿՍՊԻ–ի փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կատարողականի արդյունքները**

Ինստիտուտում տեղի ունեցող ղեկավար կազմի փոփոխություններով պայմանավորված հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կատարողականի զեկույցը նախատեսվում է կազմել 2024-2025 ուստարվա ընթացքում:

**3.2. Քոլեջի ներքին որակի ապահովման մշտադիտարկում**

Հաշվետու տարում ՈԱԲ-ը նախաձեռնել է իրականացնել Քոլեջի ներքին որակի ապահովման մշտադիտարկում: Գործընթացը սկսելու համար ՈԱԲ-ը զեկուցագրով դիմել է ռեկտորին՝ կցելով անհրաժշտ փաստաթղթերի ցանկը: ՈԱԲ-ը իրականացրել է նաև Քքոլեջում չպլանավորված դասալսումներ, ֆոկուս խմբային քննարկումներ, սակայն զեկույցը չի ամբողջականացվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ փաստաթղթերի նախագծային տարբերակները հաշվետու տարվա ավարտին (հուլիս ամսին) է տրամադրվել բաժնին:

Պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվետու տարին ավարտվում է և բաժինը չի հասցնի կազմել Քոլեջի ներքին որակի ապահովման մշտադիտարկման զեկույցը, այն նախատեսվում է իրականացնել 2024-2025 ուստարում:

**3.3. Բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) շրջափուլային գնահատում**

2024թ.-ին «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» և «Լրագրություն» բակալավրիատի կրթական ծրագրերի քառամյա շրջափուլն ավարտվում է, և բուհում մեկնարկել է այս կրթական ծրագրերի մշտադիտարկումը: Սակայն, ըստ Ընթացակարգի սահմանված ժամկետներում կրթական ծրագրերի պատասխանատուների կողմից չեն ամբողջականացվել ՄԿԾ-ների մշտադիտարկումները, բացի այդ, պայմանավորված ֆակուլտետների նոր դեկանների ընտրությամբ, ռեկտորի ԺՊ–ի համաձայնությա, ՄԿԾ-ների մշտադիտարկումն ու վերանայումը նախատեսվել է իրականացնել 2024-2025 ուստարում:

**3.4. ՀՖԿՍՊԻ–ի կրեդիտային համակարգով բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգի մշակում և հաստատում**

Արտաքին կապերի և ռազմավարական ծրագրերի գծով պրոռեկտոր Ա. Նուշիկյանի զեկուցագրի հիման վրա ստեղծվել է մշտադիտարկման աշխատախումբ՝ ռազմավարական ծրագրի 2023 թվականի առաջընթացի, նպատակներին հասնելու գործընթացներն ուսումնասիրելու և մշտադիտարկման գործընթացն իրականացնելու նպատակով (հրաման N 176-Լ «23» մայիսի 2024թ.): Աշխատախմբի կազմում ընդգրկված է նաև ՈԱԲ ղեկավարը: Աշխատանքները կմեկնարկեն 2024-2025 ուստարում:

**4. Մասնակցություն դասալսումների իրականացման հանձնախմբի աշխատանքներին**

Նշենք, որ 2020-2021 ուստարվանից բուհում գործարկվում են կանոնավոր դասալսումների ֆորմալ մեխանիզմներ, ներդրված է «Դասալսումների կազմակերպման,

անցկացման և գնահատման կանոնակարգ»–ը, համաձայն որի ՈԱԲ–ը հանձնախմբի կազմում ունի ներգրավվածություն (կանոնակարգի 14–րդ կետ):

Հաշվետու տարվա 1-ին կիսամյակում ՈԱԲ իրականացրած դասալսումների արդյունքների հիման վրա իրականացրել է վերլուծություն:

**5. Ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կարծիքի ապահովում՝ որպես որակի շարունակական բարելավման մեխանիզմ**

ՀՖԿՍՊԻ–ի ռազմավարական կառավարման համատեքստում առանցքային նշանակություն ունի ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի շարունակական ապահովումը, կարևորվում է մասնավորապես հետադարձ կարծիքի ուսումնասիրման և վերլուծման մեխանիզմի հիման բարելավման գործողությունների իրականացման պրակտիկան:

2023-2024 ուստարում ևս ՈԱԲ–ը շարունակել է կանոնավոր կերպով իրականացնել շահակիցների հետադարձ կարծիքի գնահատման հարցումներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ներքին շահակիցների հարցումներ, որոնց վերլուծության արդյունքում կազմվել են հետևյալ զեկույցները.

✓ Հարցում առաջին կուրսեցիների հետ՝ բուհի և մասնագիտության ընտրության դրդապատճառների վերաբերյալ,

✓ ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի գնահատում,

Որակի ապահովման բաժինը, հետամուտ լինելով բուհի մատուցած կրթության որակի բարելավմանն ու աշխատաշուկայի համար մրցունակ կադրեր պատրաստելու քաղաքականությանը, հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է արտաքին շահակիցների հարցումներ՝ «Լրագրություն» (որակավորումը՝ «լրագրող») և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական աշխատաշուկայի կարիքների գնահատում: Ուսումնասիրության նպատակն է եղել թիրախավորել գործատուի ներկայիս պահանջները, բացահայտել աշխատաշուկայի զարգացումները, աջակցել մասնագիտական կրթական ծրագրի որակի և մրցունակության բարձրացմանը: Նախատեսվել է, որ մասնագիտական աշխատաշուկայի պահանջների ու գործատուի ներկայացրած առաջարկների վերլուծության արդյունքները կկիրառվեն ՄԿԾ շրջափուլային վերանայման գործընթացում՝ նպաստելով կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը:

Իրականացված բոլոր հարցումների արդյունքները ներկայացվել են շահակիցներին, քննարկվել են կառավարման օղակներում հետագա բարելավումների համար, պատասխանատու ստորաբաժանումներին ներկայացվել են հստակ առաջարկներ գործընթացներում թերությունները շտկելու և դուրսբերված լավագույն փորձը տարածելու նպատակով:

Հարկ է նշել, որ ՈԱԲ որոշ հարցումների իրականացման համար հաշվետու տարվա 2-րդ կիսամյակում ի հայտ են եկել տարաբնույթ խոչընդոտներ՝ ուսանողների բացակայություն, դասերի չեղարկում, հարցվողների քիչ մասնակցություն, հարցումների

մասնակցելու դժկամություն և այլն, ինչի հետևանքով 2-րդ կիսամյակում կազմակերպված «ՀՖԿՍՊԻ-ում դասընթացի և դասավանդման որակի ու արդյունավետության գնահատում», «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում» ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատում», «ՊԴ և վարչական կազմի կարիքների գնահատում», «Քննական գործընթացի կազմակերպման և անցկացման» վերաբերյալ հարցումները չեն վերլուծվել, քանի որ ապահովված չի եղել ներկայացուցչական քանակը:

### 6. ՈԱԲ վերապատրաստումներ, կարողությունների զարգացման աշխատաժողովներ, խորհրդատվական հանդիպումներ

- ՈԱ բաժնի կողմից կազմակերպվել է տեղեկատվական հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ, նրանց են ներկայացվել իրենց գործառույթները և համատեղ իրականացվող աշխատանքները:
- ՈԱ բաժնի միջնորդությամբ գիտական սեմինար երիտասարդ դասախոսների համար ծրագրի շրջանակում հրավիրյալ դասախոս Հովհաննես Երիցյանը ներկայացրել է «Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոտեցումները» թեմայով դասախոսություն:
- ՈԱ բաժինը հիմք ընդունելով 2023 թվականին գիտխորհրդում հաստատած «Կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ»-ը ՄԿԾ աշխատախմբերի համար նախաձեռնել է վերապատրաստում մեթոդական աջակցություն ցուցաբերելու և ՄԿԾ մշտադիտարկման ու վերանայման կարողությունների զարգացման նպատակով: ՄԿԾ աշխատախմբին ներկայացվել են ընթացակարգի ընդհանուր դրույթներն ու ընթացիկ մշտադիտարկման ընթացքը, մշտադիտարկում կատարելու քայլերի հերթականությունն ու հավելվածները լրացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման եղանակները:

### 6.1 «Որակի օրեր» ձևաչափով խորհրդատվական, տեղեկատվական հանդիպումների կանոնավոր իրականացում

2023-2024 ուսումնական տարվա ընթացքում Որակի ապահովման բաժինը շարունակաբար իրականացրել է անհատական խորհրդատվություններ ուսումնառության, դասավանդման, կառավարման, միջազգայնացման և հանրայնացման գործընթացների վերաբերյալ:

ՈԱԲ խորհրդատվական, տեղեկատվական աշխատանքներն իրականացվել են ըստ ժամանակացույցի և ընթացիկ հանդիպումների ձևաչափով՝ պայմանավորված տարբեր գործընթացներում ներգրավված ստորաբաժանումների կարիքներով:

Դասավանդողների փորձի փոխանակման և մասնագիտական կարողությունների բարելավմանն են միտված ՀՀ ՈԱԱԿ–ի նախաձեռնությամբ պարբերաբար անցկացվող ՄԿԾ բարելավման հաջողված փորձի հանդիպում–քննարկումները, որին Ինստիտուտի

Որակի ապահովմանը բաժինը պարբերաբար ներգրավել է բուհի ֆակուլտետներին և ամբիոնի դասախոսական կազմից ներկայացուցիչներին:

«Որակի օրեր» ձևաչափով անցկացված հանդիպում–աշխատաժողովների շրջանակում հաջողված էր մասնավորապես Ֆիզիկական վերականգնման և Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի հետ համագործակցությունը, որի շրջանակում ամբիոնի դասախոսները «Որակը լսարանում՝ դասավանդման և գնահատման մոտեցումները» խորագրով անցկացրել են դասախոսություններ ՊԴ կազմի համար, ներկայացրել դասերի պլանի կառուցման, ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման փորձը: Մասնավորապես՝ Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դասախոս, կ.գ.թ. դոցենտ Արևիկ Ղարիբյանը ներկայացրել է «Տերմինաբանություն առարկայի դասավանդման փորձի բարելավման մեթոդները, իսկ Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դասախոս, ս. գ. թ. Լիլիթ Հակոբյանը՝ Իմիջի ձևավորման տեխնոլոգիաների կիրառման մեթոդները:

Ամբիոնների որակի պատասխանատուները կիսվել են իրենց կողմից հաճախ կիրառվող դասավանդման մեթոդներով:

Գնահատելով անհատական խորհրդատվության անհրաժեշտությունն ու օգտակարությունը, ՈԱԲ-ը «Որակի օրեր» գործողությունը նախատեսել է նաև բաժնի հաջորդ տարվա աշխատանքային պլանում:

**7. Համագործակցության զարգացում արտաքին գործընկերների հետ**

**7.1 Շարունակական համագործակցության ապահովում ՀՀ ՈԱԱԿ–ի հետ**

Հաշվետու տարում ևս շարունակվել են ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հետ պարբերական հանդիպումները, մասնակցությունը ՈԱԱԿ վերապատրաստուներին ու առցանց աշխատաժողովներին:

ՈԱԲ աշխատակազմը, ներգրավելով բուհի ֆակուլտետներին և ամբիոնների վարիչներին ու ՊԴ կազմին, պարբերաբար մասնակցել է ՄԿԾ բարելավման հաջողված փորձի ներկայացման առցանց քննարկումներին, որտեղ ՀՖԿՍՊԻ–ի ներկայացուցիչները, ակտիվ մասնակցություն ունենալով քննարկումներին, մեկնաբանել են ՄԿԾ որակի ապահովման և արդիականացման ներբուհական գործընթացները, կիսվել լավագույն փորձով:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ ղեկավարը ռեկտորի ԺՊ–ի հետ համատեղ մասնակցել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) և գերմանական Որակի ապահովման գործակալության (AQAS) նախաձեռնած համատեղ միջազգային հավատարմագրման գործընթացի առանձնահատկություններին նվիրված աշխատաժողովին:

ՈԱԲ–ը, հետամուտ լինելով ՈԱԱԿ–ի հետ համագործակցությունների շարունակականության ապահովմանը ձեռք է բերել պայմանավորվածություն 2024-2025 ուսումնական տարվա ընթացքում ՄԿԾ պատասխանատուների, ՄԿԾ վերանայման և մշտադիտարկման աշխատախմբի անդամների համար բուհում կազմակերպել ՄԿԾ վերջնարդյունքների գնահատման վերաբերյալ վերապատրաստումներ:

**7.2 Մասնակցություն տեղական և միջազգային մասնագիտական համաժողովներին, փորձի փոխանակման ծրագրերին**

ՈԱԲ ղեկավարի ջանքերով նախորդ տարի սկսվել էր բանակցային գործընթաց ITV մեդիակոնցեռնի «NewsX» հեռուստաընկերության հետ՝ «Լրագրություն» կրթական ծրագրի ուսումնառողների մասնագիտական պրակտիկայի շարժունություն կազմակերպելու ուղղությամբ:

Նման համագործակցություն հնարավոր է դարձել հնդկական կողմի հետ երկարաժամկետ ու ամենօրյա առցանց խորհրդակցությունների և շփումների միջոցով, և արդյունքում հաջողվել է իրականացնել մեկշաբաթյա ՊԴ կազմի շարժունություն և երկշաբաթյա ուսանողական պրակտիկա, ձեռք է բերել համագործակցության պայմանագիր:

**8. Հաղորդակցություն ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայքի միջոցով**

ՈԱԲ գործունեության հանրայնացման համար ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքէջի համապատասխան բաժնում արտաքին և ներքին լսարանին հասանելի են դարձել Որակի ապահովման բաժնի իրականացրած աշխատանքներն ու մշակած փաստաթղթերը՝ մշտադիտարկումներ, հարցումներ, ձեռնարկներ:

Բաժինը ողջ ուսումնական տարվա ընթացքում հավաքագրել և թվայնացրել է իր կատարած աշխատանքները՝ ստեղծելով համապարփակ շտեմարան, որն ընդգրկում է՝

- ✓ ՀՖԿՍՊԻ–ի ՈԱ համակարգին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը՝ ՈԱ քաղաքականություն, ՈԱ ձեռնարկ, կրթական ծրագրերի, դասախոսական կազմի, ուսանողների գնահատման և ուսումնառության ռեսուրսների որակի ու գնահատման հետ կապված փաստաթղթերը,
- ✓ ՈԱ գործընթացների իրականացման արդյունքների վերաբերյալ բոլոր հաշվետվությունները, մշտադիտարկումներն ու զեկույցները,
- ✓ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման համար պատրաստված ինքնագնահատման վերլուծական զեկույցները և հարակից փաստաթղթերը,
- ✓ կրթական ձեռնարկներն ու ՈԱ ուղենիշները
- ✓ տարբեր հարցումների արդյունքների վերլուծությունները:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 10.
## ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կարիերայի բաժինը Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում է և իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով սերտ համագործակցում է Ինստիտուտի այլ կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տարբեր պետական, հասարակական, բիզնես, մարզական և միջազգային գործընկերների հետ: Բաժնի հիմնական նպատակն է՝ շրջանավարտ–բուհ արդյունավետ և շարունակական կապի ստեղծումն ու ամրապնդումը, Ինստիտուտի և գործատուների միջև արդյունավետ համագործակցության հաստատումը, աշխատաշուկայում ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը:

Հաշվետու ժամանակահատվածում Կարիերայի բաժնի կողմից իրականացվել են բաժնի աշխատանքային պլանով նախատեսված գործողությունները:

Ամբողջ տարվա ընթացքում բաժինը կապեր է ստեղծել շրջանավարտների և գործատուների միջև, որի արդյունքում տարբեր կազմակերպություններում, ՀՀ հանրակրթական դպրոցներում և մանկապարտեզներում աշխատանքի են տեղավորվել ՀՖԿՍՊԻ ուսանողներ և շրջանավարտներ: Բաժնի անմիջական միջնորդությամբ ՀՖԿՍՊԻ–ի թվով 11 շրջանավարտ և ուսանող աշխատանքի է տեղավորվել որպես Ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Համաձայն կնքված հուշագրերի, բուհի ուսանողները հնարավորություն են ստանում պրակտիկա անցնել մասնագիտացված կազմակերպություններում:

Հաշվետու ժամանակահատվածում բաժնի և գործընկեր կազմակերպությունների կողմից ուսանողների և շրջանավարտների համար պարբերաբար կազմակերպվել և անցկացվել են դասնթացներ արդի աշխատաշուկայում անհրաժեշտ տարբեր գիտելիքներ և հմտություններ զարգացնելու համար: Մասնավորապես՝

1. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ՝ «Հաջողելու ժամանակն է»

2. «Reebok sports club» ընկերության մարդկային ռեսուրսների կառավարման թիմ (Actual HR Parther)

ՀՖԿՍՊԻ ճանաչելիության բարձրացման, ինչպես նաև կրթական ծրագրերի իրազեկման նպատակով կատարված հիմնական քայլերը ներկայացված են ստորև.

Կարիերայի բաժինը նախաձեռնել և իրականացրել է ճանաչողական այցեր հետևյալ հանրակրթական դպրոցների և վարժարանների աշակերտների համար՝
1" Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 հիմնական դպրոց,
2" Մոնթե Մելքոնյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց,
3" Գանձակ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց,
4" Բեկ մշակութային կրթամարզական հասարակական կազմակերպություն
5" Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի Արայի անվան միջնակարգ դպրոց:

EXPO







Ներկայացված տվյալներից պարզ է դառնում, որ մասնագիտական ոլորտում շրջանավարտների զբաղվածության մակարդակը բավականին ցածր է, ինչն առաջին պլան է մղում ուսանողների կարիերայի զարգացմանն օժանդակելու բուհի հանձնառության կանորությունը:

Ուսանողների և ապագա շրջանավարտների հետ հաղորդակցական հոսքերը կառավարելու նպատակով ներդրվել է ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեն պահպանվելու է նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի պահպանմանը:

Վերանայվում են գործատուների և շրջանավարտների հետադարձ կապի ուսումնասիրման մեխանիզմներն ու գործիքակազմը, ինչն իր հերթին կօգնի ուսումնասիրելու և գնահատելու բուհում իրականացվող մասնագիտական կրթության որակն ու կրթական ծրագրերի բովանդակության հուսալիությունը:

Հաշվետու տարում բաժինը շարունակել է իր ֆեյսբուքյան էջով ուսանողներին իրազեկել մասնագիտական աշխատաշուկայում առկա թափուր տեղերի մասին, կազմակերպել կլոր սեղան-քննարկումներ ոլորտի գործատուների հետ:

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՍՊՈՐՏՈՒՍ» ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՔՈԼԵՋ

ՀՖԿՍՊԻ «Սպորտուս» հենակետային քոլեջում նոր ուսումնական տարվա մեկնարկին նվիրված կազմակերպվել է միջոցառում:

Օգոստոս ամսին իրականացվել է քոլեջ դիմած բոլոր դիմորդների փաստաթղթային ընդունելությունը և ընդունելության քննությունների կազմակերպումը՝ ըստ ՄԿՈՒ ընդունելության կարգի:

Հավաքագրվել են բոլոր անձնական գործերը՝ ըստ մասնագիտությունների:

Քոլեջում սկսվել է բնականոն դասընթացը սեպտեմբերի 1-ի դրությամբ: Նույն ամսում իրականացվել է առարկայական ծրագրերի, օրացուցային թեմատիկ պլանների մշակում և կազմում, ծրագրերի կազմում՝ ըստ չափորոշչի պահանջների:

Ձեռք են բերվել դասագրքեր, մատյաններ, ստուգման գրքույկներ: Կատարել ենք մանկավարժների ընտրություն և պայմանագրերի վերակնքում, դասացուցակի կազմում, ուսանողների հրամանագրում:

Ծնողական և մանկավարժական ժողովների անցկացում, ծնողների հետ պայմանագրերի կնքում, ծնողները ծանոթացել են քոլեջի կանոնակարգին, լիցենզիաներին և բուհի կանոնադրությանը:

Ուսանողներից հավաքագրվել են փաստաթղթեր արտոնություններ ունենալու և հետագայում զեղչային համակարգից օգտվելու համար:

Ուսուցման ընթացքում կազակերպվել և վերահսկվել է ուսումնական գործընթացը: Կատարվել է ուսանողների ամենօրյա ներկայությունների մշտադիտարկում:

Ուսանողների ծնողների հետ անցկացվել են անհատական զրույցներ՝ ուսանողի հաճախումների, վարքի, պրակտիկաների ժամանակահատվածի վերաբերյալ:

Իրականացվել են՝

- դասացուցակի, դասաբաշխումների կազմում՝ ըստ չափորոշիչների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, օրացուցային թեմատիկ պլանների:
- մատենավարման վերահսկողություն և դիտողությունների ամրագրում, որից հետո դասախոսները ծանոթացել են դիտողություններին:

Մայիս ամսին անցկացվել է բոլոր այն առարկաների ստուգարքները, որոնց ժամաքանակը լրացել է ըստ ուսումնական պլանի: Կամվել են բոլոր պետական ավարտական քննությունների թեստերը և ձևանմուշները: Իրականացվել է մոդուլային ծրագրերի ծանոթացում և քննարկում պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Իրականացվել է 2023-2024 ուսմնական տարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի կազմում, կազմակերպում, վերահսկում, 1-ին կուրսեցիների՝ հիմնական կրթության պետական ավարտական 3 քննությունների անցկացման քննական հանձնաժողովների կազմի ստեղծում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաների քննությունների կազմակերպում, վերահսկում:

ՄԿՈՒՀԶԱԿ–ի կողմից կազմակերպված ՄԿՈՒ հաստատությունների եռօրյա վերապատրաստման մոդուլային ծրագրերի շրջանակում վերապատրաստվել է քոլեջի 10 դասախոս: Գործընթացը շարունակական է հաջորդ ուսումնական տարիների համար:

Բաց դռների օր է հայտարարավել 2024-2025 ուստարվա ընդունելության վերաբերյալ մայիս ամսին, որին մասնակցել է մոտավորապես 40 ծնող, որի շրջանակում իրականացվել է դիմորդների հետ անհատական խորհրդատվություն՝ մասնագիտական կողմնորոշման թեմայով:

Իրականացվել են բաց դասեր՝

1.1. ս/թ մարտի 19, «Բուժական մերսում» 2-րդ կուրս, դասախոս Գայանե Մովսեսյան, առարկան «Ներքին հիվանդություններ»,

1.2. ս/թ մարտի 28, «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» 2-րդ կուրս, դասախոս Գայանե Մովսեսյան, առարկան «Սիրտանոթային և նյարդային համակարգի անատոմիական առանձնահատկությունները», թեման «Զգացող շարժիչ խառը նյարդեր»,

1.3. ս/թ մարտի 28, «Բուժական մերսում» 1-ին կուրս, դասախոս Սիրանուշ Սաֆարյան, առարկան Հայոց լեզու, թեման «Բայի դիմավոր և անդեմ ձևեր»,

1.4. ս/թ ապրիլի 8, դասախոս՝ Աննա Սինանյան “Fascinating Facts, Degrees of Adjectives,

1.5. ս/թ ապրիլի 11-ին «Հայ գրականություն», «Զբոսաշրջություն» 1- ին կուրս, թեման «Չարենցը՝ միշտ արդիական»,

1.6. ս/թ ապրիլի 11-ին «Առաջին օգնություն», «Արյունահոսություն, բաց և փակ վնասվածքներ», դասախոս Գայանե Անդրեասյան, «Բուժական մերսում» մասնագիտություն, 2-րդ կուրս:

Քոլեջի 2-րդ կուրսի բուժական մերսում բաժնի ուսանողները, նոյեմբերի 19-ին ֆիզիոլոգիա առարկայի դասը անցկացրել են Օրբելի եղբայրների տուն թանգարանում:

Դասի ընթացքում ուսանող-ները ծանոթացել են աշխարահռչակ գիտնական-ների կյանքի պատմությանը, անցած բարդ գիտական ուղղուն, և հայ գիտնական-ների ընտանեկան գեղեցիկ ավանդույթներին:

Իրականացված դասալսումների արդյունքում պարզվել, որ ուսուցիչների գերակշիռ մասը դասերը վարում է արդյունավետ, ուսումնական ծրագրերին և չափորոշիչներին համապատասխան և նոր մեթոդների կիրառմամբ: Իսկ նկատված որոշակի թերությունները մանրամասն քննարկվել են համապատասխան նիստում, տրվել են որոշակի ցուցումներ և փորձել շտկումներ կատարել հնարավորինս կարճ ժամանակահատվածում:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Սպորտուս» հենակետային քոլեջի դասապրոցեսը կազմակերպելու համար Ինստիտուտը Դասագրքերի և Տեղեկատվական Հաղորդակցման Տեխնոլոգիաների Շրջանառու Հիմնադրամից 2023-2024 ուսումնական տարում ձեռք է բերել 150 միավոր դասագիրք: ՀՖԿՍՊԻ–ի հենակետային քոլեջ–ը 2023-2024 ուսումնական տարում «Երևանի Մ. Քաջունու անվան թիվ 54 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ից ժամանակավոր օգտագործման է վերցրել 112 միավոր դասագիրք (52740 դր.) , ՀՃՇՊՀ-ի «Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոց»-ից ՝ 14 միավոր դասագիրք (7700 դր.) :

2023-2024 ուսումնական տարում ի պատասխան Դասագրքերի և Տեղեկատվական Հաղորդակցման Տեխնոլոգիաների Շրջանառու Հիմնադրամի տնօրեն Գոռ Գասպարյանի 148-12/23 գրության, ներկայացվել է պահանջվող տեղեկատվություն Արցախից տեղահանված սովորողներին հատկացված դասագրքերի ներդումային գումարների չափի մասին՝ ըստ ներկայացված ձևաչափի: Նշված գումարը փոխհատուցվել է ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

Իրազեկման աշխատանքներ են կատարվել հիմնական դպրոցներից եկած աշակերտների համար: Ներկայացրել ենք քոլեջի կրթական ծրագրերը, բաժանել բուկլետներ:



«Սպորտուս» քոլեջի ֆեսբուքյան էջում տեղադրվել են տեղեկություններ քոլեջի, ընդհանուր գործունեության և բաց դասերի մասին: Դեկտեմբեր ամսին կազմվել է ստուգարքների հանձնման գրաֆիկը՝ ըստ ժամատախտակի և դասախոսների, այդ մասին տեղեկացնելով ուսանողներին:

Կիսամյակի սկզբին կազմվել է դասացուցակ, ինչպես նաև բաց դասերի և դասալսումների ժամատախտակ: Ստուգվել են 4 խմբերի մատյանները և գրվել են դիտողություններ:

Քոլեջը համալրված է բարձրագույն կրթություն և մասնագիտական խորը պատրաստվածություն ունեցող ուսուցիչներով: Նրանք երկարամյա փորձ ունեցող մանկավարժներ են, որոնք հրաշալի են պատկերացնում քոլեջի արդի խնդիրները, աշխատում են բարեխղճորեն, անընդհատ զբաղվում են ինքնակրթությամբ, իրենց աշխատանքում ներդնում են նորն ու առաջավորը, մեծ տեղ են տալիս համակարգչային գրագիտությանը:

Կազմվել է 2-րդ փուլի ստուգարքների լուծարման գրաֆիկը և ներկայացվել ուսանողներին: Տպագրվել են 2-րդ կիսամյակի բոլոր առարկաների թեստային առաջադրանքները ստուգարքներն անցկացնելու համար:

Քոլեջի տնօրինության կողմից մշակվել է 2 կանոնակարգ՝ ուսանողների ներքին կարգապահական կանոնների և ստուգարքների գնահատման վերաբերյալ և ներկայացվել է իրավական ապահովմանն բաժի կարծիքին:

Քոլեջի կողմից ներկայացվել է հաստիքացուցակ քոլեջում նոր վարչական աշխատողների ներգրավվման համար:

Քոլեջի տնօրինությունը մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված հանդիպմանը՝ փոխնախարար Ա. Սվաջյանի հետ, որտեղ քննարկվել են ՄԿՈՒ համակարգի մարտահրավերները, խնդիրները և առաջարկություններ են արվել աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:

## 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ




| | Բուժական մերսում | Զբոսաշրջություն | Թիկնապահական գործ | Ֆիզիկական կուլտուրա և սպորտ |
|---|---|---|---|---|
| ՀՀ քաղաքացի | 24 | 26 | 15 | 40 |
| օտարերկրացի | | | | 5 |

**Մասնագիտական ուղղությունները՝ միջին մասնագիտական**

03.07 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

23.07 Զբոսաշրջություն/ ըստ ճյուղերի / սպորտային

04.11 Բուժական մերսում

**Նախնական արհեստագործական՝** թիկնապահական գործ

Քոլեջը ունի www.sportedu.am –ում «Սպորտուս»– պաշտոնական էջ, Facebook –ում սոցիալական ցանցում պաշտոնական էջ:


«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հենակետային քոլեջը

ՍՊՈՐՏՈՒՍ

ՄՏԱԾՒՐ, ԳՈՐԾԻՐ, ՆՎԱՃԻՐ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Սպորտուս» հենակետային քոլեջը ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և սպորտի հարակից ոլորտների համար մասնագետներ պատրաստող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որը հնարավորություն է տալիս հիմնական կրթության հիմքով առկա ուսուցման տարիների ընթացքում հանրակրթական ծրագրին զուգահեռ ձեռք բերել մասնագիտական որակավորում:

- «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 4 տարի է, ուսման վարձը՝ 220.000 ՀՀ դրամ:
- «Զբոսաշրջություն» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 3 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:
- «Բուժական մերսում» միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսման տևողությունը 3 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:
- «Թիկնապահական գործ» նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով ուսման տևողությունը 8 տարի է, ուսման վարձը՝ 250.000 ՀՀ դրամ:

«Սպորտուսը» հավակնում է դառնալ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ինչպես նաև սպորտը սպասարկող ոլորտների մրցունակ մասնագետների պատրաստող միջին մասնագիտական ուսումնական հաստատություն:

| ՀՖԿՍՊԻ SWOT (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2023-2024 | |
|---|---|
| **ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ<br>ԱՌԱՋԸՆԹԱՑ** | **ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ<br>ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ** |
| 1. ՀՖԿՍՊԻ 2022-2026 թթ. ռազմավարական ծրագրի առկայություն:<br>2. Ռազմավարական ծրագրի գործողությունների պլան–ժամանակացույցի առկայություն:<br>3. ՀՖԿՍՊԻ ռազմավարական կառավարման, ենթակառուցվածքային և վարչարարական փոփոխությունների իրականացում:<br>4. ՀՖԿՍՊԻ կազմակերպական կառուցվածքում կառավարման հորիզոնական և ինտեգրալ կապերի ապահովում:<br>5. Կառավարման համակարգում առավել արդյունավետ մոտեցումների ներդնում, որոշումների կայացման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ապահովում: Կառավարման մասնակցային մոդելի կատարելագործում:<br>6. Ինստիտուտի կրթական և այլ գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքի վերանայման և մշակման գործընթացի ամփոփում:<br>7. Ներքին փաստաթղթաշրջանառության և հաղորդակցման գործընթացներում էլեկտրոնային գործիքակազմի գործընթացի շարունակական բարելավում:<br>8. Գնահատականների մուտքագրման և պահպանման էլեկտրոնային համակարգի բարելավում:<br>9. Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման և համալրման գործընթացի իրականացման համար հրապարակային և բաց մրցութային ընթացակարգի ներդրում և շարունակական բարելավում:<br>10. Գործատու ոլորտներից դասախոսներով ՊԴ կազմի համալրվածություն:<br>11. Օտար լեզուների ուսուցման հնարավորությունների մեծացում:<br>12. Կրթական ծրագրերի իրականացման համար բարենպաստ ուսումնական | 1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական զարգացման և որակի ապահովման գործընթացներում արտաքին առանցքային շահակիցների (շրջանավարտներ, գործատուներ) մասնակցության և նախաձեռնողականության ցածր մակարդակ:<br>2. Ֆինանսական պլանավորման և ֆինանսական մուտքերի ու ռեսուրսների բաշխման ոչ հստակ քաղաքականություն և ընթացակարգեր:<br>3. Ռիսկերի կառավարման համակարգի ոչ լիարժեք գործադրում և ճգնաժամերի դիմակայմանն ուղղված ռազմավարության թերի կիրառում:<br>4. Գիտահետազոտական աշխատանքներում դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածություն:<br>5. Գիտահետազոտական արդյունքների առևտրայնացման մշակույթի և դրա կանոնակարգման գործընթացների բացակայություն:<br>6. ՊԴ կազմի ընդհանուր հաստիքացուցակում օտարերկրյա գիտական կադրերի ներգրավվածության բացակայություն:<br>7. Դասերին ուսանողների հաճախելիության ապահովման մեխանիզմների անարդյունավետություն:<br>8. Ուսանողների գիտելիքների ու հմտությունների ստուգման և գնահատման չափանիշների և կրթական վերջնարդյունքների միջև թույլ կապ:<br>9. Ուսուցման գործընթացում ուսանողի առաջընթացի օբյեկտիվ և թափանցիկ արձանագրման համար գնահատման քաղաքականության, գնահատման մեթոդների անկատարություն:<br>10. Ներքին շահակիցների թույլ ներգրավվածություն որակի ապահվման գործընթացներում:<br>11. ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք կիրառում կառավարման գործընթացներում: |

| | |
|---|---|
| միջավայրի շարունակական բարելավում՝ որպես զարգացման առաջնահերթություն:<br>13. Նյութատեխնիկական բազայի թարմացում, արդիականացում և բազմազանեցում, աշխատանքային պայմանների շարունակական բարելավում:<br>14. Հատուկ կարիքներ ունեցող ուսումնառողների համար բուհի շենքային, լսարանային և գույքային պայմանների մատչելիության ապահովում:<br>15. Տեղական շուկայում պահանջարկ ունեցող նոր կրթական ծրագրերի ներդրման հնարավորությունների մշտադիտարկում:<br>16. «Սպորտուս» հենակետային քոլեջի գործունեության ակտիվացում, հանրայնացում, ընդլայնում:<br>17. Հենակետային քոլեջում 4 ուղղությունների առկայություն:<br>18. Իրազեկման աշխատանքների շնորհիվ ՀՀ ԿԳՄՄՆ–ի կողմից արտոնված տեղերի ամբողջական համալրում, հավելյալ տեղերի ավելացում: Ֆինանսական հոսքերի բազմազանեցում:<br>19. Հասարակության լայն շրջանակների հետ կապերի ակտիվացում, բուհի գործունեության հանրայնացում, լուսաբանումների միջոցով ինստիտուտում գործող մասնագիտությունների գրավչության բարձրացում:<br>20. Դիմորդների և ընդունվողների ներհոսքի ապահովում:<br>21. Ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված համալիր մոտեցումների գործարկում, ծածկագրված քննակարգի ներդնում:<br>22. ՀՖԿՍՊԻ աշխատակազմի կատարողական բարելավմանն ուղղված ռազմավարության մշակում և հաստատում:<br>23. Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության խրախուսում, հավելավճարի հատկացում միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում հրապարակումների համար: | 12. Ուսումնական և վարչական ստորաբաժանումների հաշվետվողականության համակարգում իրականացված գործընթացների որակի մասին հավաստի տեղեկատվության, վերլուծությունների և քննադատական մոտեցման պակաս:<br>13. Ստորաբաժանումների միջև ոչ արդյունավետ համագործակցության իրականացում<br>14. Ստորին օղակներում գործընթացների պլանավորման ռազմավարական մտածողության, զարգացման տեսլականի հստակեցման մոտեցումների պակաս:<br>15. Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների չգիտակցված պատասխանատվության և որակի մշակույթի ընկալման դժվարությունները:<br>16. Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների ցածր մակարդակ:<br>17. Ուսանողների շարժունության բացակայություն:<br>18. Որակի ապահովման գծով պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի փորձի պակաս:<br>20. Արտաքին շահակիցների թույլ ներգրավվածությունը ՈԱ հիմնարար գործընթացներում:<br>21. Հաշվետվողականության համակարգում վերլուծական կարողությունների փորձի պակասը:<br>22. Թվային տվյալների ներմուծման միասնական հարթակի բացակայություն: |

| | |
|---|---|
| 24. Գործատու-բուհ կապերի ընդլայնում, ուսանողական պրակտիկայի հնարավորությունների ընդլայնման նպատակով նոր գործընկերների ձեռքբերում, համագործակցության նոր պայմանագրերի և հուշագրերի կնքում:<br>25. Զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության ակտիվացում՝ բուհի կողմից մատուցվող կրթական ծառայությունների մասին տեղեկատվության տրամադրման, բուհի ղեկավար կազմի կողմից տրվող հարցազրույցների և մամուլի ասուլիսների միջոցով:<br>27. Որակի ապահովման քաղաքականության, ընթացակարգերի, մեխանիզմների, կարիքների վերհանման գործիքակազմի բազմազանություն:<br>28. Ներքին շահակիցների հետ հետադարձ կապի կայուն մեխանիզմների կիրառում, հարցումների կանոնավոր իրականացում և դրանց արդյունքների ներդնում՝ որոշումների կայացման գործընթացում:<br>29. Որակի ներքին ապահովման մշտադիտարկումներ, պարբերական գնահատումներ և վերլուծումներ:<br>30. Բացահայտված կարիք-նպատակային վերապատրաստում-ակնկալվող արդյունք-արդյունքի գնահատում՝ որակի ապահովման գործիքակազմի ներդնում և կիրառում:<br>31. Որակի ապահովման միջազգային կառույցների հետ համագործակցային կապերի ձևավորում, մասնակցություն միջազգային հեղինակավոր հարթակներում անցկացված վեբինարներին և քննարկումներին:<br>32. ՀՖԿՍՊԻ միջազգայնացման գործընթացի խթանում՝ օտարերկրյա գործընկեր համալսարանների և միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների ներկայացուցիչների հետ՝ գիտակրթական համատեղ ծրագրերի մշակման միջոցով:<br>33. Գրավչություն օտարերկրյա ուսանողների համար և նրանց ներհոսք, ուսանողական և դասախոսական շարժունության | |

| | |
|---|---|
| ծրագրերի իրականացման նախադրյալների ստեղծում:<br>34.Erasmus + կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի հայտագրում և շահում:<br>35.Նախապատրաստական դասընթացների և լրացուցիչ շարունակական կրթության իրականացում: Ֆինանսական մուտքերի բազմազանեցում:<br>36.Միջազգային առանցքային կառույցների հետ համատեղ տեսակոնֆերանսների կազմակերպում և անցկացում:<br>37.Կրթական ծրագրերի բարելավման, ինչպես նաև ՈՈՇ համապատասխանեցման նպատակով միջազգային բենչմարքինգի փաթեթների ուսումնասիրում:<br>38. Վարչական անձնակազմի միջազգային շարժունության ծրագրի իրականացում / 5 մասնակից/:<br>39. Եռալեզու կայքի առկայություն:<br>40.ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքի այցելությունների աճ՝ ինչպես ընդհանուր այցելուների, այնպես էլ դիտումների քանակով: | |

| ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ |
|---|---|
| 1. ՀՖԿՍՊԻ ռազմավարական պլանավորման և արդյունքների գնահատման մշտադիտարկման մեխանիզմների բարելավում:<br>2. ՀՖԿՍՊԻ Ռազմավարական ծրագրի (ՌԾ-ի) գնահատման ձևաչափի մշակում ըստ գործունեության արդյունավետության ցուցանիշների (ԳԱՑ-երի):<br>3. ՀՖԿՍՊԻ համապատասխան շենքային և լսարանային պայմանների, տեխնոլոգիական բազաների շարունակական բարելավում:<br>4. Արտաքին ֆինանսական մուտքերի ավելացում և բազմազանեցում լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների ավելացման միջոցով:<br>5. ՀՖԿՍՊԻ ֆինանսավորման համակարգի ապակենտրոնացում և ծրագրային բյուջեների կազմում և բաշխում ըստ ռազմավարական գերակա ուղղությունների ու ոլորտների:<br>6. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշներ՝ պայմանավորված կրթության ձևերի բազմազանեցմամբ և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությամբ:<br>7. ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման սանդղակում ՀՖԿՍՊԻ–ի ցուցանիշները բարձրացնելու նպատակով մասնագիտությունների գրավչության աստիճանի բարձրացում:<br>8. Երիտասարդ դասախոսների մենթորության և մասնագիտական կատարելագործման խրախուսմանն ուղղված մեխանիզմների մշակում և կիրառում:<br>9. Արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական վերլուծությունների պարբերական իրականացում, կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում: | 1. Կրթության գլոբալացում:<br>2. Պետական ֆինանսավորման ոչ բավարար մակարդակ:<br>3. ՀՀ բնակչության եկամուտների ցածր մակարդակ:<br>4. Արտաքին շահակիցների և, հատկապես, գործատուների ոչ բավարար շահագրգռվածություն և ներգրավում բուհական կրթական գործընթացներում:<br>5. Բարձրորակ գիտամանկավարժական կադրերի համար արտաքին մրցակցության ուժեղացում:<br>6. Բուհերի միջազգայնացմանը նպաստող պետական անբավարար աջակցություն, իրավական դաշտի անկատարություն:<br>7. Որակի ապահովման գործիքակազմին և մեթոդաբանությանը տիրապետող մասնագետների թվակազմի սակավություն: |

| | |
|---|---|
| 10.Համագործակցության ընդլայնում միջազգային գիտակրթական, մասնագիտական, ֆինանսավորող կառույցների, ընկերությունների և կազմակերպությունների հետ:<br>11.Բուհի միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետների ներգրավվածության կանոնակարգում:<br>11. Բուհում իրականացվող հետազոտություններ՝ նպատակային ֆինանսավորում ապահովելու համար:<br>12. ՀՖԿՍՊԻ համագործակցային ձևաչափերի կիրառման դաշտի ընդլայնում, ինստիտուտի և ավագ դպրոցների ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև պայմանագրերի կնքում՝ ուսանողների հավաքագրման նպատակով:<br>13.Օտարալեզու կրթական ծրագրերի ներդրման ոլորտում ստեղծված հնարավորությունների զարգացում:<br>14. Հասարակության հետ կապերի ամրապնդում և շահակիցների հետ համագործակցության զարգացում:<br>15. ՀՖԿՍՊԻ գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման աշխատանքների ընդլայնում, արդյունավետության բարձրացում (օրինակ՝ բարձրորակ տեղեկատվական նյութերի պատրաստում, դրանց տարածում դպրոցներում, միջին մասնագիտական հաստատություններում և բուհերում) և հետադարձ կապի ձևերի բազմազանեցում՝ սոցիալական ցանցերի, էլեկտրոնային ժամանակակից ռեսուրսների ավելի ինտենսիվ կիրառմամբ:<br>16. ՈՆԱ համակարգի ազդեցության պարբերական գնահատում: | |

## Վերհանված խնդիրների հաղթահարման ուղղված քայլեր

1. ՌԾ նպատակների իրագործման համար մշակել կարճաժամկետ և երկարաժամկետ բյուջետավորում, որը ուղղված կլինի զարգացման առաջնահերթ խնդիրների լուծմանը՝ կրթության իրականացման համար անհրաժեշտ որակյալ միջավայրի ձևավորմանը, հետազոտական աշխատանքների ֆինանսավորմանը, միջազգայնացման ընդլայնմանը:

2. Բարելավել ֆինանսական կառավարման համակարգը ըստ ՌԾ նպատակների:
3. Մշակել և ներդնել գնագոյացման քաղաքականություն:
4. Իրականացնել գործող կառուցվածքի արդյունավետության գնահատում:
5. Ամրապնդել ստորաբաժանումների միջև փոխներգործուն կապը:
6. Ընդլայնել միջազգային համագործակցությունը ֆակուլտետների մակարդակում:
7. Կատարել ՄԿԾ–ների շարունակական բարելավման համար անհրաժեշտ կարիքների վերլուծություն:
8. Ամրապնդել բուհ–աշխատաշուկա կապը, նպաստել շրջանավարտների մասնագիրական զբաղվածության ընդլայնմանը:
9. Մշակել և իրականացնել մասնագիտական զարգացման ծրագրեր ՊԴ և վարչական անձնակազմի համար:
10. Մշակել և ներդնել ուսանողների փափուկ հմտությունների և հետազոտական կարողությունների զարգացման մեխանիզմներ:
11. Ընդլայնել լրացուցիչ և շարունակական կրթության ուղղութունները, ապահովել ֆինանսական այլընտրանքային հոսքեր:
12. Ակտիվացնել միջազգային դրամաշնորհային ծրագրերի հայթհայթման աշխատանքները:
13. Ստեղծել թվային տվյալների ներմուծման միասնական հարթակ:

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 11
Հեռ. (+37410) 55-33-10, (+37410) 55-10-04
info@sportedu.am,www.sportedu.am
https://www.fasebook.com/sportedu.am
https://tinyurl.com/4e2xymez
https://tinyurl.com/5d845555